


Ա.ԶԳ.Ա.ՅԻՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ




ՅՈՎ.Է. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ
ԵՒ
ՀԷՔԻԱԹՆԵՐ

1948

ՏՊԱՐԱՆ «ՆՈՒՊԱՐ»

Գ Ա Հ Ի Ր Է



891,99

ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

Ե Ի

ՀԷՔԻԱԹՆԵՐ

A II
33512



1948

ՏՊԱՐԱՆ «ՆՈՒՊԱՐ»

Գ Ա Հ Ի Ր Է

3 1/4


REPUBLIC OF THE PHILIPPINES

REPUBLIC OF THE PHILIPPINES

REPUBLIC OF THE PHILIPPINES

19

REPUBLIC OF THE PHILIPPINES



REPUBLIC OF THE PHILIPPINES
LIBRARY

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Արսասահմանի մեջ առաջին անգամն է, որ լոյս կը թեսնեն Յովհաննէս Թումանեանի պատմութեան ու հեփիաթները ընտրովի եւ առանձին հատրով:

Այս հրատարակութեան համար աչի առջեւ ունեցանք Երեւան տպագրուած «Գեղարուեստական Երկեր» եւ «Երկեր» հատորները: Պարտք համարեցինք ո՛չ միայն անփոփոխ պահել հեղինակին լեզուն, այլեւ խուսափեցանք որեւէ ուղղում մտնելէ բնագրին մեջ:

Թումանեանը, ինչպէս Բաքմին, մեր ամենէն շատ կարդացուած հեղինակներէն է: Ժամանակն էր, որ արսասահմանի մեջ եւս լոյս ընծայուէին անոր արձակ երկերը՝ «ընդառաջելով մասսայական պահանջին», ինչպէս կ'ըսէ խմբագրողը «Գեղարուեստական Երկեր»ու յառաջաբանին մեջ:

Գահիրէ

ՀՐԱՏԱՐԱԿԻԶԸ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

Գ Ի Ք Ո Ր Ը

1

Գիւղացի Համբոյի տունը կռիւ էր ընկել,
Համբոն ուղուձ էր իր տասներկու տարեկան
Գիքորին տանի քաղաք՝ մի գործի տայ, որ մարդ
դառնայ, աշխատանք անի, կիներ չէր համաձայնում,
— Չեմ ուղում, իմ քորփա երեխին էն անիրաւ
աշխարհքը մի գցիլ, չեմ ուղում, — լալիս էր կիներ,
Բայց Համբոն չլսեց:

Մի խաղաղ առաւօտ էր, մի տխուր առաւօտ,
Տանեցիք ու հարեւանները եկան մինչեւ գիւղի ծէ-
րը, Գիքորի թշերը պաշեցին ու ճամբայ դրին:

Քոյրը, Զանին, լաց էր լինում, իսկ փոքրիկ
Գալոն մօր գրկից ձայն էր տալիս. — «Գիքո՛ւ, էդ
սըւլ ես գնում, հէ՛, Գիքո՛ւ»:

Գիքորը շուտ-շուտ ետ էր նայում: Տեսնում էր՝
գեռ գիւղի ծէրին կանգնած են նրանք, ու մայրը
գոգնոցով սրբում է աչքերը: Գարձեալ հօր կողքով
վազում կամ առաջն էր ընկնում: Մին էլ ետ նա-
յեց. գիւղը ծածկուել էր բլուրի ետեւ:

Այնուհետեւ Գիքորը ետ էր ընկնում:

— Արի հա՛, Գիքոր ջան, արի հա՛, հասանք հա՛, — որդուն կանչելով գնում էր Համբոն, շալակին մի խուրջին, մէջը մի քանի հաց ու պանիր և մի երկու դասդա թուփուն:

Իրիկնապահին, երբ անց էին կենում սարերը, մի անգամ էլ երեւաց գիւղը հեռո՛ւ մշուշում:

— Ա՛յ, ապի, մեր տունն էն ա հա՛, — ցոյց տուաւ Գիքորը՝ մատը մեկնելով գէղի գիւղը, թէև տունը իսկի չէր երեւում, ու անցան:

Առաջին իրիկունը զոնախ ընկան մի գիւղում, Տանտէրը Համբոյի հին ծանօթն էր:

Գեղին սամովարը թշուամ էր թախտի ծէրին: Մի ջահէլ աղջիկ շրջիկ-շրջիկացնելով բաժակները լուանում ու թէյ էր շինում: Նա մի կարմիր սիրուն շոր ունէր հագին: Գիքորն էնտեղ մտքումը դրեց, որ երբ քաղաքում փող աշխատի, իրենց Չանիի համար մի էնտեսակ շոր ուղարկի:

Իրիկնահացից յետոյ՝ տանտէրն ու Համբոն թիկնը տուած, չիբուխ քաշելով զրոյց էին անում, կօսեցին Գիքորի մասին: Տանտէրը գովեց Համբոյին, որ չարչարւում էր որդուն մարդ շինի: Յետոյ սկսեցին խօսել կռուի վրայ, հացի թանգութեան վրայ, բայց Գիքորը շատ էր յոգնած, քունը տարաւ:

Միւս օրը քաղաք մտան: Գնացին ծերունի թավլաչու մօտ: Առաւօտը բաղարն իջան:

— Բիձա, էդ երեխին ծառա՞յ ես տալու, — խանութի ներսից հարցրեց մի վաճառական:

— Հրամանք ես, — ասաւ Համբոն ու Գիքորին էն կողմը հրեց:

— Բեր ինձ տուր, ես կը բռնեմ, — առաջադիւեց վաճառականը:

Նրան ասում էին բազազ Արտեմ:

Համբոն քաղաքում Գիքորին ծառայ տուաւ բազազ Արտեմի տան: Պայմանն էն էր, որ Գիքորը պէտք է տունը մաքրէր, ամանները լուանար, սանամանները սրբէր, դուքանը բաժին տանէր ու էս տեսակ մանր ծառայութիւններ, մինչեւ մի տարի:

Մի տարուց յետոյ՝ բազազը նրան պէտք է տանէր դուքան, շինէր դուքանի «աշկերտ», ու էսպէս Գիքորը պէտք է բարձրանար:

— Շինդ տարի դեռ փող չեմ տալ, — ասաւ բազազը պայմանը կապելիս: — Թէ դրուստը կ'ուզես, դեռ դու պէտք է տաս, որ քու սրդին բան է սովորելու: Ախր իսկի բան չգիտի՞ . . .

— Ո՞րտեղից գիտենայ, խաղէի՞ն ջան, — պատասխանեց Համբոն: — որ գիտենար, էլ ո՞ւր կը բերէի. ես էլ բերել եմ, որ բան սովորի:

— Կը սովորի, ամէն բան կը սովորի: Էնպէ՞ս սովորի որ . . . Չեր կողմերից էն Նիկոլն ի՞նչ է, որ իրան համար դուքան ունի բաց արած. նա էլ ինձ մօտ է մարդ գտուել: Ամա վերջում մի ջուխտ չայի գգալ ու մի քանի բան գողացաւ:

— Չէ՛, խաղէին ջան, սա գողանալ չի: Որ էդպէս բան անի, կը գամ կանիցը կը բռնեմ, էն Բուռը կը պցեմ:

— Հա՛, որ ձեռը հալալ է՝ մարդ կը գառնայ:

— Իմ դարդն էլ էն ա, աղա՛ ջան, որ մարդ գառնայ, լեզու սովորի, գրել-կարդալ սովորի, նրաստիլ-վեր կենալ սովորի, մարդ ճանաչի, որ աշխարքումն ինձ նման խեղճ ու դուրկ չմնայ . . . Ինքն էլ աչքարաց երեխայ ա, մեր գեղական շքովումն էլ գրաճանանչ է էլել, գրի սեւն ու սիպտակը ջոկում

ա. Ամա աղաչանքս էն ա, որ լաւ մտիկ անէք, դարիպ երեխայ ա, քորփա ա...

Բաղազը Համբոյին միամտացրեց ու դուրս գընաց՝ բարձր ձէնով հրամայելով. — «Չայ բերէք, հաց բերէք սրանց համար»:

3

Հէր ու որդի նստած էին բաղազ Արտեմի խոհանոցում:

— Դէ՛, հիմի դու գիտես, Գիքո՛ր ջան. տեսնեմ ի՞նչ տեսակ տղայ ես դուրս գալի... Հենց էնպէս պէտք է անես, որ... ես ի՞նչ գիտեմ... ո՛վ Տէր Աստուծ... — մռնչաց Համբոն ու չիբուխը լցրեց: Այն ինչ Գիքորը շորս կողմն էր դիտում:

— Ապի, սրանք բուխարի չունեն՞ն:

— Չէ՛, սրանցը փեչն ա, ա՛յ էն ա փեչը...

— Կա՞լ էլ չունեն:

— Սրանք քաղաքացի են, գեղացի հօ չեն, որ կալ կասեն:

— Բա ո՞րտեղից են հաց ուտում:

— Փողով առնում են, ուտում: Հացն էլ են փողով առնում, եղն էլ, կաթն էլ, մածոնն էլ, փետրն էլ, ջուրն էլ...

— Վա՛հ...

— Բա՛, սրան թիֆլիզ կ'ասեն: Դու հալա դոչաղ կաց, դեռ շատ բան կ'իմանաս:

— Ապի, սրանք ժամ ունեն՞ն:

— Ունեն բա՛ս, սրանք էլ մեզ նման հայ քրիստոնեայ են: Մտիկ արա հա՛, ձեռնաքաշութիւն չանես: Կարելի ա քեզ փորձելու համար փող վեր կը դրեն, մօտենաս ոչ: Թէ վերցնես էլ, տար՝ ասա. —

«Սանո՛ւմ, էս ի՞նչ փող ա, էստեղ վեր ընկած էր. աղա՛, էս բանն էստեղ գտայ», թէ չէ...

— էստեղ էլ պրիստաւ կա՞յ որ...

— կայ բա՛ս... վախտ ու անվախտ դէս-դէն չընկնես, ձեռք ընկած փողը քոռ ու փուչ չանես, հազար ու մի պակասութիւն ունենա՛, Քեզ էլ լաւ պահի, գիշերները բաց չըլես, մրսես ոչ... Մի մին եկողի հետ գիր դարկի... — մերթ մերթ չիբուխը բերանից հանելով որդուն խրատում էր Համբոն, Այն ինչ Գիքորը ննջում էր:

— Հացի կտորտանք ու քարթուն կը տան, կերակուրի թերմացքը կը տան, շատ անգամ էլ իրենք կ'ուտեն՝ քեզ տալ չեն, բան չկայ, ծառայի կարգն է դա... Օրեր են, կը մթնեն անց կը կենան...

Ծարունակում էր հէրն իր խրատը, բայց Գիքորը հօրը թիկնը տուած քնել էր արդէն:

էն երկու օրը նա էնքան բան էր տեսել, էս ու էն կողմը նայել, որ յոգնել էր բոլորովին:

Մրգով լիքը խանութները, գէղերի նման դարսած գոյնզգոյն չթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող կամ դարձող երեխաների խմբերը, իրար ետեւից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կանանչի բարձած աւանակները, թաբախները գլխներին կինտոսները... էս ամէնի գոռոցն ու զնգոցը, աղմուկն ու աղաղակը իրար խառնուած դժվժում էին նրա գլխում: Եւ նա յոգնել էր ու հօրը թիկնը տուած քնել:

էս ժամանակ բազազն ու իր կիները վիճում էին ներսը, կիներ արանջում էր, որ ծառան խամ էր, նոր սարիցն եկած, վայրենի, իսկ մարդն ուրախ էր, որ մի քանի տարով անվարձ ծառայ էր գտել:

— կը տովորի, հօ էգպէս չի մնալ, — ասում էր նա կնոջը:

— Կը սովորի, որդի՛, սիրտդ շուռ մի բերի, —
խնդրում էր բազազի պառաւ մայրը :

Բայց տիկինն Նատոն չէր համողւում : Նա ար-
տասուելով անիծում էր իր բախտը :

4

Գիքորը մենակ նստած էր բազազ Արաւեմի խո-
հանոցում : Նա արդէն ծառայութեան մէջ էր :

Խաղէինի հին գլխարկը մինչեւ ականջները կո-
խած գլուխը, հին ստնամանները ստներին, մի մա-
ւի բլուզ էլ հագին, էսպէս ստից գլուխ փոխուած,
նա նստած էր խոհանոցում ու միաք էր անում,
թէ ընչի՛ եկաւ իրենց գիւղից, ս'րաւեղ է ընկել,
հիմի ի՛նչ պէտք է անի . . .

Էս ժամանակ ներս մտաւ տիկինն Նատոն :

Գիքորը տեղը նստած էր :

Տիկինը մի բան ասաւ : Գիքորը լաւ չլսե՞ց թէ
չհասկացաւ :

— Քեզ չե՞մ ասում, տո՛ արջի քոթոթ :

Գիքորը շփոթուեց, քրտնեց, մին ուղեց հար-
ցընէ, թէ ի՛նչ է ասում, մին էլ սիրտ չարաւ : Աղ-
ջիկ պարոնը բարկացած դուրս գնաց :

— Ը՛հ, հողեմ ձեր գլուխը, որ վայրենի էք ու
գալիս էք մարդի գլխի խաթա դառնում . . . Ես բան
եմ ասում, սա տեղիցն է ժամ չի գալի, ձէն էլ չի
հանում . . .

— Վերջացաւ, — անցաւ Գիքորի մտքով : Բայց
ի՛նչ շուտ վերջացաւ, ի՛նչ վատ վերջացաւ . . . Հի-
մի ես ի՞նչ անեմ. հէրս էլ գնաց . . .

Եւ ամէն բան նա վերջացած էր համարում, երբ
իրեն-իրեն խօսելով ներս մտաւ սեւ շորերով բարի
պառաւը, բազազի մէրը :

— Որ աղջիկ պարոնը ներս է գալի, տեղիցդ ընչի՞ չես կանգնում, որդի՛, — խրատում էր նա Գիքորին. — որ բան են հարցնում, ձէն հանի. ո՞նց կ'ըլլի էդպէս...

Պառաւին «դէդի» էին ասում:

Գէդին սովորեցնում էր Գիքորին, թէ ի՛նչ պէտք է անի, ի՛նչպէս սամովարը դցի, սանամանները սրբի, չոսկը բռնի, ամանները լուանայ:

Բացի պառաւ դէդին՝ ամէնքը նեղացնում էին նրան:

Բաղադի «դուքանի աշկերտներն» էլ շարունակ ծաղրում էին նրան, «քիքի» էին կանչում, քիթը քաշում, գլխին խփում, գլխարկը կոխում ականջները:

Բայց էս բոլորը տանելի բաներ էին:

Անտանելին էն էր, որ նա չէր կարողանում քաղցին դիմանալ. Իրենց տանը, երբ սովում էր, գնում էր տաշտիցը հաց էր առնում, կճուճիցը պանիր էր հանում, ուտելով գնում խաղալու, կամ թէ չէ՝ փէչն էր գնում, գնում հանգը: Երբ ուզում էր՝ մի ծառի տակ կամ աղբրի վրայ նստում էր, ուտում:

Հիմի էստեղ ուրիշ տեսակ էր. Ինչքան էլ սոված լինէր, պէտք է սպասէր՝ մինչեւ ճաշի ժամանակը գար, էն էլ ամէնքն ուտէին, յետոյ ինքը: Էդ անիծած ժամանակն էլ էնքան ուշ էր գալի, որ խեղճի սիրտը քամ էր ընկնում, թրթռում:

Սին, երկու, տասը համբերելուց յետոյ՝ նա սկսեց չորս կողմն աչք ածել խոհանոցում, թէ արդեօք մի բան չի՞ գտնիլ ուտելու, որ սիրտը կանգնեցնի, մինչեւ ճաշի ժամանակը գայ:

Սկզբում ինչ գտնում էր, չոր հացի փշրանք, կրծած սսկոր թէ ուրիշ բան, գցում էր բերանը:

Մի քիչ յետոյ մտածեց խոհանոցի պահարանները որոնել: Ապա սովորեց կերակուրի պղնձից կլիսեփ մսի կտոր դուրս քաշել:

Բայց եթէ նկատէի՞ն... .

Ի՞նչ վատ բան դուրս կը գար:

Եթէ նկատէի՞ն... .

Հապա ի՞նչ անես... .

Թողնե՞ս, փախչե՞ս... .

Եւ Գիքորն սկսեց մտածել փախչելու մասին: Բայց ո՞նց փախչես, ո՞ր կողմը փախչես. մե-
նակ, ճամբայ չգիտես, մարդ չես ճանաչում... . իսկ
հէրը... .

Էնքան չարչարուեց, խօսեց, խրատեց. «Օրեր
են, որդի, կը մթնեն, անց կը կենան... .»:

Եւ անա Գիքորի գլխում հնչում է հօր խան-
ձուած ձէնը. — «Օրեր են, կը մթնեն, անց կը կե-
նան... . անց կը կենան... .»:

5

Չանգը տուին:

Գիքորը վեր թաաւ: Ասել էին, թէ երբ Չանգը
տալիս են, գնայ տեսնի՝ ո՞վ է, ի՞նչ է ուղում: Նա
դուրս եկաւ, սլատշգամբից նայեց, տեսաւ՝ մի պա-
րոն ու մի քանի տիկին դրան առաջը կանգնած:

— Էդ ո՞վ էք, հէ՛յ, — ձայն տուաւ վերելից:

Ներքելից վերել նայեցին:

Տիկիները ծիծաղեցին, իսկ պարոնը ակնոցներն
ուղղելով հարցրեց.

— Աղջիկ պարոնը սա՞նն է:

— Ի՞նչ էք անում, — հարցրեց Գիքորը:

Ներքել ծիծաղն աւելի սաստկացաւ:

— Բեզ հարցնում են՝ տա՞նն է, թէ չէ, — բարկացաւ պարոնը:

— Բա՞ն ունէք:

— Էս աղճուկի վրայ տիկինը դուրս եկաւ:

— Բրքը ունե՞ս դու, գնա դուռը բաց արա, շո՛ւտ, — ճչաց ու սկսեց անիծել Գիքորին և իր ամուսնուն: Բայց շուտով հիւրերն երեւացին և նա ժրպտալով դիմաւորեց:

— Ա՛, բարեւ, բարեւ... Էս ո՞ր խաչիցն էր, ի՞նչպէս է որ մտաբերեցիք...

— Էս ո՞ր տեղից էք գտել, — ոտից գլուխը Գիքորին չափելով հարցրեց պարոնը, իսկ տիկինները շարունակ ծիծաղում էին:

— Ի՞նչ էք նախանձում, կ'ուզէք՝ ձեզ տանք, — կատակի տուաւ տիկինն ու հիւրերը խնդալով ներս մտան:

Գիքորին շտապով մի տեղ ուղարկեց ու նրանց ետեւից իսկոյն ներս մտաւ և տիկին նատոն:

Իրար առողջութիւն հարցնելուց յետոյ՝ հիւրերն սկսեցին պատմել իրենց ներս մտնելու պատմութիւնը, և դուրս եկաւ մի ահագին պատմութիւն:

— Օ՛ֆ, սիրտս մաշել է, — դանդատում էր տիկին նատոն. — թէ իմանաք՝ ի՞նչ եմ քաշում ես դրա ձեռիցը: Ասում եմ՝ դուրս անենք կորչի, բայց դէ՛, Արտեմի բնաւորութիւնը գիտէք էլի. ասում է՝ մեղք է, գեղացի երեխայ է, թող կենայ, մի կտոր հաց է, ուտի, կը սովորի... Ախր էլ ե՞րբ... սիրտս մաշեց...

— Օ՛հ, օ՛հ, օ՛հ, էդ ծառաների բանն էլ մի աւի, — էս ու էն կողմից սկսեցին բողոքել տիկին հիւրերը:

Մի կէս ժամ խօսեցին դէսից-դէնից, ծառանե-

րից, քաղաքի նորութիւններից: Հենց էդ խօսակցութեան ժամանակ ներս մտաւ քրտնած Գիքորը:

— Աղջիկ պարոն, միրգը բերի:

— Հա՛, լաւ, գնա՛, — հրամայեց տիկինը կարմրեւում, իսկ հիւրերն սկսեցին ծիծաղել:

— Աղջիկ պարոն, խաղէինն ասում էր՝ բալը թանգ ա, հարկաւոր չի...

Էս խօսքերի վրայ հիւրերից ոմանք պոսթկացին ու թաշկինակով բերաններին հուպ տուին, ոմանք էլ տանտիկնոջ խայտառակութիւնը ծածկելու համար վկայեցին, թէ իրաւ բալը շատ թանգ է, էս ժամանակին ո՛վ է բալ առնում: Ապա սկսեցին յանդիմանել, թէ ի՞նչ հարկաւոր է միրգը, հօ ուտելու համար չեն եկել. ի՞նչ են նեղութիւն քաշում...

Տանտիկինը, մինչեւ ականջակոթերը կարմրած, աշխատում էր մի կերպ եղածն ուղղի:

— Ով գիտի ի՞նչ է ասել, չի հասկացել էս յիմարը:

— Ով սուտ ասի՝ գետինը մտնի, — երդուեց Գիքորը, ու ամէն բան լրացաւ:

6

Հիւրերին ճամբու գնելուց յետոյ՝ տիկին նատոն բարկացած, բարձր-բարձր խօսելով վեր էր քաշում մրդի սեղանը: Նա հայհոյում էր Գիքորին. մէկ-մէկ թւում էր, թէ ինչեր է անում նա, անիծում էր իր բախար, իր ամուսնուն:

— Քա՛, խամ է, որդի՛. կը սովորի, որդի՛. ինչի՞ ես սիրադ շուռ բերում... Ա՛խ Աստոծ, ինչի՞ չես հոգիս առնում, — հառաչում էր պառաւ դէգին:

— Երանի մի խմանամ՝ մարդու սրտի էս նեղացած ժամանակը դու ի՛նչ ես խօսում : . . . Ուստի է, դէ գնացէք դուք շինեցէք, ես հօ. ձեր գերինն չեմ, — ձէնն աւելի բարձրացնելով պատասխանեց պառաւինն հարսը ու շարունակեց իր արտունջն ու անէծքը մինչեւ ամուսինը տուն դար :

— Ամուսնու աստիճանը որ լսեց, սկսեց արտասուել, աւելի բարձր խօսել ու ամաններն իրար գլխով տալ :

— Ասում եմ՝ դուրս արա կորչի. ես ծառայի բանն էլ կ'անեմ, թէ խնայում ես՝ փող տաս, կարգին ծառայ բռնես : Լաւ է մարդ ծառայի տեղ էլ քաշ գայ, քան թէ ամէն օր էսե՛նց սիրտը շուռ բերի . . . Իմ թշնամինն հօ չե՞ս . . .

— Ի՞նչ է պատահել, — հարցրեց բաղազը՝ տան մէջտեղը կանգնելով :

— Ի՞նչ պէտք է պատահի. էս էր մնացել, որ խալխի մօտ մարդ գետինը մտնի, էս էլ արիւր. էլ ի՞նչ պատահի, — վրայ բերաւ տիկինը ու պատմեց բալի պատմութիւնը :

— Վա՛հ, — բացադանչեց բաղազը :

— Ա՛յ խ Աստուծ, — հառաչում էր բարի պառաւը դէս ու դէն ընկնելով :

Բաղազը Գիքորինն ձէն տուեց :

Թմփթմփացնելով Գիքորը ներս ընկաւ :

— Մօտիկ արի, — կանչեց բաղազը :

Գիքորը վախեց նրա գոյնից, մնաց տեղը կանգնած :

— Բեղ ասում եմ՝ մօտիկ արի :

Գիքորն էս անգամ շարժուեց, բայց դարձեալ մնաց տեղը կանգնած :

— Տօ՛, արջի՛ քոթոթ, ես քեղ ասում եմ՝ աղ-

ջիկ պարոնին ասա, դու գալիս ես զոնախոներին
ասում, թէ բալը թանգ էր...

— Ես... ես... աղջիկ պարոնին... — ուզում
էր արդարանալ Գիքորը, բայց խօսքը բերանում
ապտակը հասաւ, աչքերը կայծակին տուին, գլուխը
գիպաւ կողքի պատովն ու վեր ընկաւ: Հենց ընկած
տեղն սկսեց բաղաղը ոտքել՝ անդադար կրկնելով —
«բալը թանգ էր, հը՞» — աչքերը միշտ չռած՝ անկիւ-
նում կծկուած Գիքորի վրայ, որ դողալով ու ցա-
ւազին մրմնջում էր:

— Վա՛յ, նանի ջան, վա՛յ, նանի ջան, վա՛յ...

7

Տեսան՝ տանը չի կարողանում ծառայի, խա-
նութ տարան Գիքորին: Էնտեղ ապրանք պէտք է
տային մուշտարիներին հետ տանելու, չիթ պէտք է
ծալէր, խանութը սրբէր, իսկ պարապ ժամանակը
մուշտարի կանչէր:

Եւ ահա Գիքորը հաց է տանում խանութը: Կե-
րակրամանը ձեռքին, մաշուած ու տժգոյն, մեծ մեծ
ոտնամանները քաշ տալով անց է կենում կամուր-
ջով: Նայեց ներքեւ: Քարվանսարաների բարձր պա-
տերին զարկելով ծառս էր լինում Բուսը, ոլոր-
ւում, պտըտում ու ճնշուելով խեղդում, խուլ
թշշում կամուրջի տակին:

Ափից մօտիկ պտըտում էր մի կանաչ նաւակ,
Երկու հոգի կային նրա մէջ, մինը ուռկան էր ձը-
գում, միւսը նաւն էր կառավարում:

«Ս՛յ հիմի կը հանի», ասաւ Գիքորն ու կանգ-
նած նայում էր ձկնորսներին: Ուռկանը դատարկ
դուրս եկաւ:

— Էս մինն իմ բախտիցը, — ասաւ Գիքորն
ուռկանը ձգելիս: Գիքորի բախտը դատարկ դուրս
եկաւ:

— Էս մինն էլ մեր Ջաննի բախտիցը:

Էս էլ դատարկ դուրս եկաւ:

— Էս մինն էլ Գալոյի բախտիցը: Գալոն էլ էր
անբախտ:

— Էս մինն էլ բաս...

Բայց էդ ժամանակ մօտիկ քարվանսարի դրանը
աղմուկ բարձրացաւ: Մի պարսիկ կապիկ էր պար
ածոււմ երգելով:

Ա՛յ արի, արի, մեյմուճ,
ձիպոսրդ սարի, մեյմուճ,
Պառաւի պէս կուզի կուզ,
Ջահեկի պէս պարի, մեյմուճ:

Ժողովուրդը հաւաքուել էր գլխին, ու վազոււմ
էին չորս կողմից: Գիքորն էլ վազեց: Աշխատեց
կանգնած ժողովրդի արանքը մտնի, առաջ անցնի.
Հկարողացաւ: Վիզը ձգեց, պճեղների վրայ կանգնեց
ու ձգնոււմ էր անպատճառ տեսնի, թէ ի՛նչ է կա-
տարուււմ մէջտեղը:

— Ի՞նչ ես ներս խծկուււմ, սո լածիրակ, գնա
քու բանին, — ասաւ մի կինսո ու զարկեց գլխին:

Գիքորը յանկարծ սթափուեց ու վազեց դէպի
խանութը:

Տ

Իրիկունը Գիքորը կուչ էր եկել խոհանոցոււմ,
Գեռ արտասուքը չէր ցամաքել նրա երեսին, դեռ
այրուււմ էին խաղէինի ապտակների տեղերը, դեռ

«ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ»

A II
33512



նոր էր լուել աղջիկ, պարոնի ձէնը, վշվշացնելով ներս մտաւ Վասոն, բազաղի աշկերտը, Գիքորին նկատելով՝ նա խկոյն կանգ առաւ ու մասխարա գէմքին լրջութիւն տալով սպառնալի հարցրեց.

— Կլուբո՞ւմն ուշացար, աօ արջի քոթոթ, թէ՞ գուբերնատի քով վազ գործ ունէիր...

Գիքորը գլուխը չէր բարձրացնում.

— Ասիր մի տեսնեմ է՛, տօ՛...

Գիքորը լուռ էր:

— Չե՞ս իմանում, տօ՛. ո՞րտեղ էիր է՛, որ էսօր ինձ քաղցած սպանեցիր. որ մեռնէի՝ յետո՞յ...

Էսպէս խօսելով կամաց կամաց մօտեցաւ, մի քիչ կանգնեց ու յանկարծ զարկեց Գիքորի գլխին: Գիքորը երկու ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմուեց պատին: Վասոն պատրաստուում էր մի ուրիշ ձեւի հարուած էլ հասցնելու, բայց գուբսը բարձրացաւ խաղէինի ձայնը: Գալիս էր:

— Ապա տես հիմի քեզ ի՞նչ է անում, — սպառնաց Վասոն:

«Հիմի ինձ կը սպանեն», անցաւ Գիքորի մըտքովը, ու խեղճի հոգին տապ արաւ:

Խաղէինը արդէն բաւականին ծեծել էր խանութում, այժմ միայն հրամայեց հաց չտան, որ իմանայ թէ ի՞նչ է քաղցածութիւնը:

Վտանդն անցաւ:

Գիքորը հանգստացաւ, թէեւ լսում էր աղջիկ պարոնի ձայնը, որ ճչում էր. — Ախր ընչի՞ ես պահում, գուբս արա կորչի էլի, գուբս արա կորչի...

Գիքորը կծկուեց վերմակի մէջ, գլուխը կոխեց սակը, տապ արաւ:

«Լուսնեակ գիօեր, բոլորովին փուն չունեմ,
Ինձ ցեսնողը կարծում է թէ թուն չունեմ,
Վա՛յ, թուն չունե՛մ...»

Իր երգը երգելով՝ Վաստն հաց էր ուտում: Գի-
քորը վերմակի տակից երբեմն զգոյշ ծիկրակում,
թաքուն նայում էր նրան, կրկին աչքերը ծածկում:
Նա էն օրը հաց չէր դրել բերանը. ծեծուել ու լաց
էր եղել, այժմ էլ քաղցած պասկեց, ու քունը չէր
տանում:

— Հը՞, ո՞նց ա, սոված քունդ չի տանում հա՞,
էդպէ՛ս... — նկատեց չարածճի Վաստն ու մի կտոր
հաց ու պանիր տուաւ Գիքորին: — Իէ՛, առ, տեղի
տակին թաքուն կեր, խաղէինը չիմանայ:

Գիքորը յափշտակեց հաց ու պանիրը, գլուխը
կոխեց տեղի տակը, թաքուն ուտում էր ու մտա-
ծում: Մտածում էր իրենց տան վրայ, էն օրերի
վրայ, երբ աղաս խաղում էր հանդերում ու լիա-
սիրտ հաց ուտում. մտածում էր էն երեկոների
վրայ, երբ հէրն ու մէրը կուռում էին իրեն քաղաք
բերելու համար. մէրը լաց էր լինում, չէր ուզում...

— Ա՛խ, նանի ջան, ի՞նչ լաւ էր սիրտդ իմա-
ցել, — հառաչում էր Գիքորը տեղի տակին ու հաց
ու պանիրն ուտում՝ աղանջը սրած, թէ խաղէինը հօ
չի՞ գալի:

Իսկ առաւօտը կանգնած էր խանութի դրանը:

Սանութի դրանը կանգնած ձէն էր տալի Գի-
քորը, մուշտարի էր կանչում ու բարձր ձէնով գո-
վում իրենց ապրանքը:

— կանչի է՛, տօ՛, ի՞նչ ես մնջուել, մնացել
կանգնած: Բերանումդ հօ ջուր չկայ:

— էստի՛ համեցէք... էստի՛ համեցէք... — կան-
չում էր Գիքորը:

Ներսը ծիծաղից թուլանում էին:

Նրան սովորեցրել էին, որ նա մուշտարի քաշի
դէպի իրենց խանութը: Եւ նա յաճախ բռնում էր
էս կամ էն անցորդի փէշից, կուպիտ ու յամառ սկը-
սում էր քաշել դէպի խանութը ու բաց չէր թող-
նում, մինչեւ որ մարդը դուրս էր դալիս համբ-
րութիւնից: Գալիս էր դարձեալ իր տեղը կանգնում
ու կանչում:

Ամառուայ տօթ օրերին, խանութի դրան եր-
կար կանգնելուց յոգնած, նա երբեմն նստած քնում
էր խանութի առաջին դարսած շթերի վրայ:

Էդ ժամանակ չարածճի ընկերները կամ հարե-
ւանները բռնոթի էին բռնում նրա քիթի տակը:

Նա փռչտալով վեր էր թռչում:

Շոգից թմրած վաճառականները դուարձանում
էին: Իսկ խաղէինը կուշտ ծիծաղելուց յետոյ ձայն
էր տալի:

— Քնո՞ւմ ես, տօ՛ արջի քոթոթ, կանչի է՛...

— էստի՛ համեցէք, էստի՛ համեցէք, — ձէն էր
տալի Գիքորը:

Մի օր էլ Գիքորը երբ մուշտարի էր կանչում,
դիմացից երկու գիւղացի դուրս եկան: Նա վազեց,
փաթաթուեց գիւղացիներին:

— Ա՛յ տղայ, իսկի ճանաչեցի ոչ, էս ի՛նչ բան
էր. — դարմացած բացագանչեց գիւղացիներից մինը
ու դարձաւ ընկերին:

- Բաղօ՛, դու կը ճանանչէի՞ր...
- Ես աչքերիցը կը ճանանչէի, — պարծեցաւ ընկերը:
- Ճշմարիտ որ Գիքսըը շատ էր փոխուել, շատ էր մաշուել, Ինքն էլ էր փոխուել, շորերն էլ դժար էր ճանաչելը:
- Ա՛յ տղայ, էս կարգին մարդ ա դառել... հալա սրա շորերին, սրա շնորհքին... — հիանում էին գիւղացիները:
- Համբոյի հողը մեր գլխին. տես, նա իր տղին ս՛րտեղ հասցրեց. մեր տղէքը էնտեղ խող են արածացնում...
- Այն ինչ Գիքսըը իրար ետեւից հարցնում էր.
- Իմ մէրը ո՞նց ա... մեր երեխէքը ո՞նց են... իմ հէրն ընչի՞ չեկաւ... մեր կովը ծնե՞լ ա թէ չէ... մեր գեղումն ո՞վ ա մեռել...
- Ամէնն էլ լաւ են, — շատ բարով կ'անեն, — պատասխանեցին գիւղացիք: — Էն ա, Սուքնանց Ղուկասը մեռաւ, մին էլ Պուճուրանց պառաւը, մնացածը լաւ են:
- Բա իմ հէրն ընչի՞ չի գալի:
- Քու հէրը լաւ ուղում ա, ամա ո՞նց գայ: Ինքը մենակ մի մարդ ա, սաղ տան Չափէն վրէն...
- Բա բան չեն դարկե՞լ...
- Ի՞նչ ունեն, որ ինչ դարկեն, դու ձեր տան բանը գիտես ո՞չ, էս տարի էլ հացը բարակ էր, խեղճ հէրդ զոռով ծէրը ծէրին ա հասցրել: Նրանցից ի՞նչ ես ուզում: Թէ ունիս, դու դարկի. հրէն խարջ են ուղում, ձեռին գրոշ չունի:
- Հօ մեր տանիցն ոքմի չի՞ հիւանդացել:
- Չէ՛, էն ա, ձեր Ծաղիկ կովը Միրզանց գոմի փլեկովը ներքեւ ընկաւ, սատկեց:

— Ծաղիկը ստակե՞ց . . .

— Խեղճ մէրդ էրքան լացեղաւ, աչքերն ուռան,
Էս ասելով՝ գիւղացիներից մինը մի նամակ հար-
նեց տուաւ Գիքորին ու ասաւ . . .

— Հիմի ի՞նչ են ասում. մենք է՛լ քեզ տեսնիլ
չենք, գնալու ենք. թէ մօրդ կամ քվորդ համար
բան են դարկելու, տուր տանենք . . .

— Ո՛րտեղից բան դարկեմ, դեռ փող չեմ ստա-
նում . . . ամա . . .

— Ամա ի՞նչ . . .

— Ուզում եմ ես էլ գամ ձեզ հետ. Հա՛մ մեր
գեղին, հա՛մ մերոնց կարօտել իմ, հա՛մ էլ . . .

— Վա՛յ, վա՛յ, մենք հենց իմացանք մարդ ես
գառել, խելօքացել ես . . . էդ տեսակ բան կ'ասե՞ն,
Էստեղ քեզ համար աղալարի ապրում ես. — շո-
րերդ թաղա, ոտն ու ձեռք խտակ . . . Մենք ասում
ենք՝ մեր երեխանցն էլ տեղ անես բերենք, դու էդ
ի՞նչ ես ասում. էն որ ասել են «խողի գլուխը դրին
խալիչին, գլորուեց՝ յետոյ ցեխն ընկաւ», հալալ քեզ
համար են ասել . . .

Էսպէս յանդիմանեցին գիւղացիները, խրատեցին,
մնաս բարով ասին ու գնացին . . .

Նրանց գնալուց յետոյ Գիքորն իր անկիւնը քաշ-
ուեց ու բաց արաւ հօր նամակը . . .

«Ըմ սիրելի որդի Գիքոր, Հան . . .

Ի քաղաքն Թիֆլիզ . . .

«Մենք ողջ և առողջ ենք, միայն քու առող-
ջութիւնն ենք աւզում, ամէն Բեզ շատ կարօտով
բարեւ են անում Ապին, Նանը, Զանին, Մօսին,
Միկիչը, Գալոն, ամէն. Մեր սիրելի որդի Գիքոր,
ահա իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա և
խարջը սաստիկ ուզում են և փող չենք ճարում . . .

և Նանն ու Չանին տկլոր են և տեղներս շատ նեղ
ա։ Գիքոր Չան, մի քանի մանէթ փող դարկի և մի
գիր դարկի քու որպիսութիւնիցը։ Եւ իմացած ըլեա,
որ Մաղիկը սատկեց, և Նանն ու Չանին տկլոր են»։

Նամակը կարդաց ու տեղը կանգնած միտք էր
անում Գիքորը։ Պարզ էր անում իրենց տան հա-
մար։ Սիրտը էրում էին նամակի տողերը։

— Նանն ու Չանին տկլոր են... Տեղներս նեղ ա։

— Կանչի է՞, տօ՛ ի՞նչ ես վերացել, ու շքդ հետ-
նե՞րը գնաց... — ձէն տուին ներսից։

— Էստի՛ համեցէք, էստի՛ համեցէք, — կանչում
էր Գիքորը խանութի դրանը կանգնած։

12

Չմեռը եկաւ։ Սառն աղմուկով ձիւնախառն
բուքը թռչում է քաղաքի վրով։ Փողոցներում սու-
րում, սուլում, հոսան է անում։ Վզզալով մտնում
է անկիւնները, աղքատի ու տկլորի է ման գալի,
պանդուխտ մ. անտէր երեխայ է որոնում։

Ահա գտաւ Գիքորին։

Մի բարակ բլուզ հագին, խանութի դրանը
կանգնած ձէն էր տալի նա։

— Էստի՛ համեցէք, էստի՛ համեցէք...

— Հրէ՛ սսս... — չարախինդ սուլելով ցուրտը,
աներեւոյթ թրի նման, զարկեց անցաւ ոսկորները
Գիքորը դողաց։

Առանց էն էլ նա շատ էր մաշուած. էդքանն էլ
հերիք էր նրան։ Ու անկողին ընկաւ։

Հիւանդ պառկած էր Գիքորը քաղաղ Արտեմի խոհանոցում: Պառաւ դէզին օրը մի քանի անգամ ներս էր մտնում իրեն իրեն խօսելով:

— Ի՞նչ կ'ուզես, որդի', Գիքոր':

— Ձո՛ւր...

Դէզին ջուր էր տալի: Հիւանդը դողդոջուն ձեռներով բռնում, ազան խմում էր ու կրկին ուզում:

— Էս սիրտ հովացնում չի, դէզի'... Էս մեր աղբրի սառը ջրիցն էմ ուզում, դէզի'... Էս մեր տունն էմ դնում... Էս իմ նանին էմ ուզում...

Բազաղ Արտեմը ցաւի մէջ էր ընկել, նա դէս-դէն ընկաւ, նրանց կողմերից մարդ գտաւ, ապապրեց որ Համբոն գայ, իսկ Գիքորին տարաւ քաղաքային հիւանդանոցը:

Էստեղ շատ հիւանդներ կային շարքերով պառկած: Տխուր անքում էին ու ոճորքին նայում անզօր հայեացքներով:

Գիքորն էլ պառկեցրին նրանց շարքում:

Էստեղ գտաւ նրան հայրը:

— Էդ ի՞նչ ես էղել, Գիքոր ջան, — մղկտալով վրայ ընկաւ Համբոն:

Գիքորը տաքութեան մէջ չիմացաւ հօր գալը:

— Գիքոր ջան, բա եկել էմ է', Գիքոր ջան... Էս քու ապին էմ է'...

Հիւանդը ոչինչ չհասկացաւ: Նա զառանցում էր ու զառանցանքների մէջ կանչում էր. «Միկի'չ, Ջանի', ապի', նանի'...»:

— Էստեղ էմ, Գիքոր ջան, նանը դարկել ա, որ քեզ տանեմ մեր տունը, գալիս չե՞ս... Միկի'չն ու Ջանին հրէն կտուրը կանդնած քեզ ճամբայ են պա-

հուժմ : Ի՞նչ ես ասում . դէ՛ , խօսա է՛ , Գիքո՛ր ջան . . .
— Էստի՛ համեցէք , էստի՛ համեցէք , — բացա-
գանչեց հիւանդը , զանազան անկապ , կցկտուր խօս-
քեր ասաւ ու ծիծաղում էր տաքութեան մէջ :

14

Մի երկու օրից յետոյ Համբոն գնում էր իրենց
գիւղը :

Նա թաղել էր Գիքորին ու գնում էր : Կռան
տակին տանում էր շորերը , սր մէրը լաց լինի վրէն :
Շորերի գրպաններում մի բուռը փայլուն կոճակ-
ներ , նաշխուն թղթեր , չթի կտորներ ու մի քանի
քորոց գտան : Էն էլ երեւի քրոջ՝ Չաննի համար էր
հաւաքել ու պահել . . .

Գնում էր Համբոն ու մտածում : Շատ ժամանակ
չէր անցել , որ էդ միեւնոյն ճամբով քաղաք եկաւ
իր Գիքորի հետ : Ահա այստեղ էր , որ նա ասաւ .

— Ապի՛ , ստներս ցաւում են :
Եւ ահա էն ծառը , որի տակ նստեցին հանգստա-
նալու . . .

Ահա էստեղ էր , որ ասաւ .

— Ապի՛ , ծարաւ եմ . . .

Ահա էն աղբիւրն էլ , որից ջուր խմեցին :

Ամէնը , ամէնը կան , մենակ նա չկայ . . .

Միւս օրը , երբ Համբոն անցնում էր լեռները ,
հեռւում երեւաց իրենց գիւղը :

Գիւղից դուրս կանգնած սպասում էին Նանը ,
Չանին , Միկիչը , Մօսին , իսկ փոքրիկ Գալոն մօր
գրկից կանչում էր .

— Ալի՛ , ալի՛ , հէ՛ Գիքու՛ . . .

ԵՂՋԵՐՈՒՆ

Մի Սեպտեմբերի մեր գիւղացի սրսկան Օսեֆը
ինձ գիշերակաց որսի տարաւ Սղնուտի կիրճը: Գի-
շերներն էդ կիրճով եղջերուներն իջնում են ձորերն
ու հովիտները, արածում են, արշալոյսից առաջ
ջուր են խմում ու ետ՝ իրենց «պնդոցն» են տալի:

Գնում էինք գիշերը մնանք բուսդանչի Օվակիմի
դափումը, որ լուսադէմին հասնենք որսատեղը պա-
հելու:

Ես էի, սրսկան Օսեֆն էր ու մեր գիւղացի մի
տղայ: որ Օսեֆի շալտկտարն էր:

Մենք գնում էինք էն դաժան հրճուանքով, որով
միայն որսի են գնում: Ծամբին որսից էինք խօսում:

— Որսը բախտի բան է, ասում էր Օսեֆը:—
Մին էլ տեսար՝ երեւոյթք ելաւ ու քամի դառաւ:
կորաւ: Անսովոր մարդը նրան հեշտ չի նկատիլ: կը
չփոթուի, կը գողգոզայ, կը փախցնի: Աչքդ առնե-
լուն պէս պէտք է թվանքդ բացուե. թէ չէ՝ որ ուղե-
ցիր նշան դնես, մինչեւ աչքդ հպես, նա սարն անց-
կացաւ:

— Հասցա դուք ի՞նչպէս էք որսի ման գալի,
ասդա՛ Օսեֆ:

— Լաւ որսկանը ման չի գալ, նա որսը կը պա-
հի, — պատմում էր որսկանը: — Գիտի՛ ո՞ր ժամա-
նակին, ի՞նչ տեղ որսը ժաժ կը գայ, կը գնայ էն

տեղը կը պահի: Թէ ման էլ գայ, քիչ, էն էլ էնպէս
ման կը գայ, որ որսն իր քամին (հոտը) չառնի, թէ
չէ որսն էնպէս սուր հոտառութիւն ունի, որ թէ
քամին նրա վրայ ելաւ, պրծար, որտեղ որ է, հոտը
առաւ կորաւ:

Էնպէս խօսելով իր թիկունը հասանք բոսդանչի
Օվակիմ ի դափին: Ծերունի բոսդանչին փէտ էր հա-
ւաքել, կրակը վառել ու կողքին թիկնը տուել:

— Բարի թիկուն, Օվակիմ բիձա:

— Այ Աստու՛ք բարին ձեզ, դուք բարով եկաք.
ա՛յ տղայ, էդ ի՛նչ լաւ դոնախներ էք: Ես հենց մե-
նակ միտք էի անում, թէ մի զրիցընկեր ըլի...
էս հենց Աստու՛ծ հասցրեց ձեզ, — ուրախացած գոռ-
գոռում էր Օվակիմ բիձէն:

— Ի՛նչ էն ասա, որս ա ժած գալի՞՞ թէ չէ,
Օվակիմ բիձա, — անհամբեր հարց տուաւ որսկանը:

— Ա՛յ տղայ, մի անտէր պախրի բուղա կայ,
Օսե՛փ ջան, գիշերները գալիս ա, լոքին ուտում ու
գնում: Էնքան լոքիս փուչ արաւ... Թվանք չունեմ,
չուն չունեմ... Պախրա մի ասիլ, մի յար տաս:
Չարդախ ունի, ոնց որ մի կաղնի:

— Էդ մի՛նը ոչինչ, բա իսկի բուղազոռոցի ձէն
չի գալի՞:

— Ա՛յ տղայ, էլ ասում ես, ի՛նչ անես, քնահարամ
են արել: Երէկ գիշեր էս վերի մատներումը էնենց
գոռում էին, որ գետինը որոտում էր:

— Հա՛յ հող ու ջրի Աստու՛ոյ հա՛, — աղաղակեց
որսկանը:

Օվակիմ բիձէն մեզ հրաւիրեց, տակներս խոտ
ածաւ, ինքն էլ կրկին թիկնը տուաւ իր տեղը:

— Տղե՛րք, ես որ խորը միտք եմ անում, տես-
նում եմ, որ աշխարքի երեսին մարդիցն էլ վերը
անիրաւ շնչաւոր չկայ:

— Ինչի՞, Օվակիմ բիձա:
— Ինչին էլ որի՞ն էս ասում. տեսնում ես՝
դուք թվանքներդ առել էք ետեւներիցն ընկել, մենք
էլ ուրախացել ենք, թէ ի՛նչ ա, մի պախրա կը
սպանենք կ'ուտենք: Ախր չէ՞ որ նա էլ մեզ նման
չունչ կենդանի ա, իրէն կէս գիշերին էրուելով գո-
ւում ա, ձէն ա տալի: Իր կովին կանչում. չէ՞ էն
էլ նրա սէրն ու մուրազն ա...

— Թէ ձէնը դուրս կը գայ, ես նրա սէրն ու
մուրազը նշանց կը տամ, — ծիծաղելով բացագան-
չեց որսկան Օսեփը:

— Չէ՛, շատ մեղք բան ա, շատ, — գլուխը
շարժելով կրկնեց բոսդանչին ու ձէնը աւելի բարձ-
րացնելով կանչեց.

— Տղե՛րք, էս ա որ պախրիցը խօսք ընկաւ,
ես ձեզ մի բան պատմեմ:

— Պատմի՛, Օվակիմ բիձա:

— Մի տարի սարուձն էի: Սկան, խաբար բե-
րին, թէ բա թո՞ղ հիւանդացել ա, քեզ ուզում ա,
արի: Սարիցը վեր կացայ, իմի տուն եմ գալի:
Ճամբին ծռուեցի, ասի՝ կարելի ա որսից բանից պա-
տահի: Ման եկայ, մի տեղ տեսնեմ բրնուտումը մի
բան խշխշացնում ա, թփերը ժած ա տալի: Ախպէր,
էս թէ մոշանաւ ա, մոշանաւի բան չի, թէ անասուն
ա, ինչի՞ չի երեւում: Մի քար գցեցի թփուտը: Մին
էլ տեսնեմ՝ մի պախրի ճուտի աղանջներ զցուեցին,
էլ ետ գաժացան, ու սկսեց թփերը ժած տալ, ճամ-
բայ բաց անել որ փախչի: Թվանքն երեսս կայայ
հենց թփերի էն ժած եկող տեղը: Թվանքը որ տրու-
քեց, սա վեր թաւ, դուրս եկաւ ու ետ գետնովը
դիպաւ: Տղե՛րք, իմի մի ձէն ա անում, մի տըն-
քում ա, ոնց որ մեռնող երեխայ: Ուստա որսկան-

ներից լսել էի, ասի՛ էս ա, սրա մէրը ինձ տեսել ա,
 էստեղից փախել, որտեղից որ է հիմի ետ կը գայ,
 Ասայ մի ծառի տակ, ճամբայ պահեցի: Շատ մնացի
 թէ քիչ, մին էլ տեսնեմ հրէս եկաւ, բայց ո՞նց
 եկաւ: ես տեսայ, դուք ոչ տեսնէք. մի խօսքով մօր
 նման, թվանքի ձէնը իր երեխի վրայ լսած մօր
 նման: եկաւ տեսաւ իր ճուտը հրէս անշունչ, ար-
 նակոյով մի ծառի տակ փռուած: Տղե՛րք, դունչը
 մեկնել ա, ո՞նց ա տխուր մզզագնում, ո՞նց ա վէր-
 քը լիղում... Թվանքը վեր կայայ, էդտեղից քաշու-
 եցի, եկայ տուն: Եկայ տուն, եկայ տեսայ, երեխէն
 հոգու հետ կսիւտ տալի, տնքում ա: Տղե՛րք, էն օրը
 չի, էն օրուայ Ասածոն ա. էնպէ՛ս էն պախրի ճուտի
 նման ա տնքում, որ աչքս խուփ եմ անում, հենց
 իմանում եմ դեռ էն թփի կողքին եմ կանգնած:
 Վերջապէս երեխէն մեռաւ. հիմի մէրը ընկել ա
 վրէն, բառանչում ա... Ասում եմ փառքդ շատ
 բիւ: Ասած՝ թ՞նչ ա մեր ու էն սարի պախրի պա-
 նազանութիւնը: — ոչի՛նչ... ամէնի սիրտն էլ սիրտ
 ա, ամէնի ցաւն էլ՝ ցաւ:

Օ լակիմ բիճու տխուր պատմութեան տպաւո-
 բութեան տակ մի առ ժամանակ լուռ էինք:

— Օ լակի՛մ բիճա, չէ՞ որ ասում են պախրէն
 էլ աէր ունի, — խօսեց շախատար Ղազարը:

— Ունի բաս, պախրէն մեծ աէր ունի:

— Եանա էդ դրո՞ւստ բան ա:

— Իրուստ ա, բաս: Որսկան Փիրուին ինքը
 գլուխ որսկան էր ու նրա գնդակը իր օրումը գե-
 տին չէր բնկած: Մի անգամ մի պախրա ա վիրա-
 ւորում: Պախրէն փախչում ա, սա ընկնում ա ետե-
 ւիցը, քշում ա, տանում հասցնում Զօրաւոր կաղ-
 նրքու տակը: Էստեղ, Զօրաւոր կաղնրքու տակին,

պախարէն չոքում ա. պախարէն չոքում ա — որսկան
Փիրումը թվանքն երեսն ա կալնում: Հենց էս դըժ-
ժան բուպէին Չօրաւոր կաղնըքուց մի դուռն ա բաց-
ւում, մի սիրուն հարսն ա դուրս գալի: էս սիրուն
հարսը դուրս ա գալի՝ որսկանի դէմը ծղրտում:

— Ի՞նչ ես հալածում իմ անմեղին, անիրա՛ւ
մարդ, ի՞նչ ա արեյ քեզ: Աղա՛հ, ոչ կշտանաս դու,
որ չես կշտանում լիքն աշխարքում: Թվանքդ ար-
նով լցուի... գնդակդ խմոր դառնայ, չորանայ էդ
թվանքը բռնող կուռը...

«Միայն որսկան Փիրումը խելօք մարդ էր. գլը-
խի ա ընկնում, որ էս որսի տէրն ա. ձեռաց թվան-
քը պցում ա մի ծառի ճիւղքի. անիծելուն պէս
ծառի ճիւղքը տեղն ու տեղը չորանում ա:

— Օվակի՛մ բիձա, ուրե՛ն էդ ա, որ ասում են
որսկանութիւնը անիծած ա:

— Անիծած ա, բաս, մին. որսկանութիւնը, մին
էլ ձկնորսութիւնը. երկուսն էլ անիծած են: Հնուց
դրած նզովք ա, որ որսկանի և ձկնորսի փորը կըշ-
տանայ ոչ: Որսկանի վրայ Բեարամն էլ նզովք գրեց:
Նրք էրուելով իր Ասլու ետեւից ման էր գալի, մի
վիրաւորում պախրա տեսաւ: Տեսաւ անասունը
մղկտալով շունչը տալիս ա, հորթն էլ մոլորած
մնացել ա կողքին կանգնած, էստեղ սաղն առաւ ու
մի խաղ ասաւ:

Մենք խնդրեցինք Օվակիմ բիձուն, որ էդ խաղն
ասի մեզ համար, ու ծեր բոսղանչին իր պառաւ ձե-
նով խարոյկի առաջ երդում էր մութը ձորում:

Հէ՛յ պարոններ, ջեսայ կանանչ գարունին՝
էս սարեւում լաց եր լինում մի պախրա.
Սիւուն հորքը մոլոր կանգնած իր կողքին՝

Էս սառեռում լաց եր լինում մի պախրա:

Գնդակն առած գնում եր փուն աշխարհից,
Գանգաւսուելով մարդու անգուր արարից,
Արիւն սալով, մղկաւով իր վերից՝
Էս սառեռում լաց եր լինում մի պախրա:

Ասուած սիրող՝ որսին թվանք շրթոնի,
Սրկինք սիրող՝ որսի միտք թող շառնի.
Քաւրդո՞ Քեարամ ճեսաւ ծովում արիւնի՝
Էս սառեռում լաց եր լինում մի պախրա:

* *

Ամէնքը քնեցին. ես մնացի զարթուն. Գիշերն
էս տեսակ տեղերում. անսովոր մարդը չի կարողա-
նում քնել, հազար ու մի ձէն է լսում, հազար ու
մի բան է երեւակայում:

Էն անշուշտ գիշերուայ հովն էր, սր շարժում
էր սիմինդրները, բայց ինձ թւում էր, թէ Օվակիմ
բիձու ասած պախրէն էր բոսդանը մտել. Գիշերուայ
մթութեան մէջ, հեռում սեւ կերպարանքներ էին
երեւում ու կարծես շարժում էին:

Ու անքուն էի ես:

Գիշերուայ մի ժամին դուրս եկայ դափի դուռը:
Պարզ աշնանային գիշեր էր. Չոր ցուրտը սեղմում
էր. Չորերը խուլ թշուամ էին. Նրանք էլ ասես քնել
էին. Օվակիմ բիձու նման փշշացնում էին. խոր ու
հանդիսա:

Բայց Քարվան-Ղուան աստղը արդէն դուրս էր
եկել. մեր ճամբայ ընկնելու ժամանակն էր. ես վեր

կացրի իմ ընկերներին: Նրանք շտապով հագան
իրենց արեխները ու վեր կացանք գէպի Եղնուտի
կիրճը...

Արշալոյսից առաջ մենք դարան էինք մտած Եղ-
նուտի կիրճում: Ես իմ գիրքից պահում էի առաջիտ
ընկած բացատը: Իմացս կանգնած էր խոր ու ան-
թափանցելի մութ անտառը:

Հետզհետէ գիշերուայ խաւարն սկսեց նօսրանալ:
Ժայռերը խոժոռ, քնաթաթախ դուրս նայեցին աղ-
ջամուղջի միջից: Երկինքն սկսեց գունատուել
ու պարզուել: Ապա երեւաց Եղջերուն— Լուսաստ-
ղը: Վեր կացաւ վաղորդեան դեփիւռը: Ծաղիկները
շարժեցին իրենց գլխիկները, խոտերը դողդողացին,
տերեւները շրշացին: Անտառն սկսեց դարձնել մո-
տակայ թփից մի ծխո ճկաց, մի ուրիշը՝ միւս
թփից, մէկն էլ՝ հեռուից...

Ես աննկատելի դուրս էի եկել իմ թաքստոցից
ու դմայլած դիտում էի շուրջս՝ բնութիւնը, էն
սրբազան ժամին, երբ ծագում է առաջին լոյսը:

Յանկարծ մի ձայն... չորացած ճիւղ կոտրուեց
մօտիկ անտառում: Նայում եմ էն կողմը: Անտառը
տակաւին մութն է: Աչքս չի սրոշում, թէ ի՞նչ կայ
էնտեղ, միայն պարզ լսում եմ զգոյշ տանաձայնը,
խը՛շտ, խը՛շտ... Բան չի երեւում, բայց դարձեալ
խը՛շտ, խը՛շտ, խը՛շտ, մօտենում է աւելի ու աւե-
լի... Եւ անա դուրս եկաւ:

Ես առաջին անգամն էի տեսնում Եղջերուն ա-
ղաս բնութեան մէջ: Նա դուրս եկաւ մի խաղաղ
հպարտութեամբ, վե՛հ ու չքնաղ, ինչպէս բնութեան
էն ամէն գեղեցկութիւնների տէրն ու թագաւորը:

կիսով ին՝ դեռ անտառի մ'թուփեան մէջ կանգնեց,
թուխ դունչը դրաւ դեանին, ապա թէ գլուխը բարձ-
րացրեց, վայրենի շնորհքով ոլորեց երկայն վիզը
ու նայեց իմ կողմը:

Ամենագեղեցիկ հայեացքը, որ ես տեսել եմ իմ
կեանքում:

Ես շփոթուեցի, ամաչեցի, ուզեցի թաքցնել
հրացանս... Շարժուեցի թէ չէ, նա շտապով ետ թե-
քեց իր կարապի վիզը. վիզը ետ թեքելուն պէս
հարեւան դիրքից սրտաց սրսկան Օսեֆի հրացանը:
Հրացանի ձայնից անտառը սրտաց ու սկսեց ճրճը-
ռալ: Էն եղջերուն էր փախչում:

— Հա՛յ քս տունը չքանդուի, — ինձ յանդիմա-
նելով դուրս թաւ սրսկանն ու վաղեց դէպի մօտիկ
բլուրը, տեսնի՛ ս'ր կողմից կ'երեւայ փախած որսը:
Առաւօտը բացոււմ էր, և էնքան լուս էր, որ կա-
րողացանք կանաչ խտերի վրայ գտնել թարմ ար-
եան հեաքը:

Վիրաւորուած էր եղջերուն: Արեան հեաքը
բռնեցինք ու գնացինք սրտնելու:

— Էսքան որ արիւն է տուել, ինչքան ուզում
է գնայ, մերն է, - յայտնեց սրսկան Օսեֆը:

..

Իրիկնապահին նրան գտանք մի խոր անտա-
ռում: Նա ընկած տեղից իր երկայն վիզը մեկնեց
մեզ վրայ: Ես տեսայ՝ ի՛նչպէս ջէր կարողանում
գլուխը պահի, շարժում էր անդադար ու նայում էր
մեզ իր պղտոր, շրշկլած, անսրոշ հայեացքով: Յան-

կարծ կարծես գլխի ընկաւ, աշխատեց վեր կենայ,
ծնկները վեր բարձրացրեց ու կրկին ճղփալով ըն-
կաւ իր արեան մէջ մի ծանր, անզօր թառանչով:

Որսկանը վրայ վազեց... Ես ուզեցի մի բան
ասեմ, ամաչեցի: Նա բռնեց եղջերուի գլուխը, ոլո-
րեց գեղեցիկ վիզը... Ես կրկին ուզեցի մէջ մըտ-
նեմ, դարձեալ սիրտ չարի... Եւ ահա դաշոյնը փայ-
լատակեց:

Ես երեսօ շրջեցի, իբրեւ թէ սարերին եմ նա-
յում: Ետեւից մի խուլ անքոց լսեցի ու, չգիտեմ
ինչո՞ւ, սկսեցի մտածել կեանքի ու մահուան մա-
սին, և էնպէ՛ս տգեղ էր թւում ինձ կեանքը...

Գ Է Լ Ը

1

Աորն աշուճքին, Լօռու սարերով անց կենալիս,
մի գիւղում մութը վրայ հասաւ: Հիւր ընկայ Անդ-
րիաս քեռու տանը, որ մի հին ու փորձու ամ հովիւ էր:

Սարերում սովորութիւն կայ, որ տեսան մէկի
տունը հիւր եկաւ, հարեւանները կը հաւաքուեն
եկուորի գլխին, կը հետաքրքրուեն, հարց ու փորձ
կ'անեն իմանան ի՞նչ կայ, ի՞նչ չկայ աշխարհքում:

ՍԷ անա հետզհետէ գիւղացիք հաւաքուեցին Անդրիաս քեռու օթախը:

Տանտէրը բուխարին թէժ արաւ, մենք էլ, ով ինչպէս ուզեց, տեղաւորուեցինք լէն ու արձակ տախտերի վրայ ու սկսեցինք զրոյց անել:

Իս խօսակցութեան միջոցին գիւղի շներն սկսեցին անհանգիստ հաջել ու ոռնալ:

— Գէլ է, — միաբերան բացագանչեցին գիւղացիք:

— Ընչի՞ց էք իմանում, — հարցրի ես:

— Գելահաջ են տալի, աղա՛:

— Գելահաջը ո՞րն է: Միթէ շները միշտ մի տեսակ չե՞ն հաջում:

— Չէ՛, աղա, գէլի վրայ ուրիշ տեսակ են հաջում, մարդի վրայ՝ ուրիշ: Մարդկանցից էլ՝ գողի վրայ ուրիշ տեսակ են հաջում, անցորդի վրայ՝ ուրիշ: Խմբի վրայ՝ ուրիշ տեսակ են հաջում, մենակ մարդու վրայ՝ ուրիշ...

Հենց էս խօսքի մէջն էինք, որ մի հրացան տրաքեց. շների հաջոցը սաստկացաւ ու միաժամանակ մի աղմուկ բարձրացաւ:

— Հասէք, հէ՛յ... տարա՛ւ, տարա՛ւ, հէ՛յ...

Գիւղացիք դուրս թափուեցին:

2

Գիւղիցը դուրս՝ գիշերուայ մթում լսում էր խուլ աղմուկ:

Սա մենակ էի մնացել: Տան կնանիքն էին միայն դրան առջեւ հաւաքուած վաշ ու վիշ անում: Միջների պառան անիծում էր:

— Վո՛ւյ, անտէր մնաս դու, անտէր:

Ու միմիջում էր «Գիւղապ»ի աղօթքը:

«Ալալոս,
Գալալոս,
Գեղը կապեմ երկու բրթով,
Երկու բրթով, երկու մատով,
Ասուածածնայ ֆաղցր կաթով,
Սուրբ Սարգսի ձիու ձարով,
Նահասակաց կարմիր ֆարով:
Գեղի նամբէն մոլոր անեմ,
Գեղի ասամ խմոր անեմ,
Ոճեերը թոյլ,
Ականջը խուլ...»

Ու կրկնում էր.

— Վո՛ւյ, անտէր մնաս դու, անտէր:

— Էն լո՞նչ է, նանի՛, — ճարցրի ես, թէն ճար-
մոզուած էի, որ գէլ էր:

— Գէլ է, որդի՛, գէլ: Ոչխարը սարից գեղն են
բերել, ետեւիցն եկել է:

3

Վերջապէս խառն ի խուռն, բարձր-բարձր խո-
սելով ու ծիծաղելով եկան գիւղացիք:

— Աղա, բա որ ասի՞նք:

— Ուրե՛ն գէ՞լ էր:

Ինձ պատասխան տալու փոխարէն առաջ բերին
մի թխադէմ 17-18 տարեկան պատանու:

— Ա՛յ տղայ, Սիմո՛ն, էդ ո՞նց եղաւ:

— Ա՛յ տղայ, դէ էն ա, ոչխարը բերում էի,
տուն անեմ: Բերի գեղին մօտեցրի, մին էլ տեսնեմ
ոչխարը դէս ու դէն խախալ խախալ է անում. շունն

էլ հա՛ է անու՛մ, թէ ոչխարի մէջն ընկնի: Հենց էս
ժամանակը շները թփի տակիցը մի գէլի վեր կա-
լան ու ետեւիցը լարուեցին:

— Հասի՛ հա հասի, բռնի՛ հա բռնի: . . .

Մին էլ տեսնեմ ոչխարը կտրկան էլաւ ու փախս
առաւ: Ես մտիկ տամ, որ մի անտէր գէլ մի ոչ-
խար բռնել է, հետը կողք կողքի ընկել ու պսշով
ետեւիցը քշում է, ոչխարն էլ հետը չափ ընկած
գնում է, ոնց որ հարսանքի ձիաւոր ըլի: . . .

— Հա՛յ հա հա՛յ: . . . շուռ եկայ դէսը: Թվանքը
որ տրաքեց, սա ոչխարը թող արաւ փախաւ:

— Անտէրը ոչխարի միջին տապ արած է էլել
հա՛, — նկատեց քեռի Անդրիասն ու դարձաւ դէպի
ինձ: — Էդպէս է դրանց սովորութիւնը, աղա՛, էգ
ու որձ գնում են: Մինը ոչխարի մօտիկ տապ է ա-
նում, կամ եթէ աջողեցնում է՝ հենց ոչխարի միջին
է տապ անում, միւսը գալիս է երեւոյթք ըլում,
խարսը տալիս, շանն ու չորանին աւնում փախ-
չում: Տապ արած ընկերը ետեւիցն էս խառնակ ժա-
մանակ ոչխարը տանում է: Ծատ անգամ էլ ոչխարը
տանում է պահում ու ետ գալիս ընկերին օգնու-
թեան: Ուստա չորանը փախած գէլի ետեւից գնալ
չի, գիտի որ ետեւից վտանգ կայ պատրաստած:

— Սա էլ է լաւ ժաժ եկել, — դովեցի ես պա-
տանի հովուին, — կարողացել է գէլի բերանից ան-
փորձանք ազատել ոչխարը:

— Գէլի բերանից անփորձանք ոչխար ազատելն
ինչպէ՛ս կը լինի, աղա՛, — խօսեց պատանին: — Գէ-
լը տեսաւ, որ ոչխարը ձեռիցը գնում է, մինչեւ իմ
հասնելը մի ոխելում ոչխարի գմակը պսկեց տարաւ:

— Հա՛, էդպէս է, — դարձեալ մէջ մտաւ տան-
տէրս: — Գէլը ոչխարին հասաւ թէ չէ, եթէ տանե-

լու հնար չկայ, դժակին կը տայ ու մի տալում
դժակը կը պոկի:

— Տաւարին էլ հասաւ թէ չէ, բողազիցը կը
բռնի, քեռի՛ Անդրիաս, — մէջ մտաւ մի տաւարած:

— Տաւարին էնքան էլ հեշտ չի, — պատասխա-
նեց քեռի Անդրիասը: — Տաւարիցը մինը գոռաց թէ
չէ, ամբողջ տաւարը հասկանում է բանն ընչու մն
է, որովհետեւ գէլի գոռացնելն ուրիշ տեսակ է. իս-
կոյն բոլորը հաւաքւում են, քամակ քամակի տա-
լիս ու պոչները դէմ անում կանգնում...

— Տաւարը հեշտ է շաղւում, քեռի՛ Անդրիաս,
ու հեշտ էլ գէլի փայ դառնում: Ին՝ ինչ ձին է ա-
նում գէլի հետ, ո՛չ մի անասուն չի անիլ:

«Ձին գէլի հոտն առաւ թէ չէ, ականջները սր-
բում է, փռացնում, փունչացնում ու ձեռաց բսլոր
ձիերը հաւաքւում են մի տեղ, մադիանները իրենց
քուռակները մէջանեղն են առնում ու նրանց շրջա-
պատում կանգնում, երեսները դէպի ներս, քամակ-
ները դէպի դուրս, գէլերի կողմն արած՝ քացիները
պատրաստի: Ու Աստած հեռու տանի, թէ մի գէլ
մօտեցաւ: Բայց կուռում գէլի համար ամենավտան-
գաւորը որձ ձին է: Որձ ձին մադիանների հետ շըր-
ջանի մէջ չի մտնում: Բաշը թափ տալով ու փըռ-
ռացնելով կատաղի պտըտւում է շրջանի շորս կող-
մը, յարձակւում է գէլերի վրայ ու առաջն ընկած
գէլին տրորում, ջարդում առաջի ստներով կամ
քացու մի դարկով փռում գետին:

«Եթէ մադիանը մենակ է, քուռակը դռչի տակն
է առնում ու կանգնում:

«Մենակ ձիու էս կողմն, էն կողմն է թռչում
գէլը ու յանկարծ վրայ է թռչում, բողազիցը բռն-
նում կամ մի դարկով փորը պատում: Երբեմն

քթիցն էլ է բռնում, շուռնչը կտրացնում, Երբեմն էլ ձիու առաջն է ընկնում ու փախս տալիս, իբրև թէ վախենում է, ձին էլ դուռնչը տնկած ետեւիցն է ընկնում, իբրև թէ հալածում է, Յանկարծ ետ է դառնում ու բռնում:

— Էդ ո՞ տէչն է, — խօսեց քեռի Անդրիասը: — Գէլն էշի հետ խաղում է, խաղում ու ականջներն իրեն քաշում՝ առաջը փախսը հարում, էշն ընկնում է ետեւիցը, իբրև թէ հալածում է, Էսպէս հեռացնում է, հասցնում մի ապահով տեղ ու ետ դառնում ուտում, Դրա համար էլ ասում են «էշի գերեզմանը գէլի փորն է»:

— Ոչխարն էլ է գէլի ետեւիցն ընկնում, — նկատեց մի ուրիշը:

— Հենց գէլն էլ էդ երկուսին, էշին ու ոչխարին, ամենից շատ է սիրում:

— Իսկ ամենից քիչ մօտենում է խոզին ու գոմշին:

— Ի՞նչ էծի՞ն:

— Պա՛, էծի բանը ծիծաղ է, ինչպէս գէլն էծին բռնած ժամանակը՝ էծը էնպէս է ճղըղում, որ գէլը թող է անում ու փախչում:

— Բայց միթէ գէլն էդքան անվախ ու համարձակ է մօտենում գիւղին, — հարց տուի ես:

— Գէլը, երբ որ կուշտ է, շատ վախկոտ կենդանի է, աղա՛, — պատասխանեց քեռի Անդրիասը: Բայց հիմի սկսւում է գէլի դժար ժամանակը: Չմեռը գալիս է, անտառի որսը դժարանում է, ապրանքը սարից ցած է գալիս, տուն է մտնում, Գէլի ապրուստը կտրւում է: Սովը որ նեղացնի՝ գեղ էլ կը մտնի, դեռ տուն էլ: Սովի ձեռիցը ձմեռը գալիս է շեմքիցը՝ շուռն է տանում լախում: Մտկն է որ-

տում, Մառի փթռակ է ուտում, իր լակոտն է ուտում, Դէ՛, սոմն է պատճառը էլի՛, որ ձմեռը միանում են, բոլորէ են կազմում, որ ուժեղ լինեն, միասին յարձակուեն...

«Ձմեռը դեռ էլի մեղանում, մեր սարերում, մեր անտառներում, մի բան է ճարում. նապաստակներ են կամ ուրիշ մանր-մուկ կենդանիներ. «Վերջապէս եղնիկների ու եղջերուների ետեւից են ընկնում, քշում են դէպի սառած գետերը. Տանում են սառոյցի վրայ ճղատում ու վրայ են հասնում, խեղդում ուտում. Բայց էն ինչ դաշտ տեղերըն են, որ դրանք էլ չկան, գէլը սովից աւելի համարձակ ու վտանգաւոր է դառնում. Շատ անգամ կատաղում է. Ու դաշտ տեղերը մարդկանց վրայ էլ է յարձակում ու մնասում.

— Տղէ՛ք, դէ, խօսքն էստեղ ինձ տուէք, — էն կողմից խօսեց Շորագեալցի Աւոն ու սկսեց իր պատմութիւնը.

«Մեղանում, դաշտ տեղերում, գէլը շատ աւելի վտանգաւոր է, քան սար տեղերում. Մեղանում գէլերը ձմեռուան գիշերը գալիս են գեղի մէջը ման գալիս. Եներին պահում ենք, որ չտանեն չուտեն. Ձմեռները մեղանում շատ վտանգաւոր է մենակ ճանապարհորդելը, մանաւանդ եթէ մութն էլ վրայ հասաւ. Ա՛յ, ձեզ պատմեմ իմ գլխին եկած մի դէպք.

«Միբան անուշով մի եզն ունէինք. Մի ձմեռ էս եզը կորաւ. Ախպէրս ինձ դրկեց ման գալու. Լս էլ էնպէս 16-17 տարեկան ջահէլ սղայ եմ. Գնացի գեղի շորս կողմը ման եկայ, չդտայ. Գոմահանդ ունենք, էնքան էլ գեղիցը հեռու չի. Ասի՛ եզը սովոր է, կարելի է էդ կողմը ըլի գնացած. Գնացի էդ գոմահանդը. Գնացի, էս գոմը նայեցի, էն գոմը

նայեցի, վերջը տեսնեմ՝ դրուստ որ եզը մի գոմու մն
է՛, Սզը դուրս արի. դուրս գամ տեսնեմ արդէն
մութն ընկնելու վրայ է՛. Սիրտս մի ահ ընկաւ :
Տեսնում եմ, որ լուսով չեմ կարող գեղը հասնեմ :
Մտածում եմ՝ գնամ, չգնամ : Ի՞նչ անեմ . . .

«Չորս կողմս ամայի, ձիւնապատ դաշտ. շէն
չկայ, ձէն չկայ. ձեռս էլ մի ճիպոտ ու մի դանակ :

«Ի՞նչ պէտք է անեմ : Ասածու անուը տուի,
եզն առաջս արի, քշեցի : Մի քիչ տեղ անց էր կա-
ցել, յանկարծ իրիկուան էն դառը քամու հետ մի
տխուր ձէն ընկաւ ականջովս : Կանգնեցի ականջ դրի :

«Տեսնեմ՝ գէլի ոռնոց է. — ո՛ւր . . .

«Ո՛ւր . . . էս ոռնոցին միացաւ ամբողջ խումբը ու
սարսափով լցուեց դաշտը : Մտիկ տամ, որ աջ կող-
մըս, հեռում, մթան մէջ, ջուխտ-ջուխտ վառ-
ուած ճրագների մի թաղմութիւն է շարժւում : Էլ
ի՞նչ. ձեռաց հասկացայ, որ գէլերի աչքերն են. սո-
ված բոլուկ է . . . Սզը ետ տուի դէպի գոմերն ու
քշում եմ, ո՞նց եմ քշում : Ստ նայեմ, որ արդէն
գալիս են. Սզը թող արի փախայ, ընկայ գոմը :
Ընկայ գոմը, բարձրացայ սիւների գլխների, գե-
րանների վրայ գատարկ տեղեր են լինում է . . .

— Հա՛, իմանում ենք, կոնդերի վրայ :
— Հա՛, էդ կոնդերից մէկին վեր ելայ : Իեռ
չէի տեղաւորուել, մին էլ տեսնեմ եզանս գոռոցը
բարձրացաւ : Զարմանք բան է, թէ էնքան տարա-
ծութիւնն ի՛նչպէս մէկ երկու թաղում կտրեցին ու
հասան :

— Վա՛հ, գէլի ոտին ի՛նչը կը հասնի, — խօսեց
քեռի Անդրիասը : — Էն սարի գլխիցը, որ մի բան
նկատեց, մին էլ կը տեսնես կողքիդ դուրս եկաւ :
Իրա համար են ասում էլի, թէ գէլն ազրայիլ է :

— Հա՛, էն էի՛ ասում, — շարունակեց Շորագեալցի Աւոն. — Եզանս գոռոցը բարձրացաւ ու խկոյն էլ կտրուեց, խրխռոցն ընկաւ, Խրխռոցն էլ կտրեց. միայն գէլերի ժընգժընգոցն եմ լսում, ու լսում եմ՝ ո՛նց են լախում . . .

«— Վա՛յ, Օիրա՛ն ջան. . . դուրս թռաւ սրտիցս. . .
«Բայց ի՞նչ Օիրանի ժամանակն է, ես իմ գլուխըն եմ լաց ըլում. Մտածում եմ, թէ էս լաւ էր, եզնովը կ'ըլեն մի՛նչեւ կը լուսանայ, կամ կը կըշտանան ու կը գնան, կամ, տսում եմ, ինձ չեն գտնիլ. Դու մի ասիլ՝ սոված գէլի բոլո՛ւկ, ես յիսուն ասեմ, . . . դու հարիւր իմացի, ձեռաց հախուել են, ու մին էլ տեսնեմ, . . . մութ գոմը լցուեցին էն ջուխտ-ջուխտ վառած ճրագները՝ ռեխները բաց արած . . .

«Իտան . . .

«Նկել են լցուել, ներքեւից ազան-ազան ինձ են մտիկ անում. ես էլ չսրացել եմ մնացել վերեւը՝ գերանին կպած. Մտիկ արին ու թող արին, դուրս գնացին:

«Շունչս ետ եկաւ. Ասի՛ «փառքդ շատ ըլի, Աստո՛ծ, էս էր՝ աղատուեցի. . .»:

«Իեռ Աստծու փառքը բերանումս, մին էլ ի՞նչ եմ լսում. իմ ուղղութեամբ, վերեւից կտուրը քանդում են, ճանկերով հողը ետ են տալի. Արդէն լսում եմ՝ ճանկերը կոճերին են դիպչում:

«Սառը քրտինքը վրայ տուեց. Շտապեցի, տեղս փոխեցի, անց կացայ միւս կոնդի տակ, կուճ եկայ:

«Բաց արին, կոճը վեր կալան, տեսան տակին չկամ. էլի եկան ներքեւ. Մտիկ արին, որ միւս կոնդի վրայ եմ, ետ դուրս գնացին. Հիմի էն կոնդի վերեւից սկսեցին քանդել կտուրը:

«Իարձեալ տեղս փոխեցի. Էսպէսով՝ նրանք քան-

դելուվ, ես տեղս փոխելով հասանք վերջին կոնդին, կը ո՞ւր գնամ, Եկան մտիկ արին կատաղած ու ես գնացին. Քանդում են, ո՞նց են քանդում...

«Մի սուր դանակ ունէի գրպանումս... հանեցի, բաց արի ու ձեռքիս բռնած՝ մտքումս աղօթք եմ անում. — Տէր Աստուծ, դու ինձ ազատ անես էս նեղ տեղիցը...»

«Իսկ հենց անգամիս վերելը քանդում են. Քանդելով հասան կոճերին, Հասան կոճերին, մինը կոճերի արանքովը թաթը մեկնեց, որ կոճը ես քաշի. Թաթը բռնեցի ու էն սուր դանակովը, ղը՛նթ, կըտրեցի. Թաթը փախցրեց, ոռնալով, կոնձկոնձալով ես գնաց. կտրան վրայ իրար անցան, իմացեր էի, որ գէլերի մինը եթէ վիրաւորուեց, միւսները վրայ են թափւում, նրան ուտում: Ասի՛ ուրեմն սրան ուտում են. Հիմի սպասում եմ, որ սրան կ'ուտեն կը պրծնեն, ես կը գան. կըլի դանակս ձեռիս պատրաստ սպասում եմ:

«Ա. կանջո ձէնի է. Գիշերուայ մի ժամին, սնց որ երազում, մի բարակ ձէն եմ լսում:

«— Ա. ո՞, հէ՛յ...»

«Ինձ են կանչում:

«— Տէ՛ր Աստուծ, միթէ ի՞նձ են կանչում: Միթէ ախպէ՞րս է. Միթէ մերո՞նք են. Գամից ձէն եմ տալիս, գոռում եմ:

«— Ա. կանիկ, հէ՛յ... կտտեղ եմ, գոմումն եմ: Գէլերն ինձ ուտում են... Օգնեցէք, հէ՛յ...»

«Էլի նրանք ձէն են տալի, իմ ձէնը չեն լսում, թէեւ ես շարունակ կանչում եմ:

«Մին էլ տեսնեմ՝ հրացանները տրաքեցին, ետեւից լսուեցին հեռացող գէլերի կաղկանձն ու մարդոց հարայրոցը: Պարզ ճանաչեցի ախպօրս ու մեր

գեղացի տղերանց ամէն մէկի ձէնը:

«— Աւօ՛՛ հէ՛յ...»

«— Էստե՛ղ եմ, էստե՛ղ եմ, կենդանի՛ եմ...»

«Ներս թափուեցին գամը:

«— Փա՛ռք քեզ, Աստո՛՛ծ... փա՛ռք քեզ, Աստո՛՛ծ, — ուրախացած ու զարմացած կանչում են ամէնքը: Ցած եկայ վերջին կոնդի վրից, ախպօրս գիրկն ընկայ ու սկսեցի հեկեկալ:

«— Էլ լաց մի ըլի՛, գնա Աստծուն փառք տուր, որ էսօր նոր մօրից ծնուեցիր, — կանչեցին էս ու էն կողմից ու ինձ բերին դուրս, ուր թափուած էին մեր Միրան եղան սակորները:

«Իե՛ռ լուսը չէր բացուել:

«Հեռուից լուում էր գէլերի սոնոցը»:

4

Շորագեալցի Աւոյի պատմութիւնից յետոյ խօսքըն ընկաւ գէլի վոհմակի վրայ:

Երկար ձմեռներն ու անպրուստի դժուարութիւնն են պատճառը, որ գէլերը վոհմակ են կազմում, — բացատրում էին գիւղացիք:

Ոռնում են, իրար կանչում, հաւաքւում, միանում, որ ուժով լինեն թէ՛ յարձակուելու և թէ՛ յարձակման դիմադրելու ժամանակ:

Ամէն մինը մենակ հեշտ կը յաղթուի ձմեռն ու կը կորչի, քան թէ խմբով, և ամէն մինը չի կարող էն ճանկել, ինչ որ կը ճանկի խումբը:

Եւ հաւաքւում են յիսուհով, հարիւրով, մի քանի հարիւրով:

Սարսափելի բան է գէլի վոհմակը. մանաւանդ էք լինում է ձմեռը, գէլի ամենաքաղցած ժամա-

նակը, երբ շատ անգամ գէլը քաղցից կատաղում է, էդ ժամանակ, ասում են, գէլերն իրենք էլ են իրարից վախենում: Երբ վոհմակով մի տեղ կանգնում են հանգստանալու, շրջան են կազմում ու էնպէս են վեր թափւում, որ իրար երես պահեն, չեն հաւատում մէկ մէկու: Վախում են իրար ուտեն: Բայց ոմանք էլ ասում են՝ նրա համար են էդպէս անում, որ իրար տեսնեն ու հարկաւոր դէպքում ինկոյն նշան տան իրարու, և իբրև թէ բոլորը նայում են իրենց դիտաւորին:

Գէլի համար մութը, ճամբի դժուարութիւնը, հեռաւորութիւնը ոչ մի նշանակութիւն չունեն:

Գէլն էնքան արագավազ է, որ մի գիշերուայ մէջ երեք չորս օրուայ ձիու ճամբայ կը կտրի: Իսկ գէլի սրատեսութեան վրայ էսպէս մի զբոյց կայ ժողովրդի մէջ:

Ասում են, մի անգամ արծիւն ու գէլը վէճի բռնուեցին, թէ իրենցից ո՞րն է աւելի սրատես: գէլն ասաւ. — մի ամպոտ օր ես սարի գլուխն ելայ, ամպի միջով մտիկ արի, տեսայ՝ հեռու մի դաշտում, մի սեւ ցելի մէջ, մի ակօսում մի սեւ գառն է նստած:

Արծիւն էլ թէ՛ ես էլ երկնքի երեսն ելայ, ներքեւ մտիկ արի, մի ճխնելոյզի միջից տեսայ կրակի վրայ դրած մի պղինձ խուփը վրէն: Խփան ճեղքիցը նայեցի, տեսայ պղնձի միջին կաթը, կաթնի երեսին էլ մի սպիտակ մաղ:

էսքան արագավազ ու սրատես գառան է գէլը՝ Եւ էս ամենի հեա միասին՝ շատ խորամանկ:

Նա մինչեւ լաւ չիմանայ, որ յարձակումն ապահով էր չի յարձակուիլ: Ուրիշ բան է, եթէ սովից խեղագար մի գէլ իրեն կորցրած գցի անփաշկա-

րա վտանգի մէջ. բայց սովորաբար գէլը շատ է զգոյշ ու խորամանկ:

Մի գիւղացի էսպէս պատմութիւն արաւ: Ասում էր. մի տարի թակարդ էի սարքել: Անաստը վաղ վեր կացայ, գնացի տեսայ մի գէլ է ընկել մէջը: Միայն ոտիցն է ընկել ու ոտը փշրուել է, սատկել է: Վեր կալայ թակարդիցը հանեցի, էն կողմ գցեցի: Մինչեւ գլուխս կախ ես թակարդովն էի եղած, մին էլ տեսնեմ վեր կալաւ, կաղին տալով փախաւ: Հա՛յ հա՛ հա՛յ, էլ ո՞րտեղ, իրեն տուեց անտառը: Ինչ մի ասի, անտէրը ստամեռնուկ է տուած եղել:

Գէլի վոհմակն էլ ձմեռը ճամբայ կտրելիս իրար ետեւից է գնում, ծլլաչարուկ, ու միշտ ամենից ուժեղն ու փորձուածը առաջից է գնում: Եւ սա երկու յարմարութիւն ունի նրանց համար: Մին որ առաջի գնացողները ձնի մէջ կոպար են բաց անում, ետեւից եկողների համար բաց-պատրաստ ճամբայ է լինում. մին էլ, որ ոչ ոք չի կարող իմանալ, թէ իրենք քանի՛սն են եղել: Եւ էդ է պատճառը, որ ոչ մի որսկան չի կարող ասել, թէ էս վոհմակը, որ անցել է, քանի՛ գէլ է եղել մէջը:

Աստուած հեռու տանի, թէ վոհմակի աչքովը մի որս ընկաւ: Ուրիշ գազան լինի թէ ընտանի կենդանի, իսկոյն չորս կողմից շրջապատում են ու էլ փրկութիւն չկայ: Իսկ կծղակաւորներին, յատկապէս եղնիկներին ու եղջերուներին, քշում են դէպի սառած դետերը, սառուցի վրայ ճղատում ու վրայ թափւում, կամ քշում են դէպի բարձր ժայռերը, ժայռերից թռցնում ու իջնում ներքեւ, լափում:

Վոհմակը վտանգաւոր է և մարդու համար: Եթէ բազմութիւն չեղաւ, մի կամ երկու մարդից վոհ-

մակը չի վախենայ, թէկուզ հրացան ունենան: Մինչեւ անգամ հրացանն աւելի վտանգաւոր է: Հրացան արձակես թէ չէ, իսկոյն կը յարձակուեն: Հիմի կ'ասէք՝ հապա ինչի՞ց է վախենում գէլը:

Էս մասին գիւղացիք մի քանի պատմութիւն արին:

5

Գէլը ոչ մի բանից էնպէս չի վախենալ, ինչպէս կրակից, — առաջինը խօսեց իմ տանտէրը, քեռի Անդրիասը:

Մեր կողմերը գիտէք, որ գէլ շատ կայ: Էնպէս տեղ ունենք, որ հենց գէլի բուն է: Մի մեծ ծմակ ունենք, Մսակորայ ծմակ ենք ասում: Էդ ծմակումը մի թալա կայ: Էդ թալումը էնքան գէլ կայ, որ անուսը գրին Գէլի թալա:

Մի ձմեռնամուտ իրիկուն սարի գոմերիցը տուն եմ գալի: Հակառակի պէս Ստեփան տղէս էլ՝ հետս է: Ինը-տասը տարեկան երեխայ է: Որ եկանք՝ դ թալի դիմացը, մի շան ձէն ընկաւ ականջովս: Ասի՝ ո՛վ գիտի, սչխար են բերել էս կողմերը, չորանի շունն է հաջում: Ձէն տուի:

— Ա՛յ չորան, հէ՛յ...

Էս ձէն տալն էր էլի:

Շան հաջոցը կտրեց ու, ձեզ մատաղ, մին էլ տեսնեմ էդ ծմակիցը գէլի տուտը բաց էլաւ... սեխները բաց արած գալիս են, ո՞նց են գալիս. աչքերս սեւացան...

Ի՞նչ մի ասիլ, հաջողը գէլ է եղել: Ախր չէ՞ որ գէլը ունում է, բայց շանից հաջել է սովորում ու շատ անգամ էլ հաջում է:

Ձեռիս թվանք կայ, միայն լաւ գիտեմ, որ գէ-

լի բնութիւն վրայ թվանք չեն գցել. թվանք գցես
թէ չէ. աւելի կատարի վրայ կը տան:

Երեխէն թէ ապի՛, էն ի՞նչ են:

Ասի՛ վախիլ մի, քեղ մատաղ, զոչաղ կաց:
Արի՛ օգնի, էս խաշամն ու չոր ճիւղերը հաւաքենք:
Չորս կողմից խաշամն ու չոր ճիւղերը ձեռաց կի-
տեցի ու կրակ տուի, բոցը ծուլ էլաւ: Մտկորայ
ծմակը լիքը փէտ: Մինչեւ սրանց հասնելը վրայ
տուի. թէ՛ արի. բոցն էլաւ ծառերի ծէրը:

Սրանք եկել են, ի՛նչքան են եկել. չորս կողմ-
ներս կտրել են. հեռու կանգնտել ժողովուրդ են
ու առամները չխշխկացնում: Աչքները ծմակի մթան
մէջ քուքուռի բոցի նման ջուխտ ջուխտ վառ-
ւում են: Մարդ մտիկ տալիս զարգանդում է:

Երեխէն կպել է փէշիցս ու լաց է լինում:

— Վախիլ մի, Ստեփան ջան, վախիլ մի, ես
էստեղ եմ... լաց մի ըլի, որ լաց ըլես՝ կը գան
մեզ կ'ուտեն...

Երեխէն ձէնը փորն է գցել ու փէշիցս կպած
դողում է. ո՛նց է դողում...

Տէ՛ր Աստուած, ասում եմ, դու ազատես էս
նեղ տեղիցը: Ի՞նչ անեմ: Յոյսս դրել եմ կրակի
վրայ, էն էլ փէտը հատնում է, երեխէն էլ փէշիցս
պինդ բռնել է, թողնում չի մի քիչ հեռանամ, փէտ
բերեմ: կրակին վրայ տամ:

Մտիկ մի ցցչորի ծառ կայ, կրակը բնթեցի
սրտ տակը, սրտ կողքին էլ մի կտրած ծառի չոր
բլուր կար, էն էլ քաշեցի վրէն, թէ՛ օացաւ, ո՛նց
թէ՛ օացաւ. կարմիր լուսն ընկել է ամբողջ ձորը:

Դիմացի սարիցը չորանները նկատում են, որ,
ախպէ՛ր, էս ձորում, էս ժամանակին էս ի՞նչ կրակ
պէտք է լինի, որ քիչ է մնում ծմակը կրակի:

Մտածում են, մտածում ու ձեն են տալի:
 Ականջ դնեմ, որ էս մեր Շամիրի ձենն է:
 Ուրախանաք, ինչ որ մենք ուրախացանք:
 Ձեն տուի:

— Շամիր, հէ՛յ... գէլի բոլուկ է. չորս կողմս
 կտրել են... երեխէն հետս է... օգնեցէք հէ՛յ...

Հենց էս կանչելն էր: Մի քանի չորան իրար
 հետ ձեն տուին:

— Վախիլ միք, վախիլ միք, գալիս ենք, հէ՛յ...
 Ու պարզ լսում ենք, ո՞նց են իրար ձեն տա-
 լիս, շտտպեցնում, ո՞նց են շնորին կանչում:

— Թորլան, հէ՛յ: Վայթան, հէ՛յ: Չամբա՛ր,
 հէ՛յ: Չալա՛կ, հէ՛յ...

Եների կլանչոցը վեր էլաւ ու մտաւ ձորը:
 Ինտեղ երեխէն նորից սկսեց հեկեկալ ու լաց ըլիլ:
 — Վախիլ մի, Ստեփան ջան, վախիլ մի, հրէս
 կը գան:

Տղէք, էս մեր Շամիրը Թորլան անունով մի
 դելլակող շուն ունէր: Մին էլ տեսայ՝ էս ջան ձենը
 մօտիկ ծմակում զրնգաց: Սրա ետեւից մնացած շնե-
 րը, շների ետեւից կրնկակոխ չորանները, Չորան-
 ների դչրդունն ու շների հանջոցը ծմակը դրմբացնում
 են: Մին էլ Ստեփանս թէ՛ «ապի՛, գէլերը փախչում են»:

Ասաւ ու ուրախութիւնը խառնուեց սարսափին,
 սկսեց աղաղակել ու առաջն ընկած փէտի կտոր,
 քար, հող շարտել գէլերի ետեւից:

Էլ գէլն ո՞վ կը տայ, Ծմակի մթնումը կորան,
 գնացին:

Տղէքն եկան:

— Ա՛յ տղայ, էս ի՞նչ բան էր:

— Բանն էլ ո՞րն է, ձեր տունը չքանդուի, հա-
պա էսպէս, էսպէս...

Էստեղից վեր կացանք, գնացինք չորանների
մօտ, մինչեւ լուսացաւ, առաւօտը խմբով եկանք
տուն:

Էս բանն, ախպէ՛ր, իմ գլուխն եկաւ: Կրակը
մեզ աղատեց, — վերջացրեց խօսքը քեռի Անդրիասը:

6

— Ուստա՛ Սարգիս, հիմի քո պատմութիւնն
արա, — էս ու էն կողմից ձէն տուին գիւղացիք. —
Շորագեալից գալիս ո՞նց էլաւ:

— Էլ ի՞նչ ասեմ, դէ՛, գիտէք էլի, — պատաս-
խանեց ուստա Սարգիսը:

— Մենք գիտենք, ամա աղէն գիտի ոչ:

— Պատմի, ուստա՛ Սարգիս, պատմի՛ լսենք,
տեսնենք Շորագեալի ճամբին քեզ հետ ի՞նչ է պա-
տահել, — խնդրեցի ես:

Ուստա Սարգիսը դուռնաչի էր: Թիկնը տուած
չիբուխ էր քաշում, վրայ նստեց ու սկսեց պատ-
մութիւնը:

— Շորագեալի ճամբին պատահած պատմութիւ-
նըն էսպէս է, աղա՛ ջան:

Մի հացապահաս տարի վեր կացանք ես, դամ-
քաշ Ակսբն ու գհուլչի Դաւիթը. մեր դուռնա գհուլը
վեր կալանք, ասինք՝ գնանք Շորագեալայ գեղերը
հարսանիքներ անենք, հացահատիկ հաւաքենք, բե-
րենք ձմեռը կառավարուենք:

Դէ՛, գիտէք էլի, որ Շորագեալայ հացը հա՛մ
լաւն է լինում, հա՛մ առատ, իսկ մեզանում, սա-

րերում, սակաւ է լինում, եղածն էլ շատ անգամ
կարկուտը տանում է:

Գնացինք զուռնա ածելով, հարսանիք անելով
գեղէ գեղ ման եկանք: Բաւական ցորեն, գարի հա-
ւաքեցինք, մի ծանօթի պահ տուինք, մենք ետ
ճամբայ ընկանք դէպի մեր տները:

Գիտեմ ոչ Շորագեալ եղե՞լ էք թէ չէ, Հոռոմ
անուանով մի գեղ կայ. էդ գեղիցը դուրս ենք եկել,
գալիս ենք դէպի Արթիկ: Եկանք, ճամբին մուտն
ընկաւ: Ծնկնահար ձիւն, ցուրտն էլ հօ թրի նման
մարդի երես է կտրատում: Ըամբէն էլ լաւ չգի-
տենք: Գնա թէ պէտք է հասնես Արթիկ:

Էս մեր Գաւիթն առաջին էր գնում: Մին էլ
թէ՛ տղէ՛ք, եկէ՛ք, գեղը գտել եմ:

— Ա՛յ տղայ, ս՞ըր է:

— Թէ՛ հրէն ճրագները երեւում են:

Մտիկ տանք տեսնենք, ճշմարիտ որ հեւում
շատ ճրագներ են երեւում: Միայն ես նկատում եմ,
որ էս ճրագները ժաժ են գալի, դէս դէն են գնում:

Ասի՛ տղէ՛ք:

Թէ՛ ի՛նչ է:

Ասի՛ էս գեղ չի, Մին, որ ձմեռը սրանց գեղե-
րի տների դուռն ու կտուրը փակ, ճրագները չեն
երեւալ, մին էլ որ էս ճրագները որ տեսնում էք,
ման են գալի:

Թէ՛ բա էս ի՞նչ են:

Ասի՛ գէլեր են: Գէլի բոլուկի բերան ենք ըն-
կել, պատրաստուեցէք, ես լսել եմ, որ զուռնի ձէ-
նին՝ գէլը — էլ վախենո՞ւմ է թէ ինչ — մօտ չի
գալի: Զուռնա դհուրը սարքեցէք: Էս խօսքումն ենք,
տեսանք՝ ճրագները մօտենում են, միտնումը, ձիւ-
նոտ դաշտում դէս ու դէն վազում են, ցրւում են,

ուղում են մեզ շրջապատեն: Էնքան են, էնքան են, որ էլ հաշիւ չկայ:

Ես ու Ակորը զուռնէն զլեցինք, էս Դաւիթն էլ գնալը, գըմք հա գըմք, կէս գիշերին, էս վերանայ դաշտում ածում ենք: Զուռնա գնալի ձէնը վեր էլաթէ չէ, էս գէլերը ոնց որ տեղն, ու տեղը մեխես, մնացին իրենց տեղերը մեխուած:

Մին էլ ոռնոց վեր քաշեցին, Տէր Աստուած, ինչ ոռնոց: Զուռնի հետ ձէն ձէնի են տուել, ոռնում են:

— Վայ ծիծաղ, — էս ու էն կողմից բացազանչեցին գիւղացիք: — Ուստա՛ Սարգիս, լաւ է՝ ծիծաղներդ գալիս չէր:

— Ա՛յ տղայ, ինչ ծիծաղ կը գար, սիրտներս սեւացել էր. դանակ տայիր՝ արիւն չէր կաթիլ:

— Յետո՞յ, յետո՞յ...

— Յետոյ մենք համբայ ընկանք, սրանք էլ մեզ հետ: Մենք ածելով գալիս ենք, սրանք էլ չորս կողմերս կարած: հետու մթնոսմը ցինգիր-ցինգիր անելով գալիս են: Կարծես պար են գալիս: Իլուխներդ ինչ ցաւեցնեմ, էսպէս դնալով գիշերուայ մի ժամանակը առաջներս մի շան հաջոցի ձէն լսեցինք հետու: էս հաջոցի վրայ մի քանի շներ սկսեցին հաջել ու ոռնալ, ու մին էլ տեսնենք՝ մօտիկ գեղի ճրագները դուռը դուրս եկան: Մարդկանց ձէները հասնում են մեզ:

Ուրախութիւնից զուռնա գնալի ձէնն աւելի զլեցինք:

Բա՛ն գեղին մօտենում ենք, գէլերը ետ են ընկնում: Վերջապէս հասանք գեղին: սրանք ետ դանան, կորան:

Գեղացիք ճրագներով, աղմուկով առաջ եկան,

մնացին զարմացած: Տեսնում են՝ երկու զուռնաչի
ու մի գհուլչի ածելով գալիս են ու հետները հար-
սանքաւոր չկայ:

— Ա՛յ ուստէք, բա հարսանքաւորները վոր-
տեղ են:

Ասում ենք՝ հարսանքաւորները ետ դառան գհու-
ցին: Չուղեցին ձեր գեղը մտնեն:

— Էդ ո՞վ էին որ...

— Գէլերը...

— Ո՞նց թէ գէլերը...

— Ախպէ՛ր, տսինք, պատմելու ժամանակը չի,
ցրտատար էլանք, մեռնում ենք, մեզ մի տաք տուն
տարէք, էնտեղ կը պատմենք:

Տարան մի տաք օտա, բուխարին թէժ արին,
հացը դրին առաջներս, գլխներիս հաւաքուեցին էս-
պէս, ինչպէս որ մենք հաւաքուել ենք, ու սկսե-
ցինք պատմել: Պատմում ենք ու ծիծաղում, պատ-
մում ենք ու ծիծաղում:

Վերջն էլ իմանանք, որ էն գեղը չենք եկել,
որտեղ գալիս էինք: Ճամբէն կորցրել ենք, ընկել
ենք Պարանի գեղ:

— Ի՞նչ է կրակն ու զուռնէն էք ասում, բայց
գէլը մի քանից էլ է վախենում, թէ իմանաք ըն-
չի՞ց, — հարց տուեց օտարականը:

— Թոկից, — ձէն տուին մի քանիսը:

— Ո՞նց թէ Թոկից, — զարմացան չգիտցողները:

— Հա՛, ճշմարիտ է, Թոկը, որ... ետեւիցդ քաշ
տաս՝ գէլը կը վախենայ, մօտ չի գալ, — հաստատեց
քեռի Անդրիասը:

— Այ տղայ, թողն ի՞նչ է, որ գէլը թողից վախենայ:

— Ա՞յլ գիտի, օձի տե՞ղ է գնում ինչ է, ի՞նչ իմանաս:

— Ա՛ր գեղումը Եղօ անու՛նով մի ջանէլ մարդ կար, — պատմեց Շորագեալցին: — Մի շատ սրտոտ ու քաջ մարդ: Երեսին որ թուր բռնէիր՝ երեսը ետ չէր թեքիլ: Ինքն էլ թրի-թվանքի հետ խաղացող մարդ էր:

Արանից մի 4-5 տարի առաջ, մի ձմեռ գործով գնում է մեր հարեւան գիւղերը, ու մի քանի օր ուշանում: Մի ելեխայ ունէր, շատ էր սիրում: Մի իրիկուն լուր է առնում, թէ բա՛ երեխէդ հիւանդ է, քել է ուզում: Վեր է կենում, թէ՛ պէտք է գնամ: Սրա առաջն են ընկնում, բռնում են, համողում են, թէ մութը գիշեր, հազար ու մի չար ու փորձանք, հազար ու մի գէլ ու գաղան, սպասիր՝ տսում են, գիշերը լուս ունի, կը լուսանայ՝ կը գնաս երեխիդ կը տեսնես: Սա պըպին է կանգնում, թէ՛ չէ ու չէ: հենց էս կէս գիշերին պէտք է գնամ, թուրը վրէս, ձին տակիս, ի՞նչ պէտք է պատանի: Ինսանի թարսութի՛ւն էլի: Չեն կարում յաղթեն: կէս գիշերին ձի է նստում, ճամբայ ընկնում: Կիսաճամբին գէլի բոլուկը սրան շրջապատում է: Ի՛նչ մի ասիլ հետը թող ունի, ինքն էլ փորձուած, բանգէտ մարդ է: Թողը երկար բաց է թողնում ու ձիու ետեւից քաշ տալիս: Գէլերն էլ մօտ չեն գալիս, երկու կողմից թողին մտիկ տալով վազ են տալիս: Էսպէս բաւական տեղ անց է կենում: Մի տեղ էլ, ո՞նց է լինում, ի՞նչ է լինում, թողի ծէրը ձեռքիցը դուրս է պրծնում ու վեր է ընկնում: Սա ձին քշում է: Մի քիչ տեղ գնում է:

գէլերը վրայ են տալիս: Թուրը հանում է հենց ա-
ռաջին հասնողին տալիս... Իէ՛, գէլերի սովորու-
թիւնն էլ: գիտէք էլի: մինը թէ վիրաւորուեց,
միւսները նրա վրայ կը թափուեն, կ'ուտեն: Էդ-
պէս էլ ձիաւորին թող են անում, վրայ են թափ-
ւում: Էս վիրաւորուածին: Եղոն ձիուն մտրակում
է: քշում, բաւական տեղ քշած գնում է: Իէլերը
վիրաւորուածին լափում են պրծնում, յետոյ նորից
ընկնում սրա ետեւից: Սա էլի ուզում է թուրը
հանի, որ զարկի. քաշում է քաշում, դուրս չի գա-
լի: Տեսնում է հասնում են իրեն, հերսից պատ-
եանն ատամով կրծոտում է, ինչ անում է չի ա-
նում: Թուրը ձուրս չի գալի: Ինչ մի ասի՝ գէլին
որ զարկել է, առանց արիւնը սրբելու տեղն է դրել,
արիւնոտ թուրը կպել է պատեանին, ամբացել:

էլ ի՞նչ երկարացնեմ, գէլերը վրայ են տալի,
իրեն էլ ուտում, ձիուն էլ:

Միւս օրը լուրն ընկաւ, գնացինք տեսանք ար-
նոտ ձիւնի վրայ իր ոսկորներն էլ, ձիունն էլ, թու-
րըն էլ, պատառոտած շորերն էլ թափուած, ցրուած
դէս ու դէն:

— Ինչ էն մարդին, որ գէլերը կերել էին, ձեզ
էդ բոլորն ո՞վ պատմեց. — հարցրեց մի գիւղացի:

— Հապա մարդուս խելքն ու փորձն ընչի՞ հա-
մար են, — պատասխանեց պատմողը: Ինացինք տե-
սանք՝ ձիւնի պարզ հետքերը երեւում են, ո՛ր կող-
մից է եկել ու ո՛րտեղ է շրջապատել գէլի բոլորակը,
ո՛րտեղից է եղոն սկսել թոկը քաշ տալ, մինչեւ
ո՛րտեղ է քաշ տուել, ո՛րտեղ է ձեռիցն ընկել: Մի
քիչ էլ գնացած է ու հետքերն իրար են խառնուած,
ասկն ու վրայ են եղած, ու թափուած են գէլի
բուրդն ու ոսկորները: Նրանցից բաւական հեռու էլ

իրեն ու ձիուն են կերել, թուրն էլ բերինք, տեսանք
պատեանը մարդու ատամներով կրծատած, ֆաշե-
ցինք, քաշեցինք, չկարացինք դուրս քաշել, տուինք
վարպետին, քանդեց, հանեց, տեսնենք արիւնտա,
կպած պատեանին:

— Ափսո՛ս մարդ, — էս ու էն կողմից ափսոսա-
ցին գիւղացիք, — Ա՛յ թէ ընչի համար են ասել,
թէ համբերու թիւնը կեանք է, Ասա՛, հէր օրհնածի՛
մարդ, մի քիչ համբերի լուսանայ էլի...

— Տղէ՛ք, հաւատա գէլիցն էլ վերը վառակար
գաղան չլինի, դուք ի՞նչ էք ասում, — խօսեց մի
գիւղացի էս պատմութիւնից յետոյ:

— Էդպէս էլ իմացած կենար, որ չի լինիլ, —
հաստատեց քեռի Անդրիասը ու դիմեց ինձ.

— Դու ի՞նչ կարծիքի ես, պարո՛ն:

— Ես էլ էդ կարծիքին եմ, — պատասխանեցի
ես: — Արդէն գրքերից էլ յայտնի է, որ ո՛չ մի գա-
ղան գէլի չա՛ի վատ չի տալիս մարդուն: Մանա-
ւանդ էն երկրներում, որտեղ գլխաւորապէս անաս-
նապահութեամբ են պարապում: Ամէն մի տէրու-
թեան մէջ էլ ահագին վատ է տալիս: Միայն Ռու-
սաստան տարեկան մէկ միլիոն անասուն է փձացնում:

— Հապա ի՞նչպէս է, որ տէրութիւնները դրա
համար չեն մտածում, մի ճար անում, — խօսքս
կարեց մի գիւղացի:

— Ի՞նչպէս չեն մտածում: Տէրութիւններ կան,
որ տանձին վարձատրութիւն են տալիս գէլ սպա-
նողներին: Կանոնաւոր կռում են գէլի դէմ: Իրա
համար էլ էնպէս տէրութիւններ կան, որ մէջներն

էլ գէլ չկայ, օրինակ Անգլիան, Գերմանիան...

— Վա՛հ, — դարձանքից բացազանչեցին գլուղացիք: — Ո՞նց թէ... հիմի էդ երկրներում էլ գէլ չկա՞յ:

— Չկայ:

— Ա՛յ երկիր... ապրանքդ ազատ բաց թող ու հանդիստ գնա քու դարձին...

— Էնպէս տէրութիւն էլ կայ, — շարունակեցի ես, — որ հաշուով գիտեն, թէ քանի՛ գէլ կայ իրենց երկրում, չո՞րսը թէ հինգ...

— Էդ ի՞նչ բան է, — աւելի դարձացան գլուղացիները, — մեզանում իսկի մարդի հաշիւը գիտենք ոչ, նրանք գէլն էլ են հաշուել:

— Որ ասում ես գէլը վերջացնում են, ի՞նչպէս են անում, վարժապետ, — հարցրեց մի ծերունի, որին Սահակ էին ասում:

— Զանազան միջոցներով, բիձա՛ Սահակ, ինչպէս ասի՝ տէրութիւններն առանձին վարձատրութիւն կամ պարգեւ են տալիս ամէն մի սպանուած գէլի համար, որսկաններն էլ աշխատում են շատ գէլ սպանեն, որ շատ փող ստանան: Մի՛նչեւ անգամ կազմակերպուած ընկերութիւններ կան, որ միայն գէլի որսի համար են: Էնպէս երկիր էլ կայ, օրինակ Սպանիան, ուր եթէ տէրութիւնը չի վարձատրում գէլ սպանողին, ժողովուրդն է վարձատրում: Սպանողը գէլը գցում է էշի կամ ձիու վրայ ու գեղէ գեղ ման անում, ապրանքատէրերից փող է հաւաքում: Եւ ամէնքն էլ ուրախութեամբ տալիս են:

— Չէ՛, ես էդ չէի հարցնում, պարո՛ն ջան, ես էն էի հարցնում, թէ ընչո՞վ են սպանում, ի՞նչպէս են կոտորում:

— Հա՛, էդ ես հարցնում: Ասեմ, բիձա՛ Սահակ, էդ էլ ասեմ:

«Ի հարկէ, հրացանով սպանելն ու թակարդով բռնելը արդէն դուք էլ գիտէք: Բացի հրացանն ու թակարդը, էնպէս տեղեր էլ կան, ուր խորը փոսեր են փորում, օրինակ մի սափէն ու կէս խորութեամբ, մի սափէն էլ լայնութեամբ: Երեսը ցախ ու մախով ծածկում են, վրէն միս են դնում, չորս կողմն էլ դեռ ցած ցանկապատում, որ գէլը թռչի, յանկարծ ընկնի մէջը: Արանով, ի հարկէ, չի կարելի շատ բան անել:

«Էնպէս տեղ էլ կայ, որ ամբողջ հասարակութիւններով հաւաքւում են, գնում են շրջապատում անտառի որոշ մասերը: Արտկանները հրացանները ձեռքերնին պատրաստի երեք կողմը կտրում են, իսկ չորրորդ կողմից մի բազմութիւն անտառն է մտնում ու հրացան արձակելով, հարայ-հրացով, շունով-բանով գաղաններին քշում, բերում գցում որսկանների բերանը: Էս էլ անտառատ տեղերն է լինում, ու էս միջոցն էլ չի մեծ արդիւնք տալիս: Պատահում է, որ ահագին աղմուկից յետոյ մէջտեղ մի կամ երկու նապաստակ են յայտնւում, կամ պատահում է, որ դուրս եկող գաղաններն անմնաս էլ փախչում, ազատւում են: Շատ քիչ են սպանւում:

«Ուսաստանի ձիւնոտ դաշտերումն էլ մի ուրիշ տեսակ որս են անում: Ձիով ընկնում են գէլի ետեւից: Օճակահար ձիւնի մէջ թաղուելով գէլը զօնով է վազում և շուտ էլ յոգնում է: Ետեւիցը հասնում են՝ հենց տեղն ու տեղը գապանակով սպանում: Բայց աւելի շատ գէլին կոտորում են թոյնով: Սատկած ոչխարը մաշկում են, միսը շերտ-շերտ կտրատում, արանքները թոյն են լցնում, յետոյ նորից մորթին վրէն քաշում ու տանում գիշերը հանդերում վեր գցում: Սոված գէլեր գալիս են, ուտում ու տեղն ու տեղը կոտորւում:

9
— Վարժապե՛տ, ճշմարիտ է, գէլը գաղան է ու մարդուն էլ շատ է մնաս տալիս. միայն էդ որ պատմեցիր, ախպէր, ի՛նչ թաքցնեմ, մեղքս եկաւ, — խօսեց ծերունի Սահակը:

— Յետոյ գէլին մեղք կը գա՞ն որ, Սահա՛կ բիձա, — ձէն տուեց մի հովիւ:

— Ընչի՞, գէլը շունչ կենդանի չի՞, — սկսեց վիճել Սահակ բիձէն:

— Գէլն ի՞նչ է որ, մեր շան պէս անասուն էլի՛, — խօսքն առաւ քեռի Անդրիասը: Ուղիղ շան պէս: Որ էն շունն էլ չոլերը գցես, անտէր սոված թողնես, հալածես, կը վայրենանայ, կը դառնայ գէլի պէս մի բան էլի՛: Ինչպէս որ էն սոված, վայրենի գէլն որ բերես կուշտ պահես, պահպանես, կ'ընտելանայ, կը դառնայ մեր շան պէս տանու կենդանի:

— Յետոյ գէլը տանու կը լինի՞ որ, քեռի՛ Անդրիաս:

— Լա՛ւ: Ծատ է պատահել: Գէլի ճուտը բռնի, բեր տանու արա, տես կը լինի՞ թէ չէ:

— Հապա ինչո՞ւ է տսած: գէլն ինչքան էլ տանու անես, էլի աչքն անտառումը կը լինի:

— Էդ էլ է ճշմարիտ: Մի սերնդի, երկու սերունդի աչքն անտառումը կը լինի, բայց կամաց-կամաց անտառը կը մոռանայ, կը դառնայ տանու կենդանի՝ շան նման: Եւ հենց ինքն էլ շան ցեղից է էլի՛: Գէլն էլ կազմուած է էնպէս, ինչպէս շունը: Գէլն էլ շան պէս տարին մի անգամ 3-10, բայց սովորաբար 4-6 ձագ է ծնում, ու ինչպէս շունն իրեն համար բուն է փորում, կամ մի անկիւն է գտնում

և էնտեղ ծնում և մեծացնում ձագերը, էնպէս էլ գէլը: Կա՛մ գետնում բուն է փորում, էնտեղ ծնում ու մեծացնում: Իր ձագերը, կա՛մ ընկած ծառի փշակում, կա՛մ անտառում, կա՛մ հենց ծմակի խիտ տեղերը: Նա էլ է էնպէս սիրում իր ձագերին, ինչպէ՛ս ամէն մի ծնող կենդանի: Այն վտանգի հոտ առնելիս, բերանով շատ զգոյշ ու քնքուշ իրենց տեղից տանում է աւելի ապահով տեղ: Աւերաբ իր բնի մօտերքում որս չի անիլ: Անաս չի սալ: Եւ կասկած չբերի էդ տեղի վրայ:

«Գէլի էգն էլ, ինչպէս շանը, աւելի քնքուշ է, ցունչն աւելի սուր, ու ցոյն աւելի բարակ: Գէլն էլ պատահում է, որ նոյնպէս կատաղում է: Ինչպէս շունը, Աւ կատաղած գէլից շատ են վախենում, ու սարսափով հեռու են փախչում բոլոր վայրենի կենդանիները:

«Վերջապէս գէլն էլ շան պէս 12-15 տարի է ապրում: Աւելի երկար շատ քչերն են ապրում: Ինչպէս և շների մէջ:

«Մի խօսքով միեւնոյն կենդանիներն են, մինը խնամքի տակ ու կուշտ, միւսը վայրենի, հալածուած ու սոված: Իսկ սովը... Սուք ի՛նչ ասես՝ կ'անի, ձեզ մատաղ: Սովը մարդին էլ կը դարձնի սարսափելի: Ո՛ւր մնաց էն անտառի գէլին. — խօսքը վերջացրեց քեռի Անդրիասը:

— Ծշմարիտ ես ասում, քեռի՛ Անդրիաս, — ասացի ես: Մեզանում սովորութիւն չկայ, միայն յուսաւոր երկրներում շատ է պատահում, որ մարդիկ վայրենի անասուններին ու գաղաններին բռնում են, բերում են տանու սննն, փորձում են, վարժեցրնում են, բան են սովորեցնում: Մինը երկու գէլի ձուտ էր բռնել, բերել տանը պահել, կարճ ժա-

մանակում էնքան էին ընտանիացել, որ ազատ տան
մէջ ամէնքի հետ էլ խաղ էին անում ու շան հետ մի-
ասին միեւնոյն բնումը քնում։ Մի քանի ժամանակից
յետոյ մինը սաակում է։ Ասում է՝ մենակ մնացածը
քանի ժամանակ էր էլ ո՛չ խաղ էր անում, ո՛չ կարգին
կերակուր էր ուտում։ Տխուր վեր ընկած դարդ էր
անում ու ունում։ Ի հարկէ հեռոհետէ մտապաւ աւ-
աշխուժացաւ։ Մեծացաւ ու, ասում է, մեզ հետ էն-
քան էր կապուել, որ որտեղ նստում էինք, միշտ
կողքներին վեր էր ընկնում, և ուրիշներին չէր թող-
նում, որ մեզ մօտենան։ Ասում է՝ վախեցինք մար-
դաւ մնաս տայ, շղթայով կապեցինք, իսկ մի քանի
ժամանակից յետոյ մի շրջիկ գազանանոցի վրայ
ծախեցինք։ Անցաւ դրանից մի տարի ու կէս թէ
երկու տարի, լաւ չի միտս, էդ գազանանոցին
պատահեցի մի քաղաքում։ Հետաքրքրուեցի, ներս
մտայ, ասի տեսնեմ իմ գէլը կենդանի՞ է թէ չէ։
Ներս մտայ հարցրի։ Ինչ մի ասիլ, գէլը մօտիկ
վանդակում պառկած է եղել։ Ձէնս իմացաւ թէ չէ՝
վեր թռաւ, ճանաչեց, ուրախացաւ ու ի՞նչ էր ա-
նում, ի՞նչ էր անում, չէք կարող երեւակայել։ Աշ-
խատում էր ինձ մօտենալ, պոչը շարժելով, ծմը-
րալով դէս ու դէն էր ընկնում վանդակում։ Ինձ էլ
թուաց, թէ մի մօտիկ, հարազատ արարածի հան-
դիպեցի, և դուրս գալիս մի տեսակ ցաւ զգացի։

Ի՞նչ կ'ասէք սրան։ Ահա պատահած դէպքը։ Աւ-
ճշմարիտ է ասում քեռի Անդրիասը. գէլն էլ շան
պէս մի արարած է, միայն վայրենի, հալածուած ու
սոված։

Արդէն գիշերուայ կէսն էր, որ մեր զբոյցը վեր-
ջացրինք։ Եները դուրսը հաջում ու երկար ու ձիգ
ոռնում էին։

— Անտէրը գեղի վրայ պախա է գալիս. հեռա-
նում չի, Հանգստանալու չի, մինչեւ էս գիշեր մի
վկաս չաայ, Տղէ՛ք, զգոյշ կացէ՛ք, ապրանք չտաք
ուխը, — ասաւ քեռի Անդրիասը գիւղացիներին, որ
քարի գիշեր ասելով իրար ետեւից դուրս էին գնում
մեր օթախից, Դուրսը նրանցից մինը երկար ու գիւ
հէ՛յ-հէ՛յ աղաղակեց, ու գիւղի շները հեռու թաղե-
րից անելի կատաղի սկսեցին հաջել ու ոռնալ խըմ-
բովին:

Ասլած գէլը պտըտում էր գիւղի չորս կողմը:

ՇՈՒՆԸ

Մի երկու խօսք

Դաւ չեմ յիշում՝ երկրո՞րդ թէ երբորդ դասարա-
նի աշակերտ էի: Մի ուսումնական ծանօթ ունէինք,
օտար մարդ էր, մի-մին մեր տունն էր գալիս, մե-
րոնց հետ զրոյց էր անում:

Էդ ժամանակները մի էսպէս դէպք պատահեց:
Մեր հարեւան հովիւը մեռաւ: Նա երեք շուն ունէր,
էս երեք շունը, իրենց տիրոջ մեռնելուց մի քանի
օր առաջ, անդադար ունում էին էնքան ողբալի ու

չարագուշակ, որ ան ու սարսափ էին գցել ամէնքի սիրտը:

— Չո՞ւ, չո՞ւ ձեր գլուխն ուտէք, քանի ունայք. — կանչում էր երիտասարդ հովուի մէրն ու փէտով զարկում շներին: Շները կլանչկլանչելով էս կողմ, էն կողմն էին փախչում ու մի քանի րոպէից յետոյ նորից սկսում ոռնալ: Հովիւը մեռաւ թէ չէ՝ լուրը հարեւանները բացազանչեցին:

— Ա՛յ, ընչի համար էին շները ոռնում...

Սրանից յետոյ մի անգամ էլ, երբ մեր ուսումնական ծանօթն եկել էր զրոյց անելու, մերոնք էս դէպքը պատմեցին ու խօսքն ընկաւ շան վրայ:

— Օ՛, չգիտէք թէ ի՞նչ տեսակ կենդանի է շունը. — լուրջ ու խորհրդաւոր խօսեց նա:

— Շունը իմաստուն կենդանի է, — նայն լըրջութեամբ վրայ բերեց հէրս:

— Այո՛, շունը իմաստուն կենդանի է, լաւ է նկատել ժողովուրդը, — ասաւ մեր ծանօթն ու աւելացրեց:

— Մարդկային կեանքի զարգացումը շան վրայ է հիմնուած: Մենք դեռ լաւ չգիտենք, թէ ի՞նչ կենդանի է շունը, դեռ լաւ չի ուսումնասիրուած շունը:

Հակասակի նման իմ դասն էլ շունն էր ու լաւ էլ անգիր էի արել: Իսկոյն մէջ մտայ: Ասի. — Ես գիտեմ: Մենք շունը սովորել ենք:

— Չէ՛, էն քո սովորածը շուն չի, — մեղմ ու բարի ժպտալով նկատեց մեր բարեկամը:

Ես վիրաւորուեցի: Ո՞նց թէ իմ սովորածը շուն չի... Ինքն ասում է՝ լաւ չգիտենք, իսկ մեր ուսուցիչն էնտեղ, իմ տեսրակն էնտեղ... Ես էլ գրեթէ անգիր գիտեմ... և առանց լսելու ասում է՝ քո սովորածը շունը չի...

— Հա՛ւ, Հա՛ւ, նեղանայ մի, դէ՛, ասա տես-
նենք, ո՞րն է քո սովորած շուներ, — նոյն մեղմ
ժպիտով հարցրեց նա ու թեւ իցս բռնեց, իրեն մօտ
քաշեց:

— Ես սկսեցի...
«Շուներ չորքոտանի, կաթնասուռն, մսակեր, ըն-
տանի կենդանի է: Նա ունի մի գլուխ, երկու աչք, մի
քիթ, մի պոչ, երեսուներկու ստամ: Նրա մորթին
ծածկուած է մազով: Նա ծնում է սովորաբար 4-6 ձագ,
բայց պատահում է, յոր մինչև 12 էլ է ծնում: Շան
ձագերը ծնւում են առաջին ատամներով, բայց կոյր
են լինում և միայն 10-12 օրից յետոյ են աչքները
բաց անում: Շուներ ապրում է 15-20 տարի: Նա
մարդուն շատ օգուտ է տալիս...»

Մեր ծանօթը շարունակ ժպտում էր: Ես սկսեցի
շփոթուել, մանաւանդ գիտեցածս էլ հատում էր:

— Այո՛, այո՛, ճիշդ ես ասում, սիրելիս, —
վրայ հասա նա: — Դասդ լաւ ես սովորել, բայց
էդ շուներ չի:

— Ո՞նց թէ էս շուներ չի: Հապա էլ ո՞րն է շու-
ներ... Իսկ հիմի մեր վարժապետիցը լա՞ւ գիտէք...

— Սո՛ւս, — բարկացաւ վրէս հէրս:

— Հա՛, սո՛ւս... իրենք չգիտեն ու՛ սո՛ւս...

Եւ յիշում եմ՝ էն օրը բաւականին անհամու թիւն
արի, մինչև որ վերջապէս ինձ լսեցրին: Այնինչ
մեր ծանօթը շարունակ ժպտում էր:

Վաղուցուայ խօսք եմ ասում: մեր էն բարի
ուսումնական ծանօթն էլ վաղուց է մեռել: Նրա-
նից յետոյ ես մեծացայ, զանազան գրքեր կարդացի,
նոր-նոր բաներ իմացայ ու սովորեցի: Ու ինչքան
սովորեցի՝ էնքան էլ տեսայ, որ ես շատ ու շատ
քիչ բան գիտեմ: Շան մասին էլ կարդացի: Հա՛մ

կարողացի, համ լսեցի, համ կեանքում տեսայ, և
 աճա էդ բոլորից յետոյ հիմի գրում եմ շան մասին:
 Բայց համ գրում եմ, համ մտածում, թէ ո՞վ գի-
 տի, դեռ ի՞նչ քան քան կայ, որ ես չգիտեմ:

Այժմ առանձին սիրով եմ յիշում մեր հին ծա-
 ոթիկն, ու տեսնում եմ էն, ինչ որ ինձ ու իմ ըն-
 կերներին սովորեցրել էին, իսկի շունը չէր: Շունը
 շատ աւելի մեծ քան է եղել, քան թէ ես էի կար-
 ծում այն ժամանակ, և դեռ ո՞վ գիտի, մեզանից
 յետոյ էլ գիտութիւնն ինչե՞ր է քաց անելու:

1

Գիտութիւնը դեռ չի կարողացել որոշի, թէ ո՞ր
 ժամանակից է շունը մարդուն ընկերացել, միայն
 կարծիք կայ, որ ձեռնասուն կենդանիներին մ ջ շու-
 նը մարդու ամենահին ընկերն է:

Բրիտանական թիւնից առաջ եղած հին կրօններն
 իրենց հոգեւոր երգերի մէջ փառաբանում էին շան
 հաւատարմութիւնն ու մարդուն արած ծառայու-
 թիւնները:

Ասորական ու բաբելական պաշտոնների վրայ
 քանդակած են ասորական և բաբելական թագաւոր-
 ներն իրենց որսի շների հետ:

Նրանից էլ դէնը, Բրիտանացի հինգ հազար տարի
 առաջ եգիպտական հին յիշատակարանների վրայ
 դանդաղան տեսակ շների պատկերներ կան փորա-
 գրուած:

Նրանից էլ դէնը գնանք, նախապատմական ժա-
 մանակների, քարէ շրջանի մարդկային բնակարան-

ների շուրջը գտնուած մնացորդների մէջ շան սակարներ են գտնուում :

Նրանից էլ աւելի խորը գնանք, արդէն մարդը ինքը վայրենի է, Ճշմարիտ է, էսօր էլ կան աշխարհի զանազան մասերում վայրենի ցեղեր, բայց մի ժամանակ, շատ հազար տարի առաջ, մարդը վայրենի է եղել ամէն տեղ :

Նայած թէ ս'րտեղ է գտնուել վայրենի մարդը, բաց լեռներում թէ խոր անտառներում, պետափոներին ու ծովափներին թէ լերի ընդարձակ տափաստաններում, ամէն տեղ էլ յարմարուել է իրեն շրջապատող պայմաններին, կերել է ինչ որ կարողացել է ճանկել, — վայրենի պտուղներ ու բոյսեր, սերմահատիկներ ու արմաթիքներ, կամ թէ չէ քարով կամ նիզակով որս է արել, հում որսի միս է կերել, Բայց երաշտ կայ, ցուրտ կայ, կարկուտ կայ, մորեխ կայ, պատահում է, որ բուսեղէնն ու պտուղը փճանում են, վերջապէս ձմեռ կայ, ձմեռը հօ արդէն վերջանում են, կենդանի որսալն էլ հեշտ բան չի, որսը ամէն անգամ ձեռ չի ընկնում, Սև ահա յայտնուում է սովը, Իսկ մենք լաւ ենք իմանում ի՞նչ բան է սովը: Սովը մեր լուսաւոր դարում ու ամենաքաղաքակիրթ երկրներում էլ ստիպում է մարդուն ուրիշ ամէն բան, մինչեւ անգամ մարդումիս ուտել, նոյնիսկ իրեն մօտիկների միսն ուտել: Հենց մեր մօտիկ ժամանակներում ամէն մի ժողովրդի պատմութեան մէջ էդ տեսակ դէպքեր շատ են եղել: Սև եթէ մեր ժամանակներում յուսաւոր ժողովուրդների մէջ մարդը կարող է մարդ ուտի, էն խոր ու խաւար ժամանակներում հօ կ'ուտէր ու կ'ուտէր: Սև էն ժամանակները մարդակերութիւնը ընդունուած սովորութիւն էր: Մարդը

ինչպէս որ գնում էր մի որեւէ կենդանի որսալու, որ բերի ուտի, էնպէս էլ գնում էր մարդ որոնում, բերում ուտում, կամ մարդսիւս էր ահում, մատաղ էր անում իր կուռքի առջեւ: Մի խօսքով՝ ճիշդ էնպէս, ինչպէս էսօր մեղանում սովորութիւն է անասունի միս ենք ուտում կամ անասունը մատաղ ենք անում մեր խաչերի ու սուրբերի առջեւ:

Էնպէս էլ մարդկութեան սովորութիւնը շարունակուեց երկար ժամանակ, մինչեւ որ մարդը ընկերացու շան հետ՝ Շան հետ ընկերանալով՝ մարդը նրա հետ միասին որս էր անում, էնպէս՝ ինչպէս էսօր էլ երկու գիշաակն գաղաններ իրար երբեմն օգնում են մի որեւէ կենդանի բռնելու կամ ժայռից գցելու, բայց գլխաւորը որսը չէր: Գլխաւորն էն է, որ շանը ձեռնասուն անելուց, տանու անելուց յետոյ, գամփռ ունենալուց յետոյ, մարդը կարողացաւ հօտու նախիր կազմել: Հօտ ու նախիր կազմելուց յետոյ ունեցաւ ե՛ւ պատրաստի միս, ե՛ւ կաթնեղէն, ե՛ւ հագուստի ու այլ գործուածքների համար բուրդ ու կաշի, ապա նաև վար ու ցանք անելու, ծանրութիւններ տեղափոխելու լծկան: Նրանից յետոյ էլ կարողացաւ ճապահով ապրուստ ունենալ, հանգիստ ապրել, պարապել խաշնախաժութեամբ, երկրագործութեամբ, վանաղան արհեստներով ու արուեստներով, սկսեց իր շուրջը գիտել, ուսումնասիրել, վարդանալ ու բարձրանալ, ստեղծել գիտութիւններ ու գրականութիւններ:

Մին էլ ետ նայեց, տեսաւ՝ վաղուց է մարդակերութեան սովորութիւնը վերացել, էն օրուանից, ինչ օրուանից շան օգնութեամբ հօտ էր կազմել ու ստեղծել պատրաստի ապրուստ:

Թի՛ շունն է մարդակերութեան վերանալու և

մարդկային կեանքի զարգացման գլխաւոր պատճառը, դրա համար էլ էսօր աշխարհքը լիքն է ապացոյցներով: Արեւելքն է շան հայրենիքը, Արեւելքն էլ համարում է մարդկային ցեղի լուսաւորութեան, քաղաքակրթութեան հայրենիքը, սրովհետեւ Արեւելքի ազգերն անյիշելի ժամանակներից ի վեր շուն են ունեցել, հօտ և նախիր են կազմել, պարապել են խաշնարածութիւնով, երկրագործութիւնով ու արհեստներով և զարգացել, եւ հետք ու յիշատակութիւն չկայ, թէ Արեւելքի խաշնարած ժողովուրդների մէջ երբ և իցէ եղած լինի մարդակերութեան սովորութիւնը: Էսպէս էլ բոլոր էն երկրներում, որտեղ շունը վաղ է մարդուն ընտելացել, էն բոլոր տեղերը մարդակերութիւն չկայ: Իսկ ընդհակառակն էն երկրներում, որտեղ շուն չկայ, ինչքան էլ թէկուզ լիքն ու բարելի երկրներ լինեն, էս երկրներում մինչեւ էսօր էլ շարունակում է մարդակերութիւնը: Օրինակ՝ հիւսիսային մշտական ձիւնի ու սառնամանիքի մէջ ապրող լուպարները (լապլանդացիք), ստեակներն ու սամոյեդները չգիտէին, թէ ի՛նչ բան է մարդակերութիւնը, սրովհետեւ շուն են ունեցել, եղջերուների հօտեր են կազմել ու միշտ պատրաստի ապրուստ են ունեցել: Իսկ միջօրէականի կլիմայի տակ գտնուող Բորնէոյի, Յելեքէսի և Տիմորի կղզիների նման տաք ու բարելի երկրներում, որտեղ շուն չի եղել ու չկայ, մնացել են մարդակեր:

Գիտութիւնը մինչեւ էսօր դեռ չի կարողացել հաստատ սրոշի և շան ծագումը: Ոմանք ասում են՝ տանու շունը առաջ է եկել մի վայրենի տեսակից, որ այժմ անհետացած է, ոմանք ասում են՝ գէլից է առաջ եկել, ոմանք ասում են՝ շնագէլից, ոմանք

էլ՝ աղուէսից: Գիտնականներ էլ կան, որ ասում են ե՛ւ գէլից է առաջ եկել, ե՛ւ շնագէլից, ե՛ւ մարդագէլից, ե՛ւ աղուէսից, դրա համար էլ շուն կայ: որ գէլի է նման, շուն կայ՝ շնագէլի, շուն կայ՝ մարդագէլի, շուն կայ՝ աղուէսի, և հասցնում են մինչև սկզբնական եօթը տեսակի, որոնք էլ շան անունով ընդհանրապէս կոչւում են շան ցեղ:

Ասում են էդ եօթը տեսակից էլ յետոյ, տարբեր կլիմաների, տարբեր կուլտուրաների ու խառնուրդների ազդեցութեան տակ առաջ են եկել եղած բազմազան տեսակները, որ հասնում են մինչև իննըսունի և ցրուած են ամբողջ աշխարհքում, բացի մեծ Անտիլեան կղզիներից (կուբա, Հայիթի կամ Ս. Դոմինո, Եամայիկա, Պորտո-Ռիկո և այլն), Մադակասկարից, Նոր Զելանդիայից, Բորնէոյից, Տեւերէսից, Տիմորից և Աւստրալիայից: Այժմարիտ է Աւստրալիայում մի տեսակ շուն կայ, որ կոչւում է աինգօ, բայց էն էլ տանու չէ, վայրենի է:

Ինչպէս աշխարհագրական և կլիմայական, էնպէս էլ կուլտուրական պայմանները, մարդու պարապմունքն ու ապրելու եղանակը աճափին ազդեցութիւն են արել շան թէ՛ ֆիզիքական կազմուածքի թէ՛ մտաւոր ընդունակութիւնների ու բնաւորութեան վրայ: Ժողովրդական աւածն ասում է. — ապրանքը եթէ ախրոջը չգցի, այսինքն ախրոջ նման չլինի, գողանովի է: Եթէ էսպէս է, ապրանքը ախրոջ նման է լինում, որովհետեւ նրա հետ ու նրա մօտ է լինում և ամէն կերպ ազդւում է նրանից, էն ժամանակ շունը հօ էն ապրանքն է: որ բաւոր ապրանքներից ամենից շատ է լինում իր ախրոջ հետ ու մօտ: Եւ որովհետեւ ապրանքներից և անասուններից գրեթէ ամենից ընդունակն է կամ ինչ-

պէս ժողովուրդն է ասում՝ իմ աստուծն կենդանի է, միշտ ազդուում է, կրթւում է, սովորում է և իւրացնում է իր տիրոջ բնաւորութեան առանձնայատկութիւնները: Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, նկատուած է ընդհանրապէս, որ գիւղացու շունը կոպիտ ու անձոռնի է լինում, բայց հաւատարիմ: Հովուի գամփռը ժիր ու մտացի է լինում, որսկանի շունը ճարպիկ ու հնարագէտ, պարապ-սարապ պարոնի շունը՝ ծոյլ ու քմապաշտ և գիւղացու անկիրթ շունից էլ աւելի կոպիտ: փակ, անհիւրասէր մարդու շունը՝ տխուր ու մռայլ:

Մեր հովիւների մէջ սովորութիւն է յաճախ իրենց հօտը թողնել շների հսկողութեանը: Ամէն մի հովիւ հաստատ գիտի, որ իր շունը միանգամայն կը փոխարինի իրեն: Պատահում է, որ մի թնադիշերով գէլը կամ գողը վրայ է տալիս, յարձակւում է, հօտը ցրւում է, կտրկան է անում սչխարի մի մասն ու քշում: Սակայն հովիւը չի յուսահատւում, նա լաւ գիտի, որ իր շները կը փրկեն: Մի միայն շներըն են իր յոյսը և մի միայն նրանց է ազաղակում: Էդ ժամանակ շների մի մասը ցրուած սչխարն է հաւաքում, միւս մասը կամ մինը ընկնում է թըշնամու տարածի, կտրկանի ետեւից՝ անդադար բարձրը հաջելով ու կլանչելով, որ տէրն իմանայ ո՛ր կողմն է դնում, և ազատում է թշնամու ճանկից, հաւաքում ու պահում, չորս կողմը պտրտում, մինչեւ տէրը վրայ է հասնում: Եւ էդպէս ժամանակը ո՛չ մի սպառնալիքով ու ո՛չ մի գէնքով չի կարելի ետ դարձնել հովուի շունը:

Իսկ սովորական գիշերը նա անշարժ նստած է իր տեղը, իր թեւում, հօտի կողքին և ո՛չ մի բանով, ո՛չ մի ուտելիքով չի կարելի նրան հրապու-

բել, տեղահան անել, մինչեւ վտանգ չլինի, կամ
տէրը չկանչի, կը պատահի, որ հօտի մի կողմը մի
կասկածելի շարժում նկատի, էն ժամանակ էլ թա-
քուն կ'երթայ կը ստուգի, կրկին կը գայ իր թեւը,
Հովուի շունը հովուն ինքն է, և դրա համար էլ
հովուն իր շանը սիրում է իր անձի նման:

2

Հիմի գուք նայեցէք մուրացկանի շանը:
Եղիազար Բլաղ անուսով մի եւրոպացի գրում
է. կառքում նստած էի, մի շուն մօտեցաւ, թաթե-
րը բարձրացրեց, դրեց առջեւս ու աղաչաւոր աչքե-
րը ձգեց երեսիս: Կառապանը, որ ճանաչում էր շա-
նը, ասաւ. — «Մանր փող կ'ուներեմք, ասէք իրեն,
պարս'ն, ասէք ի'նչ է անում»:

Մի սեւ փող ձգեցի իրեն, վեր կալաւ՝ վազեց
մօտիկ հացթուիի խանութը, փողը ասեց, հաց ա-
սաւ ու մի կողմ քաշուած սկսեց ուտել: Բանից
գուրս եկաւ, որ մի մուրացկանի շուն էր, տէրը
նոր էր մեռել, մնացել էր անտէր ու տիրոջ նման
սղորմութիւն ուղեկով ապրում էր:

Հիմի էլ մի սերիշ շուն:

Մենք հօլաւ գիտենք բարձրատիճան մարդ-
կանց բնաւորութիւնը: Նրանք առ հասարակ խոժոռ
են ու կողիտ գէպի ամէն մի մարդ, որ ներկայա-
ցրած չի իրենց: Ահա էս տեսակ մարդկանցից մէ-
կը, կամս Բուսսիէ (Անդրէզի) 1774 թուին մի մեծ
շուն ունէր, անուսը Պլուտոն: Շատ էլ սիրում էր:
Պլուտոնը տանել չէր կարող ս'չ մի օտար մարդու,
կամսի հիւրերը միշտ վտանգի մէջ էին: Սրա առա-
ջն ասնելու համար կամսը սկսեց իր հիւրերին ա-
մենից առաջ ներկայացնել Պլուտոնին ու ասել. —

Պլուտոսն, ահա էսինչ պարտնը, իմ բարեկամն է: Եւ միայն էսպէս՝ Պլուտոսին ներկայացնելուց ու ծանօթացնելուց յետոյ մարդիկ կարող էին ազատ ել ու մուտք ունենալ կոմսի տանը: Ճիշդ իր տիրոջ նման:

Կոմսոսն յայտնի վիրաբոյժ Բելկանին էլ իր շանից հետեւեալ պատմութիւնն է անում: Ասում է՝ մի փոքրիկ շուն ունէի, որ միշտ հետս հիւանդանոց էի տանում ու միշտ կողքիս աթոռին նըստած ներկայ էր լինում անդամահատութիւններին: Մի անգամ էլ հիւանդանոց մտնելիս, չէի նկատել թէ շունս ետ է մնացել. յանկարծ դուռն ամուր զարկեցի ու շանս թաթը մնաց դրան տակը: Շունս սկսեց աղիողորմ կլանչել ու կլանչելով էլ կաղին տալով վաղեց, բարձրացաւ աթոռին, աթոռից էլ թռաւ անդամահատութեան սեղանին, սեղանին վրայ մեկնուեց ու կոնծկոնծալով թաթը մեկնեց ինձ: Նայեցի, տեսայ ոտի մի մտար ջարդուել է, իսկոյն փաթաթեցի, կապեցի. մի քիչ անց հանգստացաւ ու իր աթոռի վրայ կծիկ եկաւ քնեց: Միւս օրն էլ եկաւ, իրան իրան նոյնն արաւ, ու էսպէս ամէն օր, մինչեւ որ լաւացաւ:

1881 թուին, Մոսկուայում, երաժիշտ Բենեատու շունը էնքան վարժ էր նուագում, որ մասնակցում էր երաժշտական խմբի մէջ և իր տիրոջ երգելու ժամանակ նուագակցում էր նրան:

ՀԷՔԻԱԹՆԵՐ

ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԸ

Փամանակով մի աղքատ մարդ կար, որքան աշխատում էր, որքան չարչարւում էր, դարձեալ մի կնոյն աղքատն էր մնում:

Յուսահատուած՝ մի օր նա վեր կացաւ, թէ պէտք է գնամ գտնեմ Աստուծոն, տեսնեմ ես ե՞րբ պէտք է պրծնեմ այս աղքատութիւնից, ու ինձ համար մի բան խնդրեմ:

Ճանապարհին մի գայլ պատահեց.

— Ասաջ բարի, մա՛րդ-ախպէր, ո՞ւր ես գնում, — հարցրեց գայլը:

— Գնում եմ Աստուծ մօտ, — պատասխանեց աղքատը. — դարդ ունեմ ասելու:

— Ի՛նչ, որ գնաս Աստուծ մօտ, — խնդրեց գայլը, — ասա՛ մի սոված գայլ կայ, գիշեր ցերեկ ման է գալիս սար ու ձոր, ուտելու բան չի գտնում, ասա՛ մինչեւ ե՞րբ պէտք է սոված մնայ. որ ստեղծել ես՝ ինչո՞ւ չես կերակուր հասցնում:

— Կա՛ւ, — ասաց մարդն ու շարունակեց ճանապարհը:

Շատ գնաց թէ քիչ, պատահեց մի սիրուն աղջկայ:

— Ո՞ւր ես գնում, ախպէ՛ր, — հարցրեց աղջիկը:

— Գնում եմ Աստծու մօտ,

— Երբ որ Աստծուն տեսնես, — աղաչեց սիրուն
աղջիկը, — ասա՛ մի այսպիսի աղջիկ կայ, ջանել,
առողջ, հարուստ, բայց չի կարողանում ուրախա-
նալ, բախտաւոր զգալ իրան. ի՞նչ պիտի լինի նրա
ձարը:

— Կ'ասեմ, — խոստացաւ ձամբորդն ու դնաց,
Պատահեց մի ծառի, որ թէև ջրափին էր կանգ-
նած, բայց չոր էր:

— Ո՞ւր ես գնում, ա՛յ ձամբորդ, — հարցրեց
չոր ծառը:

— Գնում եմ Աստծու մօտ:

— Ի՛նչ, կանգնիր, մի երկու խօսք էլ ես ա-
յսպրեմ, — խնդրեց չոր ծառը. — Աստծուն կ'ասես՝
աս ի՞նչ բան է, բուսել եմ այս պարզ ջրի ափին,
բայց ամառ ձմեռ չոր եմ մնում. ե՞րբ պէտք է ես
էլ կանաչեմ:

Այս էլ լսեց աղքատն ու շարունակեց ձանա-
պարհը:

Այնքան դնաց՝ մինչև դատաւ Աստծուն. Մի
բարձր ժայռի տակ, մէջքը ժայռին դէմ տուած, ա-
լեւոր մարդու կերպարանքով նստած էր Աստուածը:

— Բարի օր, — ասաց աղքատն ու կանգնեց Աս-
տրծու առաջին:

— Բարով եկար, — պատասխանեց Աստուած. —
Ի՞նչ ես ուզում:

— Է՛ն եմ ուզում, որ ամէն մարդի էլ հաւասար
աչքով մտիկ տեսնես, մէկին աւար չտեսնես, միւսին՝
խաւար: Ես այնքան տանջւում, աշխատում եմ, էլ
չեմ կարողանում կուշտ փորով հաց գտնեմ, իսկ
շատերը, որ իմ կէսի չափ էլ չեն աշխատում, հա-
րուստ ու հանգիստ սպրում են:

— Իէ՛, գնա, հիմ ի կը հարստանա. քո բախար
տուեցի, գնա վայելիր, — ասաց Աստուած:

— Էլ բան ունեմ ասելու, Տէ՛ր, — ասաց աղ-
քատն ու պատմեց սոված գայլի, սիրուն աղջկայ ու
չոր ծառի ապսպրանքը:

Աստուած բռնորի պատասխանը տուեց, և աղ-
քատը շնորհակալութիւն արաւ ու հեռացաւ:

Վերադարձին պատահեց չոր ծառին.

— Ինձ համար ի՞նչ ասաց Աստուած, — հարցրեց
չոր ծառը:

— Ասաց՝ քո տակին սակի կայ, մինչեւ էդ
սակին չհանեն, որ արմատներդ հողին հասնեն, դու
չես կանաչիլ, — պատմեց մարդը:

— Էլ ո՞ւր ես գնում, արի՛ սակին հանիր էլի,
հա՛մ քեզ օգուտ կը լինի, հա՛մ ինձ, դու կը հա-
րստանաս, ես էլ կը կանաչեմ:

— Չէ՛, ես ժամանակ չունեմ, շտապում եմ, —
պատասխանեց աղքատը. — Աստուած ինձ բախար
ուեց, ես շուտով պէտք է գնամ իմ բախար գանեմ,
վայելեմ, — ասաց ու գնաց:

Յետոյ սիրուն աղջիկը պատահեց ու ձամբորդի
առաջը կտրեց.

— Ի՞նչ լուր բերիր ինձ համար:

— Աստուած ասաց՝ դու պիտի քեզ համար մի
մտերիմ կեանքի ընկեր գտնես, այն ժամանակ է՛լ
սխառը չես լինիլ, ուրախ ու երջանիկ կը լինես:

— Իէ՛, որ այգսդ է, արի՛ դու եղիր իմ կեան-
քի մտերիմ ընկերը, — թախանձեց աղջիկը ձամ-
բորդին:

— Չէ՛, ես քեզ ընկերակցելու ժամանակ չու-
նեմ, Աստուած ինձ բախար է տուել, պէտք է գնամ
իմ բախար գանեմ, վայելեմ, — ասաց աղքատն ու
հեռացաւ:

Ճանապարհին սպասուած էր սոված գայլը. հեռուից հենց որ տեսաւ ճամբորդին, վազեց առաջը կտրեց.

— Հը՛, Աստուած ի՞նչ ասաց:

— Ախպէր, Աստուած մօտ գնալիս քեզանից յետոյ մի սիրուն աղջիկ ու մի չոր ծառ էլ պատահեցին. աղջիկն ապսպրեց, թէ ինչո՞ւ ինքը չի կարողանում ուրախանալ, ծառն էլ թէ՛ ինչո՞ւ է գարուն ամառ չոր: Աստուան պատմեցի, ասաց. — աղջկանն ասա իրան համար մի կեանքի ընկեր գտնի, կը բախտաւորուի. ծառին էլ ասա՛ քո տակին ոսկի կայ, պէտք է այդ ոսկին հանեն, արմատներդ հողին հասնեն, որ կանաչիս: Եկայ իրանց պատմեցի Աստուծու խօսքերը. ծառան ասաց՝ դէ՛, արի հանիւր ոսկին՝ տար. աղջիկն էլ թէ՛ ես հենց քեզ եմ ընտրում ինձ ընկեր: Ասացի՛ չէ՛, ախպէր, չեմ կարող. Աստուած ինձ բախտ է տուել, պէտք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ:

— Իսկ ինձ համար ի՞նչ ասաց Աստուած, — հարցրեց սոված գայլը:

— Քեզ համար էլ ասաց՝ սոված ման կը գաս. մինչեւ մի անխելք մարդ կը գտնես, կ'ուտես, կը կշտանաս:

— Էլ քեզանից անխելք մարդ ո՞րտեղ գտնեմ, որ ուտեմ, — ասաց գայլն ու կերաւ անխելք աղքատին:

Գ Ա Ռ Ն Ի Կ Ա Խ Պ Է Ր

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Կուրած գնում են հեռու.
Արեւը վառ,
Նամբան՝ երկար,
Ո՛չ աղբիւր կայ, ո՛չ առու:

Քոյրը մեծ էր, ոնց որ լինէր
Կը համբերէր արեւին,
Բայց ախպերը փոքրիկ էր դեռ,
Չէր դիմանում ծարաւին:

Գնում են, գնում, տեսնում են նամբին
Կովի ոտնատեղ՝ մեջք լինի ջուր:
«Քուրի՛կ ջան, բուրիկ, ես տաս եմ ծարաւ,
Ի՞նչ կ'ըլի, բողնես՝ խմեմ մի պուճուր»:

— Չէ՛, ախպեր ջան, չէ՛, դու կով կը դառնաս,
Կովի կնդակի տեղից մի խմի.
Մի էիջ էլ կացի, էիջ էլ որ կենաս՝
Առաջներս պաղ աղբիւր կայ հիմի:

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Գնում, գնում են հեռու.

Արեւը՝ վառ,
ձամբան՝ երկար,
Ո՛չ աղբիւր կայ, ո՛չ առու:

Գնում են, գնում, տեսնում են նամբին
Ձիու ոտնասեղ՝ մեջը լիքը ջուր:
«Քուրի՛կ ջան, բուրիկ, ես եւս եմ ծառաւ,
Ի՞նչ կ'ըլի, քողնես՝ խմեմ մի պուճուր»:

— Չէ՛, ախպեր ջան, չէ, դու ձի կը դառնաս,
Ձիու սմբակի տեղից մի խմի.
Մի քիչ էլ կացի, քիչ էլ որ կենաս՝
Մօտիկ մի զուլալ աղբիւր կայ հիմի:

Երկու որբեր,
Քուր ու ախպեր,
Գնում, գնում են հեռու.
Արեւը՝ վառ,
ձամբան՝ երկար,
Ո՛չ աղբիւր կայ, ո՛չ առու:

Գնում են, գնում, տեսնում են նամբին
Գառան ոտնասեղ՝ մեջը լիքը ջուր:
Փոքրիկ ախպերը էլ չի համբերում,
Քրոջից քաֆուն խմում է պուճուր:

Քոյր մին էլ ետ է նայում,
Որ մի գառը մղկսալի
Իր ետեւից տալու մայում
Ու մայիլով վազ է տալի:

Խեղհ Մանուօր վայ է ձալիս,
վայ է Տալիս, լալի՛ս, լալի՛ս.
Բայց էլ ի՞նչ անէր,
Բայց էլ ո՞նց անէր...

Սրկու որբեր,
Քուր ու ախպեր,
Քառն ու աղջիկ մոլորուած,
Հեռու երկրում
Տխուր-տրտում
Գնո՛ւմ, գնո՛ւմ են կորած:

Սոված ու ծարաւ գնում են, գնում.
Գնում են, գնում, չգիտեն թէ ո՛ւր.
Վերջապէս մի հոզ անտառ են մտնում,
Անտառի միջին մի զանգակ աղբիւր:
Կուօօ-կուօօ խմում են էն սառը ջրից,
Յետոյ Մանուօր ծառն է բարձրանում,
Քառնիկ ախպերն էլ ծառերի թակին
Մուօ-մուօ արածում, արոն է անում:
Իրիկուան պահին խրխինջ ու քրքիջ...
Լցւում է յանկարծ անտառն աղմուկով.
Մօթիկ են գալի ձայները հիշ-իշ,
Մօթիկ են գալի ծիծաղով, երգով...

Եւ անա ոսկի սանձերից բռնած
Բերում են՝ ջրեն ձիանին արեայի:
Ամենի ձիանին՝ աղբիւրից խրճնած՝
Ծառս-ծառս են կանգնում ու մօտ չեն գալի:
Մօթիկ են տալի ծառայքը մէկ էլ,
Որ սիրուն մի ցով ջրի մէջն ընկել.

Ու ջուրը քանի՛ արիք է սալի,
Նա էլ ջրի հետ գնում է, գալի:
Նայում են վերել: Ի՞նչ տեսնեն, Ասուած,
Մի հուր-հրեղէն, մի տարւանդ արջիկ,
Ծառի նիւղերին նազելի նսած՝
Նայում է ներքեւ լռիկ ու մնջիկ
Մի սիրուն արջիկ: արմանք ու զարմանք:
Զարմանք է պատում խեղճ, ծառաներին.
Տե՛ր Ասուած, արդեօք ի՞նչ հրաւր է սա,
Վայրի անտառում իջած էս ծառին:

— Ո՞վ ես, շնա՛ղ, տեսի՞լք ես դու,
Թէ հողեղէն արարած.
Թէ տեսիլք ես՝ կաց մի քիչ էլ.
Թէ արջիկ ես՝ արի՛ ցած:
Յած եկ, տեսնենք ի՞նչպէս եղաւ,
Որ ծագեցիր դու մեզ մօտ.
Ի՞նչ ցաւ է քեզ արդեօք բերել
Մեր աշխարհիք, անծանօք:

— Մեզ որբութեան՝ ցաւն է բերել
Զեր աշխարհիք անծանօք, —
Զայն է սալի ծառի վրէժ
Մեր մանուկը ամաչկոտ: —
Մենք տուն շուքենք, ո՛չ ապաւէն
Էս լայնարձակ աշխարհում.
Մութն էլ հիմի տուտվ կ'ընկնի,
Վախենում ենք անտառում:

Ու ծառաները գառն ու սողկան
Անում են, բերում պալատն արեայի:

«Ո՛վ ես դու սիրո՛ւն, — հարցնում է արքան, —
Անբան գառան հետ ի՞նչ ես ման գալի»:

Կանգնում է աղջիկն էսեղ նորից նոր,
Պատում է ինչ որ պատմեցի ես: ձեզ.
Քե՛ ապրած կենա, ահեղ բազաւոր,
Մեր բանը, հապա՛, հապա ու հապա...

Թագաւորն երբ որ լսում է մին-մին;
Ե՛ւ ռաճ ցաւում է, ե՛ւ ռաճ հաւանում.
Անում է նրան իրեն բազուհին,
Եօրն օր, եօր գիշեր հարսանիք սնում:

Ու փառի միջում, շեղ դահլիճում,
Լիքն ու երջանիկ ապրում է Մանուշ.
Քաղցիկ ախպերն էլ հոխ պարեկզնեում
Արտ է սնում ու խաղում անուշ:

Պալատումը կար նախանձոճ ու շար
Մի պառաւ կնիկ, հնուց աղախին.
Նախանձում է սա, բէ ո՛նց պիտի գայ
Մի որբ՝ բազուհի դառնայ մեր գլխին:

Մի օր էլ գալի, գլուխ է տալի,
Առաջը կանգնում. կեղծաւոր գովում.
«Արի՛, քեզ տանեմ, սիրուն բազուհի,
Չը՛փ-չը՛փ լողացնեմ օարմաղ էն ծովում»:

Եսքում է, տանում, գցում ծովի մեջ,
Շորերը առնում, ես բերում քաղաք,

Հագցնում իր սել, դարձուոր աղջկան,
Պալաս ուղարկում քաղուհու սեղակ:

Սրեսը ծածկած քանձը շղարոյ
Պալաս է մտնում են սուս քաղուհին,
Ու քաղաւորն էլ կասկած չի տանում,
Թէ ո՛վ է եկել, բազմել իր գահին:

Բայց ինչ՝ անում են, ինչ որ չեն անում,
Չեն կարում էլ տուն բերեն Գառնիկին.
Մայում, ևս ամից են ամեն է վազում,
Մայում, են ամից ես գալի կրկին:

Ի՞նչ անենք սրան, ո՞նց անենք սուս.
Պառասն ու աղջիկ տաս միտք են անում.
Վերջը գալիս է դարձուոր քաղուհին
Անկողին մտնում, հիւանդ ձեւանում:

Ել քանգ ուսելիք, էլ ազնիւ մեզիք
Բերում են, փռում, խնդրում, աղերսում.
Մտիկ չի տալի ո՛չ մեկի վրայ.
Վերջը Գառնիկի մտիցն է ուզում...

«Բայց չէ՞ որ, Մանո՛ւս, եո եղբայրն է նա.
Ո՞նց ես նրա միտն ուզում դու հիմա...»

— Ի՞նչ անեմ, ինձնից նա ազիզ հօ չի՞.
Սա որ մեռնում եմ, քող նա էլ կորչի...
Ասում է, նչում. «Վա՛յ մեռայ, ամա՛ն...»
Ու քաղաւորը տալիս է հրաման.

«Կրակ վառեցի,
Դանակ արեցի,
Բերեի, մորթեցի
Ախպե Գառնիկին,
Որ առողջ լինի
Իւր հայր սփիւն»:

Թագաւորն Կսպե պատուէր է տալի,
Պատուէր է տալի ու դուրս է գալի,
Գնում է ծովափ սաստիկ սրտեղած,
Թէ ո՛րքան Մանուէն անգուր է եղած:

Մայում է, լալիս Գառնիկ ախպերը,
Լացացնում է ժեռ ծովի ափերը,
Մի ափից բռնած միւս ափն է բռնում,
Մարդկային լեզուով քոջը կանչում:

— Բուրի՛կ ջան, բուրի՛կ,
Կրակ են վառում,
Կրակ են վառում,
Դանակ են սրում:
Բուրի՛կ ջան, բուրի՛կ,
Լսի անդունդից,
Սգնուրեան հասի,
Սպանում են ինձ:

Լսում է արքան՝ տեղը քար կտրած,
Նւ ալիքների միջիցը յանկարծ:
Շատ ծանօթ մի ձայն հեռո՛ւ, խուլ ու խոր,
Կանչում է հեռու, կանչում է անգոր:

«Ախպէ՛ր ջան, ախպէր,
Անհէր ու անմէր,
Անփուր ու անսէր,
Իմ Գառնիկ-ախպէր.
Դժար է տեղս,
Ձեռն չեն լսում,
Ձեռն չեն լսում,
Ձեռն չի հասնում:
Ա՛խ, շար պառաւր
Սեւ արաւ օրս,
Այժմ էլ կը սպանի
Գառնիկ-ախպօրս»:

Լսում է արփան, պալատն է հասնում,
Պատում է փողը թագուհու դէմքի.
Պատում է, տեսնում... բայց ի՞նչ է տեսնում,
Ո՞վ է իր գահին ելել թագուհի...

— Եկե՛ք, ձկնորսնե՛ր, ուռկան գցեցէք,
Հանեցէք ծովից մէր լաւ Մանուշիկն.
Եկե՛ք, դահիճնե՛ր, ծովը գցեցէք
Կախարդ պառաւիկն ու Կս հրեւիկն:

Էսպէս բարկացած գոռում է արփան,
Ժողովուրդն ամեն թնդում է ցաւից,
Գալիս է կանգնում, գցում է ուռկան,
Անմեղ Մանուշիկն հանում է ծովից:

Հանում է ծովից, գահին բարձրացնում, —
Կրկին թագուհի ու թիկնանց թիկին.
Գառնիկ ախպէրն էլ անչափ խնդումից

Պատուում ե իրեն ոչխարի մորթին,
'Իուրս գալի, կանգնում սիրուն տղամարդ,
Ճակատը պայծառ, աչքերը վառ-վառ,
Ոչխարի եկար մայրինի տեղակ
Մարդկային լեզուով ազատ ու ճարճար:

Իսկ չար պառաւին, իրեն աղջկան,
Որ խաբել էին աշխարհ բովանդակ,
Վզներից կապում ջաղացի ֆարեր,
Գցում են ծովի անդունդը անճակ:

Մեկու որբեր,
Քուր ու ախպեր,
Առած պատիւ, գահ ու թագ.
Աշխարհին ելի
Խաղա՛ղ ու լի,
Չարը թաղուած ծովի տակ:

ՉԱԽՉԱԽ ԹԱԳԱԻՈՐԸ

Լինում է, չի լինում, մի աղքատ ջաղացպան,
 էս ջաղացպանը մի օր գնում է ջաղացի ջուրը
 թողնի, գալիս է տեսնում՝ մի կտոր չոր պանիր ու-
 նէր՝ չկայ:

Մին էլ գնում է ջուրը կապի, գալիս է տես-
 նում՝ մի կտոր մսխրոտ բաղարջ ունէր՝ չկայ:

էս ս՞վ կը լինի, ս՞վ չի լինի: Մտածում է,
 մտածում ու ջաղացքի շեմքում թակարդ է լարում:
 Առաւօտը վեր է կենում, տեսնում մի աղուէս է
 ընկել մէջը:

— Հը՞, գո՛ղ անիծած, կաց՝ հիմի ես քեզ ցոյց
 կը տամ, — ասում է ու լինգը վերցնում:

Աղուէսը աղաչանք-պաղատանք է անում: Ինձ
 մի սպանի, — ասում է, — մի կտոր պանիրն ի՞նչ
 է, որ դրա համար ինձ սպանում ես: Կենդանի բաց
 թող, ես քեզ շատ լաւութիւն կ'անեմ:

Ջաղացպանը լսում է, կենդանի բաց է թողնում:
 էս աղուէսը գնում է, էդ երկրի թագաւորի աղ-
 բանոցում ման է գալի, մի սակի է գտնում: Վաղ
 է տալի թագաւորի մօտ:

— Թագաւորն ապրած կենայ, ձեր կտոր մի
 տուէք, Չախչախ թագաւորը մի քիչ սակի ունի,
 չափենք ետ կը բերենք:

— էդ ս՞վ է:

— Դու դեռ չես ճանաչում, — պատասխանում
 է աղուէսը: — Սա մի շատ հարուստ թագաւոր է,

եա էլ իր վէզիրն եմ, կոտը տուր, տանենք ոսկին
չափենք. յետոյ կը ճանաչես:

Կոտը առնում է տանում, աղբանոցում գաած
ոսկին ամբողջում կոտի ձեղքում, իրիկունը բե-
րում, եա տալի:

— Օ՛ֆ, — ասում է, — զստով չափեցինք:

— Մի՛թէ ճշմարիտ սրանք կոտով ոսկի՞ են չա-
փել, — մտածում է թագաւորը: Կոտը թափ է տա-
լի, զրնգալէն մի ոսկի է վար ընկնում:

Միւս օրը աղուէսը եա է գալի, թէ՛ Չախչախ
թագաւորը մի քիչ ակն ու մարգարիտ ունի, ձեր
կոտը տուէք, չափենք կը բերենք:

Կոտն առնում է տանում: Մի մարգարիտ է գըտ-
նում, կոխում է կոտի արանքը, իրիկունը եա բերում:

— Օ՛ֆ, — ասում է, — մեռանք մինչև չափեցինք:

Թագաւորը կոտը թափ է տալի, մարգարիտը
գուրս է թռչում: Մնում է զարմացած, թէ էս Չախ-
չախ թագաւորն ի՛նչքան հարուստ պէտք է լինի,
որ ոսկին, ակն ու մարգարիտը կոտով է չափում:

Անց է կենում մի քանի օր: Մի օր էլ աղուէսը
գալիս է թագաւորի մօտ խնամախօս, թէ՛ Չախչախ
թագաւորը քու աղջիկն ուզում է:

Թագաւորն ուրախանում, աշխարհքով մին է
լինում:

— Դէ՛, գնացէք, — ասում է, — շուտ արէք,
հարսանիքի պատրաստութիւն տեսէք:

Թագաւորի պալատում իրար են անցնում, հար-
սանիքի պատրաստութիւն են տեսնում, իսկ աղ-
ուէսը ջաղացն է վազում:

Վազում է ջաղացպանին աչքալոյս տալի, թէ՛
հապա թագաւորի աղջիկը քեզ համար ուզել եմ:
Պատրաստ կաց, որ գնանք հարսանիք անենք:

— Վա՛յ, քու տունը քանդուի, ա՛յ աղուէս, էդ ի՞նչ ես արել, ես ս՛վ, թագաւորի աղջիկը սվ, Ո՛չ ապրուստ ունեմ, ս՛չ տուն ու տեղ, ս՛չ մի ձեռք շոր... Հիմի ես ի՞նչ անեմ...

— Դու մի վախենայ, ես ամէն բան կ'անեմ, — հանգստացնում է աղուէսն ու ետ վազում թագաւորի մօտ:

Ընկնում է պալատը. — հայ-հարայ, Չախչախ թագաւորը մեծ հանդէսով գալիս էր, որ պսակուի: Ըամբին թշնամի զօրքերը վրայ տուին, մարդկանց կոտորեցին, ամէն բան տարան: Ինքը ազատուեց փախաւ: Չորում մի ջաղաց կայ, եկել է մէջը մըտել: Ծուտով շոր հասցրէք, ձի հասցրէք, գայ պսակուի, որ գնայ իր թշնամիներինց վրէժն առնի:

Թագաւորն իսկոյն թագաւորական շորեր է տալիս աղուէսին, հետն էլ շատ ձիաւորներ է գնում, որ պատուով ու փառքով իր փեսին պալատ բերեն:

Գալիս են հանդէսով ջաղացի գրանը կանգնում: Աղուէսը ջաղացականի քուրքը հանում է, թագաւորի շորերը հագնում, նստեցնում է նժոյգ ձիուն: Ծըր-ջապատուած մեծամեծներով, առջեւից ձիաւորներ, ետեւից ձիաւորներ, էսպէս հանդէսով բերում են թագաւորի պալատը: Իր օշումը պալատ չտեսած ջաղացական, շշկլում, բերանը բաց մին շորս կողմն է նայում, մին հողի շորերին է նայում, խլշկոտում ու զարմանում:

— Էս ինչս՞ու չտեսի նման գէս ու գէն է նայում, աղուէ՛ս ախպէր, — հարցնում է թագաւորը: — Կարծես տուն չլինի տեսած, շոր չլինի հագած:

— Չէ՛, գրանից չի, — պատասխանում է աղուէսը: — Նայում է ու համեմատում իր ունեցածի հետ, թէ իր ունեցածը ս՛րտեղ, էս սրտեղ...

Նստում են ճաշի: Տեսակ-տեսակ կերակուրներ
են բերում: Ջաղացպանը չի իմանում որի՛ն ձեռք
տայ, կամ ի՛նչպէս ուտի:

— Ինչո՞ւ չի ուտում, աղուէ՛ս ասպէր, — հար-
ցրնում է թագաւորը:

— Գալու ժամանակ ճամբին որ կողոպտեցին, նրա
համար միտք է անում: Չէր կարող երեւակայել,
տէ՛ր թագաւոր, թէ ի՛նչքան բան տարան և վերջա-
պէս ի՛նչ անպատուութիւն էր էդ մեր թագաւորի
համար: Ի՞նչպէս հաց ուտի, — պատասխանում է
աղուէսը հառաչելով:

— Ինչ չկայ, դարդ մի անի, սիրելի փեսայ,
աշխարհք է, էդպէս էլ կը պատահի, — խնայում է
թագաւորը: — Այժմ հարսանիք է, ուրախանա՛նք,
քէֆ անենք:

Ու քէֆ են անում, ուտում, խմում, ածում,
պար դալի, եօթն օր, եօթ դիշեր հարսանիք անում:
Աղուէսն էլ դառնում է քաւոր:

Հարսանիքից յետոյ թագաւորը իր աղջկան մեծ
բաժինք է տալի ու հանդեսով ճամբայ դնում Չախ-
չախ թագաւորի հետ:

— Կացէք, ես առաջ դնամ տունը պատրաստեմ,
դուք իմ ետեւից եկէք, — ասում է քաւոր աղուէսը
ու վաղ տալի:

Վաղ է տալի, տեսնում է մի դաշտում մեծ նա-
խիր է արածում:

— Էս ո՞ւմ նախիրն է:

Ասում են՝ Շահ Մարինը:

— Պա՛, Շահ-Մարի անունը էլ չտաք, թագա-
ւորը նրա վրայ բարկացել է, զօրքով իմ ետեւից
դալիս է. ս՛վ նրա անունը տուա՛ւ՝ գլուխը կտրել
կը տայ: Որ հարցնի, թէ ս՛ւմն է, ասէք՝ «Չախչախ

Թագաւորինը», թէ չէ վայն եկել է ձեզ տարել :
Վաղ է տալի, տեսնում է ոչխարի հօտը սարերը
բռնել է :

— Էս ո՞ւմն է :

— Ծան֊Մարինը :

Հովիւներին էլ նոյնն է ասում :

Վաղ է տալի, տեսնում է ընդարձակ արտեր,
հնձուորները միջին հնձում են :

— Էս ո՞ւմ արտերն են :

— Ծան֊Մարինը :

Հնձուորներին էլ նոյնն է պատուիրում :

Վաղ է տալի, տեսնում է խոտհարքներ :

— Էս ո՞ւմն են :

— Ծան֊Մարինը :

Խոտ հարողներին էլ նոյնն է ասում :

Հասնում է Ծան֊Մարի պալատին :

— Ծան֊Մա՛ր, ա՛ Ծան֊Մար, տեսնո՞ւմ ես է՛ն
փոշին, որ ամպի նման բարձրանում է : Է՛ն թագա-
ւորն է դալիս մեծ դօրքով : Քու տունը չքանդուի,
միամիտ նստել ես : Թագաւորը քեզ վրայ բարկա-
ցել է, մեծ դօրքով դալիս է, որ քեզ սպանի, տուն
ու տեղդ քանդի, տակն ու վրայ անի, ունեցած-
չունեցածդ էլ թագաւորական դրի : Մի անդամ քեզ
մօտ մի վառելի եմ կերել, է՛ն աղուհացը դեռ չեմ
մոռացել : Վաղեցի եկայ, որ քեզ խմացնեմ : Եւս
արա, գլխիդ ձարը տես, քանի չի եկել :

— Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ, — հարցնում է սար-
սափած Ծան֊Մարը, տեսնում է, ճշմարիտ որ հեռ-
ւից փոշի բարձրացնելով դալիս է թագաւորը :

— Էլ ո՞ւր պէտք է գնաս, շուտ արա, մտի էս
դէզի մէջ, թէ չէ եկան . . .

Էս Ծան֊Մարը մտնում է դէզի մէջ :

Այն ինչ աղուէսի ետեւից գալիս են հարսանքա-
ւորները: Գալիս են զուռնով, թմբուկով, երգով,
հրացան արձակելով ու աղմուկով:

Գալիս են Չախչախ թագաւորն ու իր կիները սս-
կեզօժ կառքի մէջ. նրանց առջեւից ու ետեւից ան-
համար ձիաւորներ:

Հասնում են մի գաշախ: Տեսնում են մեծ նա-
խի: է արածում:

— Էս ո՞ւմ նախիրն է, — հարցնում են ձիա-
ւորները:

— Չախչախ թագաւորինը, — պատասխանում
են նախարարանները:

Անց են կենում: Հասնում են սարերին: Տես-
նում են ոչխարի սպիտակ հօտը սարերը բռնել է:

— Էս ո՞ւմն է, — հարցնում են ձիաւորները:

— Չախչախ թագաւորինը, — պատասխանում
են հովիւները:

Անց են կենում: Տեսնում են ընդարձակ արտեր:

— Էս ո՞ւմ արտերն են:

— Չախչախ թագաւորինը:

Հասնում են խոտհարքներին:

— Էս ո՞ւմն է:

— Չախչախ թագաւորինը:

Ամէնքը մնացել են զարմացած: Չախչախ թա-
գաւորը ինքն էլ քիչ է մնում խելքը թոցնի:

Էսպէսով գալիս են, հասնում Շահ-Մարի պալատը:

Քաւոր աղուէսն ընդունում է խնամ ինքրին, ու
նորից սկսում են քէֆը:

Եօթն օր, եօթ գիշեր էլ էստեղ են քէֆ անում,
ու խնամ ինքրը վերադառնում են իրենց տեղերը:

Չախչախ թագաւորը, իր կիներն ու քաւոր աղ-
ւէսը ապրում են Շահ-Մարի պալատներում:

Իսկ թագաւորից վախեցած Շահ-Մարը մ'ինչեւ
էսօր էլ դեռ գնում է:

ԽՕՍՈՂ ԶՈՒԿԸ

1

Լինում է չի լինում, մի աղքատ մարդ, էս աղքատ մարդը գնում է դառնում մի ձկնորսի շալակտար: Օրական մի քանի ձուկն է աշխատում, տուն բերում, նրանով ապրում են ինքն ու կնիկը:

Մի անգամ էլ ձկնորսը մի սիրուն ձուկն է բռնում, տալիս իր շալակտարին, որ պահի, ինքն էլ ետ ջուրն է մտնում: Էս շալակտարը գետափին նստած նայում է, նայում էն սիրուն ձկան ու միտք է անում:

— Տէ՛ր Աստուած, — ասում է, — սա էլ որ մեզ նման շունչ կենդանի է, դու ասա՛ սա՞ էլ մեզ նման ծնող ունի, ընկեր ունի, աշխարհքից բան է հասկանում, ուրախութիւն կամ ցաւ է դգում թէ չէ...

... Հենց էս մտածելու ժամանակ ձուկը լեզու է առնում:

— Լսի՛, — ասում է, — մա՛րդ ախպէր: Ընկերներիս հետ ես խաղում էի գետի ալիքների մէջ: Ուրախութիւնից ինձ մոռացայ ու անզգոյշ ընկա՞յ ձկնորսի ուռկանը: Հիմի, ո՛վ գիտի, իմ ծնողն ինձ որոնում է ու լաց է լինում, հիմի ընկերներս տըխրել են: Ես էլ, տեսնում ես, ի՛նչպէս եմ սանջւում: շունչս կտրւում է ջրից դուրս: Ուղնւմ եմ ետ գնամ ապրեմ ու խաղ անեմ նրանց հետ էն պաղ

ու պարզ ջրերում: էնպէս եմ ուզո՞ւմ, էնպէս եմ
ուզո՞ւմ... Եկ խիղճ արա, ազատ արա ինձ, բաց
թող, բաց թող գնամ...

էնպէս էր ասում ցած, շատ ցած ձէնով, ցամա-
քած բերանը բաց ու խուփ անելով:

Էս շալակտարի մեղքը գալիս է, առնում է ետ
գցում գետը:

— 'Ինա', սիրուն ձկնիկ, թող լաց չլինի քու
ծնողը: Թող չտխրեն քու ընկերները: 'Ինա ասրի
ու խաղ արա նրանց նետ:

Ձկնորսը սաստիկ բարկանում է շալակտարի
վրայ:

— So ախմա՛խ, — ասում է, — ես էստեղ ջրի
մէջ թրջուելով ձուկն եմ բռնում, դու իմ աշխա-
տանքն առնում ես ետ ջո՞ւրը գցում... Իէ՛, գնա
կորի, էլ իմ աչքին չերեւաս, էլ իմ շալակտարը
չես էս օրից. գնա սովից մեռի:

Ձեռի սոպրակն էլ խլում է ու ճամբու դնում:

— Հիմի ես ո՞ւր գնամ, ի՞նչ անեմ, ո՞նց ապ-
րեմ... — տարակուսած մտածելով դառն ու դա-
տարկ վերադառնում է աղքատը դէպի տուն:

2

Էս տխուր մտածմունքի ժամանակ ճամբին դէ-
մը դուրս է գալի մի մարդակերպ շրէշ, առաջը մի
գեղեցիկ կով:

— Բարի օր, ախպէրացու, էդ ի՞նչ ես մոլորել,
ի՞նչ ես միտք անում, — հարցնում է շրէշը:

Աղքատը պատմում է իր դժխիտ եկածը, թէ
ի՞նչպէս հիմի մնացել է անգործ, անճար ու չի իմա-
նում, թէ ո՞նց պէտք է ապրեն ինքն ու իր կնիկը:

— Լսի՛, բարեկա՛մ, — ասում է Հրէշը, էս կաթնատու կովը ես քեզ կը տամ երեք տարուան ժամանակով: Ամէն օր էնքան կաթ տայ, որ քու կնիկն ու դու կուշտ-կուշտ ուտէք, ապրէք: Երեք տարին լրացաւ թէ չէ, հենց էն գիշերը կը գամ ձեզ հարց կը տամ: Թէ հարցիս պատասխանեցիք, իմ կովը ձեզ լինի, թէ չէ երկուսդ էլ իմն էք, տանելու եմ, ի՛նչ ուզեմ կ'անեմ: Համաձա՞յն ես:

— Մի բան՝ որ առանց էն էլ սովից մեռնելու ենք, — մտածում է աղքատը. — կովը կը տանեմ, էս երեք տարին կ'ապրենք, մինչեւ երեք տարուան լրանալուն էլ Աստուած սղորմած է: Մի տեղից մի գոռը կը բացուի, կամ դուցէ հենց պատասխանը տալիս ենք, ո՛վ գիտի...

— Համաձայն եմ, — ասում է ու կովն առաջն առնում, տանում տուն:

3

Երեք տարի կթում են, լիուլի ուտում, ապրում: Չեն էլ նկատում, թէ ի՛նչպէս անցաւ երեք տարին. և անա հասնում է նշանակած օրը, որ Հրէշն էն գիշեր պիտի գայ:

Մարդ ու կնիկ վերջապէսի տակ տխուր նըստում են դրանք ու միտք են անում. թէ ի՛նչ պատասխան տան Հրէշին, կամ ով գիտի ի՛նչ կը հարցընէ նա. ո՞վ կ'իմանայ Հրէշին միտքը:

— Ա՛յ թէ ինչ դուրս կը գայ, երբ մարդ Հրէշի հետ գործ բռնի, Հրէշի հետ հաշիւ ունենայ, Հրէշից լաւութիւն ընդունի... — հառաչելով զղջում էին մարդ ու կին, բայց անց կացածն անց էր կացել, էլ

հնար չկար: Իսկ զարհուրելի գիշերն արդէն վրայ էր հասնուում:

Էս ժամանակ նրանց մօտենում է մի անծանօթ գեղեցիկ երիտասարդ:

— Բարի իրիկուն, — ասում է, — ճամբորդ մարդ եմ. մութն ընկնում է. ես էլ յոգնած եմ. հիւր չէ՞ք ընդունի ձեր տանն էս գիշեր:

— Ընչի՞ չէ, ճամբորդ ախպէր, հիւրն Ասաըծունն է: Բայց մեզ մօտ վտանգաւոր է էս գիշեր: Մենք Հրէշից մի կով ենք առել էն պայմանով, որ երեք տարի կթենք: ուտենք, երեք տարուց յետոյ գայ մեզ հարց տայ. թէ պատասխանենք, կովը մեզ լինի, թէ չէ՝ իր գերին ենք: Հիմի ժամանակը լըրացել է, էս գիշեր պիտի գայ ու մենք էլ չգիտենք, թէ ի՞նչ պատասխան տանք: Հիմի մեզ ի՞նչ անի՝ մենք ենք մեղաւոր, վա՛յ. թէ քեզ էլ մնասի:

— Բան չկայ, սրտեղ դուք՝ էնտեղ էլ ե՛ս, — պատասխանում է օտարախանը:

Համաձայնում են. հիւրը մնում է:

Մին էլ հէս գիշերին դուռը դղրդում է. Ո՞վ է. — Հրէշը: Եկել եմ, դէ՛, պատասխանս տուէք: Ի՞նչ պատասխան. սարսափից մարդ ու կնկայ լեզուն կապում է, մնում են տեղները քարացած:

— Մի՛ վախենաք, ես ձեր տեղակ սրա պատասխանը կը տամ, — ասում է երիտասարդ հիւրը ու գնում է դէպի դուռը:

— Եկե՛լ եմ, — դրան ետեւից ձէն է սալի Հրէշը:

— Ես էլ եմ եկել, — պատասխանում է ներսից հիւրը:

— Ո՞րտեղից ես եկել:

— Մովի էն ափից:

- Բնչո՞վ ես եկել:
- Կաղ մոծակը թամբել եմ, վրէ՛ն նստել եմ, եկել:
- Ուրեմն ծովը պատիկ է եղել:
- Ի՛նչ պատիկ. արծիւը չի կարող մի ամիս միւսը թռչի:
- Ուրեմն արծիւը ճուտ է եղել:
- Ի՛նչ ճուտ. թեւերի շուքը քաղաք է ծածկում:
- Ուրեմն քաղաքը շատ է փոքրիկ:
- Ի՛նչ փոքրիկ. նապաստակը մի ծայրից միւսը չի հասնի:
- Ուրեմն նապաստակը ձագ է:
- Ի՛նչ ձագ. մորթին մի մարդու քուրք գուրս կը գայ, գլխարկն ու տրեխն էլ աւել:
- Ուրեմն մարդը թզուկ է:
- Ի՛նչ թզուկ. ծնկան ծէրին աքլորը ծուրուղու կանչի՝ ձէնը ախանջը չի հասնի:
- Ուրեմն խուլ է:
- Ի՛նչ խուլ. սարում որ պախրէն խոտ պոկի՛ նա կը լսի:
- Հրէշը մնում է կապուած, մուրումնաւ. զգում է, որ ներսը մի սյժ կայ իմաստուն, համարձակ, անյաղթելի. էլ չի իմանում ինչ ասի, սուս ու փուս քաշում, կորչում է գիշերուայ խաւարի մէջ:
- Սրանք նոր մեռած տեղներիցը ես եմ գալի, ուրախանում, աշխարհքովը մին եմ լինում: Հեռն էլ բացում է բարի լոյսը, և երիտասարդ հիւրը վեր է կենում, մնաք բարով է ասում, որ գնայ իր ճանապարհը:
- Չենք թողնի ու չենք թողնի, — առաջը կարում եմ մարդ ու կին. — գուր որ փրկեցիր մեր

կեանքը, ասան՝ ինչո՞վ ետ վճարենք քո լաւութիւնը:

— Չէ՛, անկարելի բան է, պէտք է գնամ իմ ճանապարհը:

— Դէ՛, գոնէ անուշո՞ք ասա. եթէ լաւութիւնդ կորչի ու չկարողանանք ետ վճարել, գոնէ իմանանք, թէ ո՛ւմ ենք օրհնելու...

— Լաւութիւն արա ու թէկուզ ջուրը գցի, չի կորչի, ես չեմք էն խօսող ձուկն եմ, որի կեանքը դու խնայեցիր... — ասում է անծանօթն ու չքանում ապշած մարդ ու կնկայ աչքերից:

Տ Է Ր Ն Ո Ւ Մ Ա Ռ Ա Ն

Աստուած բարի տայ ձեզ էլ, երկու ախպօրն էլ: Լինում են չեն լինում, երկու աղքատ ախպէր են լինում: Մտածում են ի՛նչ անեն, ո՛նց անեն, որ իրենց տունը պահեն: Վճում են՝ փսփրը տանը մնայ, մեծը գնայ մի ունեւորի ծառայ մտնի, ոտձիկ ստանայ, զրկի տուն:

Իսպէս էլ մեծը վեր է կենում, գնում է չարուստի մօտ ծառայ մտնում:

Փամանակ նշանակում են մինչեւ մին էլ գարնան կկուրի ձէն ամելը: Իս չարուստը մի չլսուած պայման է գնում ծառային: Ասում է՝ «մինչեւ էն ժամանակը թէ դու բարկանաս՝ դու չաղար մանէթի տուգանք տաս ինձ, թէ ես բարկանամ՝ ես տամ»:

— Ես որ հաղար մանէթ չունեմ, ո՞րտեղից տամ, — ասում է ծառան:

— Բան չկայ, փոխարէնը ինձ տասը տարի ձրի կը ծառայես:

Տղէն մին վախենում է էս տարօրինակ պայմանից, մին էլ մտածում է, թէ ի՞նչ պիտի պատահի: Ի՞նչ ուզում են անեն, ես եմ ու չեմ բարկանայ, պրծանք գնաց, իսկ եթէ իրենք կը բարկանան, թող իրենք էլ տուժեն իրենց գրած պայմանով:

Ասում է լու՛ւ, համաձայնում է:

Պայմանը կապում են ու մտնում է ծառայութեան:

Միւս օրը վաղ տէրը վեր է կացնում ծառային, զրկում է արտը հնձելու:

— Գնա՛, — ասում է, — քանի լուս է՛ հնձի, որ մութն ընկնի՛ կը գաս:

Ծառան գնում է, ամբողջ օրը հնձում, իրիկունը յոգնած գալիս է տուն: Տէրը հարցնում է.

— Էդ ո՞ւր եկար:

— Դէ՛, արեւը մէր մտաւ, ես էլ եկայ:

— Չէ՛, էգտէս չի: Ես քեզ ասել եմ՝ քանի լուս է, պէտք է հնձես: Արեւը մէր մտաւ, բայց տե՛ս, նրա ախպէր լուսնեակը դուրս եկաւ: Սա ի՞նչ պակաս է լուս տալի...

— Էդ ո՞նց կը լինի, — զարմանում է ծառան:

— Հը՞, դու արդէն բարկանո՞ւմ ես, — հարցրնում է տէրը:

— Չէ՛, չեմ բարկանում, ես միայն ասում էի՛ յոգնած եմ, մի քիչ հանգստանամ... — կղկղում է վախեցած ծառան ու գնում նորից հնձելու:

Հնձում է, հնձում, մինչեւ լուսնեակը մէր է

մտնում, Բայց լուսնեակը մէր է մտնում թէ չէ, դարձեալ արեգակն է դուրս գալի: Մտնան ուժասպառ արտում վեր է ընկնում:

— Վա՛յ քու արտն էլ հարամ ըլի, քու հացն էլ, քու տուած սոճիկն էլ... — սկսում է հայնոյեկ յուսահատուած:

— Հը՞, դու բարկանում ես, — կանգնում է գլխին հարուստը: Երբ որ բարկանում ես, մեր պայմանը պայման է, էլ չասես թէ քեզ հետ սոսանց իրաւունքի վարուեցին:

Ու պայմանի ուժով ստիպում է ծառան կա՛մ հազար մանէթ տուգանք տայ, կա՛մ տասը տարի ծառայի:

Մտնան մնում է կրակի մէջ: Հազար մանէթ չունէր, թէ տար հոգին ազատ անէր, տասը տարի էլ էս տեսակ մարդու ծառայելն անկարելի բան էր: Սխտք է անում, մխտք, վերջը հազար մանէթի պարտամուրհակ է տալի հարուստին, դառն ու դատարկ վերադառնում տուն:

— Հը՛, ի՞նչ արիր, — հարցնում է փոքր ախպէրը:

Ու մեծ ախպէրը նստում է, գլուխն եկածը պատմում, ինչպէս որ պատահել էր:

— Բան չկայ, — տոտւմ է փոքրը, դարդ մի անի, դու տանը կաց, հիմի էլ ես գնամ:

Վեր է կենում հիմի էլ փոքր ախպէրն է գնում ծառայ մտնում նոյն հարուստի մօտ:

Հարուստը դարձեալ ժամանակը սրուշում է մինչեւ դարնան կկուի ձէն ածելը ու պայման է գնում, որ եթէ ծառան բարկանայ, հազար մանէթ տուգանք տայ, կամ տասը տարի ձրի ծառայի, թէ ինքը բարկանայ, հազար մանէթ տայ ու էն օրից էլ ծառան ազատ է:

— Չէ՛, էդ քիչ է, — հակառակում է տղէն. —
թէ դու բարկանաս, դու ինձ երկու հազար մանէթ
տաս, թէ ես բարկանամ, ես քեզ երկու հազար մա-
նէթ տամ կամ քսան տարի ձրի ծառայեմ:

— Կա՛ւ, — ուրախանում է հարուստը. Պայ-
մանը կապում են, ու այժմ էլ փոքր ախալէրն է
մտնում ծառայութեան:

Առաւօտը լուսանում է, էս ծառան վեր չի կե-
նում տեղիցը: Տէրը դուրս է գնում, տուն է գալի,
էս ծառան դեռ քնած է:

— Ա՛յ տղայ, դէ՛ վեր կաց է՛, օրը ճաշ դա-
ռաւ:

— Հը՞, բարկանում ես դու, գլուխը վեր է
քաշում ծառան:

— Չէ՛, չեմ բարկանում, — վախեցած պա-
տասխանում է տէրը. — միայն ասում եմ՝ պէտք է
արտը գնանք հնձելու:

— Հա՛, որ էդ ես ասում, ոչինչ, կը գնանք.
Ի՞նչ ես վազում:

Վերջապէս ծառան վեր է կենում, սկսում է
տրեխները հագնել. Տէրը դուրս է գնում, ներս է
գալի, սա դեռ տրեխները հագնում է:

— Ա՛յ տղայ, դէ՛ շուտ արի, հագի է՛...

— Հը՛, հօ չե՞ս բարկանում:

— Չէ՛, ս՞վ է բարկանում, ես միայն ուզում
էի ասել՝ ուշանում ենք:

— Հա՛, էդ ուրիշ բան է. թէ՛ չէ՛ պայմանը
պայման է:

Մինչեւ ծառան տրեխները հագնում է, մինչեւ
արան են գնում, օրը ճաշ է դառնում:

— Էլ ի՞նչ հնձելու ժամանակ է, — ասում է
ծառան, — տեսնում ես ամէնքն էլ ճաշում են,
մենք էլ մեր ճաշն ուտենք՝ յետո՛յ:

Նստում են, ճաշն ուտում, ձաշից յետոյ էլ
ասում է. «Մշակ մարդիկ ենք, պէտք է մի քիչ
քնենք, հանգստանանք, թէ չէ...»: Գլուխը կո-

խում է խտերի մէջն ու քնում մինչեւ իրիկուն:
— Տօ՛, վեր կաց է՛, մթնեց է՛. ուրիշները
հնձեցին, մեր արար ինաց... վա՛յ քու դէսը զրկո-
ղի վիզը կսարի. վա՛յ քու կերածն էլ հարամ ըլի,
քու արածն էլ... էս ի՛նչ կրակի մէջ ընկայ... —
սկսում է գոգոգալ յուսահատուած տէրը:

— Հը՞, չլինի՞ թէ բարկանում ես. — գլուխը
վեր է քաշում ծառան:

— Չէ՛, ո՞վ է բարկանում, ես էն էի ասում,
թէ մթնել է, սուն գնալու ժամանակն ա:

— Հա՛, էդ ուրիշ բան է, գնանք. թէ չէ ճօ
մեր պայմանը գիտես. վա՛յ նրա մեղքը, ով բար-
կացաւ:

Գալիս են սուն. Տեսնում են հիւր է եկել:

Ծառային զրկում են, թէ՛ գնա ոչխար մորթի:

— Ո՞րը:

— Ո՞րը որ պատահի:

Ծառան գնում է. Մի քիչ յետոյ լուր են բե-
րում հարուստին, թէ հասի, քու ծառան ամբողջ
հօտք կոտորեց: էս հարուստը վազում է, տեսնում
է՛ ճիշդ որ ի՛նչ ոչխար ունի, բոլորը ծառան մոր-
թել է: Գլխին տալիս է, գոռում:

— էս ի՞նչ ես արել, տ՛յ անաստուած, քու
սունը քանդուի, ինչ իմ սունը քանդեցիր...

— Իսկ ասի՞ր ո՞ր ոչխարը պատահի՞ մորթի,
ես էլ եկայ, բոլորը պատահեցին՝ բոլորը մորթուե-
ցի. ուրիշ տեւլ պակաս ի՞նչ եմ արել. — հանգիստ
պատասխանում է ծառան. — բայց կարծեմ դու
բարկանում ես...

— Չէ՛, բարկանում չեմ, միայն աստուծոյ փառք է, որ էսքան ապրանքս փճացաւ:

— Դա՛ւ, որ բարկանում չես, էլի կը ծառայեմ:

Հարուստը մտածում է, ի՛նչ անի, ո՛նց անի, որ էս ծառայիցն աղատուի: Պայման է կապել մինչեւ մին էլ գարնան կկուի ձէն անելը, այն ինչ դեռ նոր են մտել ձմեռը, դեռ ո՞րտեղ են գարունն աղկուէն:

Միտք է անում, մի ճնար է մտածում: Կնոջը տանում է, անտառում մի ծառի վեր ճանում ու պատուիրում, որ «կուկու» կանչի: Ինքը գալիս է ծառային տանում, թէ արի գնանք անտառը որսի: Հենց անտառն են մտնում թէ չէ, կինը ծառի վրայից կանչում է — «կուկո՛ւ, կուկո՛ւ...»

— Ըն՛ը, աչքդ լուս, — ասում է ծառային տէրը, — կկուէն կանչեց, ժամանակդ լրացաւ...

Տղէն գլխի է ընկնում տիրոջ խորամանկութիւնը:

— Չէ՛, — ասում է, — ո՞վ է լսել, որ ասուլայ այս եղանակին, ձմեռուայ կէսին կկուէն ձէն անի: Ես պէտք է էս կկուին սպանեմ, սա ի՞նչ կկու է...

Ասում է ու ճրագանը քաշում է գէպի ծառը:

Տէրը գոռալով ընկնում է առաջը:

— Վա՛յ, չգարկես, Աստուծոյ սիրուն... սեւ լինի քու պատահելու օրը: Էս ի՞նչ փորձանք էր, որ ես ընկայ մէջը...

— Հը՞, չլինի՞ թէ բարկանում ես:

— Հա՛, ախպէր, ճերիք է: արի՛ ինչ տուգանք տալու եմ, տամ, քեզանից աղատուեմ, իմ դրած պայմանն է, ես էլ պէտք է աուժեմ: Հիմի նոր եմ

հասկանում էն հին խօսքը, թէ «մարդ ինչ անի,
իրեն կ'անի»:

Էսպէս՝ հարուստը խելօքանում է, իսկ փոքր
ախպէրը մեծ ախպօր տուած պարտքի թուղթը պատը-
ռում է, հազար մանէթ տուգանքն էլ առնում ու
վերադառնում տուն:

Ք Ա Ջ Ն Ա Ջ Ա Ր Ը

1

Լինում է չի լինում, մի խեղճ մարդ, անու-
նը՝ Նազար: Էս Նազարը մի անշնորհք ու ալարկոտ
մարդ է լինում. է՛նքան էլ վախկոտ, է՛նքան էլ
վախկոտ, որ մենակ սար ստի առաջ չէր դնիլ, թէ-
կուզ սպանէիր: Օրը միսչեւ իրիկուն կնկայ կողքը
կտրած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում,
տուն գալիս՝ տուն գալի: Դրա համար էլ անունը
դնում են վախկոտ Նազար:

Էս վախկոտ Նազարը մի գիշեր կնկայ հետ
չեմքն է դուրս գալի: Որ շեմքն է դուրս գալի,
տեսնում է ճրքճրքան լո՛ւս լուսնեակ գիշեր,
ասում է.

— Ա՛յ կնիկ, ի՛նչ քարվան կտրելու գիշեր է...
Սիրտս ասում է՝ վեր կաց, գնա Հնդստանից եկող
Շահի քարվանը կտրի, բեր տունը լցրու...:

Կնիկը թէ.

— Ձէնդ կտրի, տեղդ նստի, քարվան կտրողիս մտիկ արա...

Նազարը թէ.

— Անդգամ կ'նիկ, ինչո՞ւ չես թողնում գնամ քարվան կտրեմ, բերեմ տուէր լցնեմ, էլ ի՞նչ արդամարդ եմ ես, էլ ինչո՞ւ եմ դդակ ծածկում, որ դու համարձակում ես իմ առաջը խօսես:

Որ շատ կուռում է, կ'նիկը տուն է մտնում, դուռը փակում:

— Հողեմ էդ վախկոտ գլուխդ, դէ՛, հիմի գնա քարվան կտրի:

Էս Նազարը մտնւմ է դրանը, վախից լեղասլատառ է լինում, ի՞նչքան աղաչում-պաղատում է, որ կ'նիկը դուռը բաց անի, չի լինում, բաց չի անում, ձարը կտրած գնում է մի պատի տակին կուշ է գալի, դողալով գիշերն անց է կացնում, մինչեւ լուսը բացւում է: Նազարը, խռոված, պատի տակին արեւկող արած պառտում է, որ կ'նիկը գայ տուն տանի, ու միտք է անում: Ամառուայ շոգ օր, դադաղած ճանճեր, ինքն էլ էնքան ալարկոտ, որ ալարում է քիթը սրբի, ճանճերը գալիս են արա քիթ ու պռուկին վեր դալի, լցւում: Որ շատ նեղացնում են, ձեռք տանում է երեսին զարկում: Որ երեսին զարկում է, ճանճերը ջարդւում են, առաջին վեր թափւում:

— Վա՛հ, էս ի՞նչ էր...

Մնում է զարմացած:

Ուզում է համրի, թէ մի զարկով քանի՞ն սպանեց, չի կարողանում: Մտածում է, որ հազարից ապակաս չի լինիլ:

— Վա՛հ, — անում է, — ես էսպէս աղամարդ եմ եղել ու մինչեւ էսօր չեմ իմացել... Աս որ մի

զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել
էլ ի՞նչ եմ էս անպիտան կնկայ կողքին վեր ըն-
կել...

Էստեղից վեր է կենում, ուղիղ գնում իրենց
գիւղի տէրտէրի մօտ:

— Տէրտէ՛ր, օրհնեալ ի Տէր:

— Աստուած օրհնի, որդի՛ս:

— Տէրտէ՛ր, բա չես ասիլ՝ էսպէս էսպէս բան:

Պատմում է իր քաջագործութիւնը ու հեռն էլ
յնչա՛նում է, որ պէտք է իր կնկանից կորչի, մի-
այն խնդրում է իր արածը տէրտէրը գրի, որ ան-
յայտ չմնայ, ամէնքն ալ կարդան իմանան, Տէրտէրն
էլ, կատակի համար, մի փաշասի կտորի վրայ գը-
րում է:

ԱՆՅԱՂՔ ԻԵՐՈՍ ՔԱԶՐԵՆ ՆԱԳԱՐ,

ՈՐ ՄԻՆ ՂԱՐԿԻ՝ ՉԱՐՊԻ ԿԱԳԱՐ:

Ու տալիս է իրեն, Նաղարը էս փաշասի կտորը
մի փէտի ծէրին ամբացնում է, մի ժանգոտած թրի
կտոր կապում մէջքը: Իրենց հարեւանի իշին նըս-
տում աւ գիւղից հեռանում:

2

Իրենց գիւղից դուրս է գալի, մի ճամբայ է
ընկնում ու գնում: Ինքն էլ չի իմանում, թէ էդ
ճամբէն ո՛ւր է տանում:

Գնո՞ւմ է, գնո՞ւմ, մին լ ետ է նայում, տես-
նում է գիւղից հեռացել է, էստեղ սիրտն ահ է
ընկնում, իրեն սիրտ տալու համար սկսում է քթի
տակէն մըմռալ, երգել, իրեն իրեն խօսել, իշի
վրայ բարկանալ: Քանի հեռանում է էնքան վախը

սաստկանում է, քանի վախը սաստկանում է՝ էն-
քան ձէնը բարձրացնում է, սկսում է գոռգոռալ,
հարայ-հրոց անել. հետն էլ միւս կողմից էշն է սկը-
սում զուալ... էս աղմուկից ու աղաղակից թըռ-
չուները մօտիկ ծառերից են թռչում, նապաստակ-
ները թփերից են փախչում, գորտերը կանանչիցն
են ջուրը թափում...

Նաղարը ձէնն աւելի է գլուխը պցում, իսկ սր
մանում է անտառը, թւում է թէ ամէն մի ծառի
տակից, ամէն մի թփի միջից, ամէն մի քարի ե-
տեւից որտեղ սր է պազան է յարձակուելու կամ
աւաղակ. սարսափած սկսում է գոռգոռալ, ո՞նց
գոռգոռալ, ականջդ ոչ լսի:

Իսկ մի ասիլ հենց էս ժամանակ մի գիւղացի
ձին քաշելով անտառում միամիտ գալիս է: էս դար-
հուրելի ձէնը ականջն է ընկնում թէ չէ՝ կանգ-
նում է:

— Վա՛յ, — ասում է, — ո՞նց թէ իմն էշ էս-
տեղ էր հատել. կայ-չկայ էս աւաղակներ են:

Ձին թողնում է, ընկնում է ճամբի տակի ան-
տառն ու՝ երկու ռան ունէր, երկուսն էլ փոխ է
առնում, փախչում:

Բա՛խտդ սիրեմ, Բաջ Նաղար, գոռգոռալով գա-
լիս է, տեսնում է մի թամբած ձի ճամբի մէջտեղը
կանգնած իրեն է սպասում. Իշիցը վեր է գալի, էս
թամբած ձիուն նստում ու շարունակում իր
ճամբէն:

Շատ է գնում, քիչ է գնում, շատն ու քիչն
էլ ինքը կ'իմանար, գնում է ընկնում մի գիւղ.

ինքը գիւղին անծանօթ, գիւղն՝ իրեն: Ո՞ւր գնայ,
ո՞ւր չգնայ: Մի տանից զուռնի ձէն է լսում: ձին
քշում է էս ձէնի վրայ, գնում է ընկնում մի հար-
սանքատուն:

— Բարիօր ձեզ:

— Ա՛յ Աստու բարին քեզ, բարով, հազար
բարի եկար:

— Համեցէք հա՛, համեցէք, դէ՛, զոնախն Աստը-
ծունն է. սրան տանում են իր դրօշակով սուփրի
վերի ծէրին բազմեցնում: Աչքդ էս բարին տեսնի,
ինչ որ լցնում են առաջը, թէ՛ ուտելիք, թէ՛
խմելիք:

Հարսանքաւորները հետաքրքրում են իմանան,
թէ ո՛վ է էս տարօրինակ անծանօթը: Ներքի ծէրից
մինը բռթում է իր կողքի նստածին ու հարցնում,
սա էլ իր կողքի նստածին է բռթում, էսպէս հեր-
թով իրար բռթելով ու հարցնելով բանը մնում է
վերի ծէրին նստած տէրտէրին: Տէրտէրը մի կեր-
պով զոնախի դրօշակի վրայ կարդում է.

Անյաղք հերոս Քաջրն Նազար,

Որ մի՞ն գարկի՝ ջարդի հազար:

Կարդում է ու զարհուրած յայտնում է իր կող-
քի նստածին, սա էլ իր կողքի նստածին, սա էլ
երրորդին, երրորդը չորրորդին. էսպէսով հասնում
է մինչեւ դրան տակը ու ամբողջ հարսանքատունը
դրամբում է. թէ բա՛, չես տսիլ նորեկ զոնախն է
ինքը

Անյաղք հերոս Քաջրն Նազար,

Որ մի՞ն գարկի՝ ջարդի հազար:

— Բազմ նազարն է հա՛... — բացառանշում է պարծենկոտի միւր. — ի՛նչքան է փոխուել. միանգամ ից լաւ չճանաչեցի:

Եւ մարդիկ են դանւում, որ պատմում են նրա արած քաջագործութիւնները, ինն ծանօթութիւնն ու միասին անցկացրած օրերը:

— Հապա ի՞նչպէս է, որ էսպէս մարդը հետը ոչ մի ծառայ չունի. — դարմանքով հարցնում են անծանօթները:

— Էդպէս է դրա սովորութիւնը, ծառաներով ման գալ չի սիրում: Մի անգամ ես հարցրի, առաւ՝ ծառան ի՞նչ կ՛մտնում, ամբողջ աշխարհքն իմ ծառան է ու իմ ծառան:

— Հապա ի՞նչպէս է, որ մի կարգին թուր չունի, էս ժանգատ երկաթի կտորն է մէջքին կապել:

— Ծնորձքն էլ հենց դրա մէջն է, որ էս ժանգատ երկաթի կտորով մին գարկես՝ ջարդես հաղար, թէ չէ լաւ թրով, ի՞նչ կայ որ, սովորական քաջերն էլ են ջարդում:

Ու ապշած ժողովուրդը ստի է կանգնում, խըմում է Բազմ նազարի կենացը: Իրենց միջի խելօքն էլ դուրս է գալի, ճառ է ասում նազարի առաջ. ասում է՝ մենք վաղուց էինք լսել քո մեծ հռչակը, կարօտ էինք երեսդ տեսնելու և ահա էսօր բախտաւոր ենք, որ քել տեսնում ենք մեր մէջ: Նազարը հառաչում է ու ձեռքը թափ է տալի: Ժողովըրդականները խորճրդաւոր իրար աչքով են ահում, հասկանում են, թէ էդ հառաչանքն ու ձեռքի թափ տալն ի՛նչքան բան կը նշանակեն...:

Սչուղն էլ, որ էնտեղ էր, ձեռաց երգ է յօրինում ու երգում:

Բարով եկար, հազար բարի,
Հրգօր արծի՛ւ մեր սարերի,
Թագ ու պարծանք մեր աւխարհի,
Անյաղթ հերոս Քաջրդ Նազար,
Որ մին զարկես՝ ջարդես հազար:

Խեղճ ջրկարին դու ապաւեճ,
Ազատ կ'անես ամէն ցաւեճ,
Մեզ կը փրկես անիրաւեճ,
Անյաղթ հերոս Քաջրդ Նազար,
Որ մին զարկես՝ ջարդես հազար:

Մասաղ եճ մեճ ո՞ր դրօշին,
Մեջքիդ թրին, օակիդ ուշին,
Նրա ոտին, պոչին, բաշին,
Անյաղթ հերոս Քաջրդ Նազար,
Որ մին զարկես ջարդես հազար:

Ու ցրուելով հարբած հարսանքաւորները տարածում են ամէն տեղ, թէ գալիս է

Անյաղթ հերոս Քաջրն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար:

Պատմում են նրա դարմանալի քաջագործութիւնները, նկարագրում են նրա ահուելի կերպարանքը: Ու ամէն տեղ իրենց նորածին երեխաների անուներ դնում են Քաջ Նազար:

Հարսանքատնից հեռանում է Նազարն ու շարունակում է իր ճամբէն: Գնում է հասնում մի կանանց դաշտ: Էս կանանց դաշտում ձին թողնում է արածի. դրօշակը տնկում է, ինքն էլ դրօշակի շուքումը պառկում, քնում:

Գու մի ասիլ, օխտը հսկայ եղբայրներ կան. օխտը աւազակապետ, էս տեղերը նրանցն են, իրենց ամբողջն էլ մօտիկ սարի գլխին է: Էս հսկաները վերելից մտիկ են տալիս, որ մի մարդ եկել է իրենց հանդում վեր է եկել: Շատ են զարմանում, թէ էս ի՞նչ սրտի տէր մարդ պէտք է լինի, քանի՛ գլխանի, որ առանց քաշուելու եկել է իրենց հանդում հանգիստ վեր է եկել ու ձին էլ բաց թողել: Ամէն մինը մի գուրդ ունէր քառասուն լգրանոց: Էս քառասուն լգրանոց գուրդերը վերցնում են զաւրի: Գալիս են ի՞նչ են տեսնում. հրէն մի ձի արածում է. մի մարդ կողքին քնած, գլխավերելը մի դրօշակ տնկած, դրօշակի վրէն գրած:

Անյաղթ հերոս Քաջրն Նազար,

Որ մին զարկի՝ ջարդի հազար:

Վա՛յ, Քաջ Նազարն է... Մատները կծում են հսկաներն ու մնում են տեղները սառած: Գու մի ասիլ, հարբած հարսանքուորների տարածած լուրը սրանց էլ է լինում հասած: Էսպէս թուքները ցամաքած, չորացած սպասում են, մինչեւ Նազարն իր քունն առնում է ու զարթնում: որ զարթնում է՝ աչքերը բաց է անում, տեսնում գլխավերելը քառասուն լգրանոց գուրդերը ուսներին օխտն ահ-

ուելի հսկաներ կանգնած. էլ փորուժը սիրտ չի մը-
նուժ. Մանուժ է իր դրօշակի ետեւն ու սկսում է
դողալ, ոնց որ աշունքուայ տերեւը կը դողայ, էս
հսկաները որ տեսնում են սա գունատուեց ու սկը-
սեց դողալ, ասում են՝ բարկացաւ. հիմի որտեղ որ
է մի զարկով օխտիս էլ կը սպանի, առաջին գետին
են փռում ու խնդրում են.

Անյաղք հերոս Քաջըդ Նազար,

Որ մին գարկես՝ ջարդես հազար:

«Մենք լսել էինք քո աճաւոր անուներ, տեսու-
թեանդ էինք փափագում. այժմ բախտաւոր ենք,
որ քո ոտով ես եկել մեր հողը, Մենք քո խոնարհ
ծառաներդ, օխտն ախպէր ենք, աճա մեր ամբողջն
էլ էն սարի գլխին է՝ մէջը մեր գեղեցիկ քոյրը,
Աղաչում ենք շնորհ անես, դաս մեր հացը կտրես»
Էստեղ Նազարի շունչը տեղն է գալի, նստում է
իր ձին, նրանք էլ դրօշակն առած առաջն են ընկ-
նում ու հանդիսաւոր տանում են իրենց ամբողջը:
Տանում են ամբողջում պահում, պատում թագա-
ւորի վայել պատուով ու էնքան են խօսում նրա
քաջագործութիւններից. էնքան են գովում, որ ի-
րենց գեղեցիկ քոյրը սիրահարւում է վրէն, ինչ
ասել կ'ուզի՝ յարգն ու պատիւն էլ հեան աւելա-
նում են.

Էս ժամանակ մի վագր է լուս ընկնում էս երկ-
րում ու սարսափ է գցում ժողովրդի վրայ. Ո՞վ կը
սպանի վագրին, ո՞վ չի սպանիլ, ի հարկէ՛ Քաջ

Նազարը կը սպանի: Էլ ո՞վ սիրտ կ'անի վագրի դէմ
գնայ: Ամէնքն էլ Նազարի երեսին են մտիկ տալի:
վերեւը մի Աստուած, ներքեւը մի Քաջ Նազար:
Վագրի անունը լսելուն պէս Նազարը վախից
դուրս է վազում, ուզում է փախչի, ետ գնայ ի-
րենց տունը: Իսկ կանգնածները կարծում են թէ
վազում է, որ գնայ վագրին սպանի: Նշանածը
բռնում է կանգնեցնում, թէ ո՞ւր ես վազում է-
պէս առանց դէնքի: Գէնք առ հետդ՝ էնպէս գնա:
Չէնք է բերում տալիս իրեն, որ գնայ իր փառքի
վրայ մի քաջութիւն էլ աւելացնի: Նազարը գէնքն
առնում է, դուրս գնում: Գնում է անտառում մի
ծառի բարձրանում, վրէն տապ անում, որ ո՛չ ինքը
վագրին պատահի, ո՛չ վագրը՝ իրեն: Ծառի վրայ
կուչ է գալի, հոգին գառել է կորեկի հատ: Հակա-
ռակի նման անտէր վագրն էլ գալիս է հենց էս ծա-
ռի տակին պառկում: Նազարը որ վագրին չի տես-
նում, լեղին ջուր է կտրում, աչքերը սեւանում
են, ձեռն ու ոտը թուլանում են ու, թրը՛մփ,
ծառիցը ընկնում է գաղանի վրայ: Վագրը սարսա-
փած տեղիցը վեր է թռչում, Նազարն էլ վախից
կպչում է սրա մէջքին: Էնպէս դարձուրած Նազարը
մէջքին կպած էս խրտած վագրը փախչում է,
ո՞նց փախչում է, է՛լ սար ու ձոր, քար ու քոչ չի
հարցնում:

Մարդիկ մին էլ տեսնում են, վա՛հ, Քաջ Նա-
զարը վագրին նստած քշում է:

— Հայ-հարայ, եկէք հա՛, եկէք, Քաջ Նազա-
րը վագրին ձի է շինել հեծել... տուէք հա՛,
տուէք...

Սրտաւորւում են, ամէնքը մի կողմից հարայ-
հրոցով, հրհոսցով յարձակում են խանչալով, թը-

րով, թվանքով, քարով, փէտով տալիս են սպանում:

Նազարը որ ուշքի է գալի, լեզուն բացում է. «Ափսո՛ս, — ասում է, — ընչի՞ սպանեցիք, զոռով մի ձի էի շինել նստել... էնքան պէտք է քշէի ո՛ր...»:

Լուրը գնում է հասնում ամրոցը: Մարդ, կին, մեծ, պատիկ՝ ժողովուրդը դուրս է թափւում Նազարին ընդունելու: Վրէն երգ են կապում ու երգում:

էս աշխարհում,
Մարդկանց շարքում
Ո՞վ կը լինի քեզ հաւասար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ինչպէս ուրուր,
Կայծակ ու հուր,
Բարձր բերդից թուր հասար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ահեղ վագրին
Արիք քո ձին,
Հեծար անցար դու սարե սար,
Ո՞վ Քաջ Նազար:

Մեզ փրկեցիր,
Ազատեցիր,
Փառք ու պարծանք քեզ դարե դար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ու պսակեցին Քաջ Նաղարին հսկաների գեղեցիկ քրոջ հետ, օխտն օր, օխտը գիշեր հարսանիք արին, երգերով գովեցին թագաւորին ու թագուհուն:

— Լուսրնկան նոր սարն ելաւ,
էն ո՞ւմ նրման էր:

— Լուսրնկան նոր սարն ելաւ,
էն Քաջ Նազարն էր:

— Արեգակ նոր շողի շող,
էն իր նազ-եարն էր:

Մեր թագաւորն էր կարմիր,
Իրեն արեւն էր կարմիր,
Թագն էր կարմիր, հա՛յ կարմիր,
Կապին կարմիր, հա՛յ կարմիր,
Գօտին կարմիր, հա՛յ կարմիր,
Սոլեր կարմիր, հա՛յ կարմիր,
Թագուհին կարմիր, հա՛յ կարմիր,
Կարմիր թագուհուն բարեւ,
Կարմիր թագուորին արեւ:

Շնորհաւոր, շնորհաւոր,
Քաջ Նազարին շնորհաւոր,
Իր նազար եարին շնորհաւոր,
Ողջ աշխարհին շնորհաւոր:

Դու մի ասիլ, էս աղջկանը ուղած է լինում հարեւան երկրի թագաւորը: Որ իմանում է իրեն չեն տուել՝ ուրիշի հետ են ամուսնացրել, զօրք է կապում, պատերազմով գալիս է օխտն ախպօր վրայ:

էս օխտը հսկան գնում են Բաջ Նազարի մօտ, պատերազմի լուրը յայտնում են, գլուխ են տալի, առաջը կանգնում՝ հրաման են խնդրում:

Պատերազմի անունը որ լսում է, սարսափում է Նազարը, դուրս է պրծնում, որ փախչի ետ գնայ իրենց գիւղը: Մարդիկ կարծում են՝ ուղում էր իսկոյն դուրս վազել, յարձակուել թշնամու բանակի վրայ: Առաջն են ընկնում, բռնում են խընդրում, թէ ախր առանց զէնքի ու զրանի մենակ ո՞ւր ես գնում, ի՞նչ ես անում, գլխիցդ ձե՞ռ ես վերցըրել, ի՞նչ է:

Բերում են զէնք ու զրան են տալի, կնիկն էլ եղբայրներին խնդրում է, որ չթողնեն Նազարին իր քաջութիւնից տարուած մենակ յարձակուել թշնամու զօրքի վրայ: Եւ լուրը գնում տարածւում է զօրքի ու ժողովրդի մէջ, լրտեսների միջոցով էլ հասնում է թշնամուն, թէ Բաջ Նազարը մենակ, առանց զէնքի թռչում էր դէպի պատերազմի դաշտը, հազիւ են կարողացել զսպել ու շրջապատած բերում են...

Պատերազմի դաշտում մի ամենի նժոյգ են բերում, Նազարին նստեցնում վրէն: Ռգեւորուած զօրքըն էլ հետը վեր է կենում ահագին տղմուկով. — կեցցէ՛ Բաջն Նազար... մա՛հ թշնամուն...

Նազարի տակի նժոյգը, որ տեսնում է վրէն ի՛նչ անպէտքի մի՛նն է նստած, խրխնջում է, գլու-

խըն առնում ու թռչում առաջ, ուղիղ դէպի թշնամու բանակը: Զօրքերը կարծում են Քաջ Նազարը յարձակուեց, ուռռա՛ են կանչում ու իրենք էլ ետեւից յարձակւում ամենայն սաստկութեամբ: Նազարը որ տեսնում է չի կարողանում իր ձիու գլուխը պահի, քիչ է մնում վեր ընկնի, ձեռը գցում է, ուզում է մի ծառից փաթաթուի. դու մի ասիլ, ծառը փտած է, մի գերանաչափ ճիւղ պոկ է գալիս, մնում ձեռինս թշնամու զօրքերը, որ առաջուց համբաւը լսել էին ու ահը սրտներումն էր, էս էլ որ իրենց աչքերով տեսնում են՝ էլ փորներումը սիրտ չի մնում. երես են շուռ տալի, փախի՛ որ փախի, թէ մարդ ես՝ գլուխդ պրծացրու, որ Քաջ Նազարը ծառերը արմատահան անելով գալիս է...

Էդ օրը թշնամուց ինչքան կոտորւում է կոտորւում, մնացածները թուրները դնում են Քաջ Նազարի ոտի տակին, յայտնում են իրենց հպատակութիւնն ու հնազանդութիւնը:

Ու պատերազմի ահեղ դաշտից Քաջ Նազարը հսկաների ամրոցն է վերադառնում, ժողովուրդը յաղթական կամարներ է կապում, աննկարագրելի ոգեւորութեամբ, ուռռաներով և կեցցէներով, երգով ու երաժշտութիւնով, աղջիկներով ու ծաղիկներով, պատգամաւորութիւններով ու ճառերով առաջն է դուրս գալի, էնպէս մի փառք ու պատիւ, որ Նազարը մնացել էր ապշած, շշկլուած:

Էնպէս տաքով-փառքով էլ բերում հրատարակում են իրենց թագաւոր ու բազմեցնում են թագաւորի թախտին: Քաջ Նազարը դառնում է թագաւոր, էն հսկաներից ամէն մէկին էլ մի պաշտօն է տալիս: Մին էլ տեսնում է՝ աշխարհքը իր բռան մէջ:

Ասում են մինչեւ էսօր էլ դեռ ապրում ու թա-

գաւորում է Քաջ Նազարը: Ու երբ քաջութիւնից,
խելքից, հանճարից մօտը խօսք են գցում, ծիծա-
ղում է, ասում է:

— Ի՞նչ քաջութիւն, ի՞նչ խելք, ի՞նչ հանճար.
դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուն բախտն
է: Բախտ ունե՞ս, քէֆ արա...:

Եւ ասում են՝ մինչեւ էսօր էլ քէֆ է անում
Քաջ Նազարը ու ծիծաղում է աշխարհի վրայ:

Բ Ա Ր Ե Կ Ե Ն Դ Ա Ն Ը

Ժամանակով մի մարդ ու մի կին են լինում:
էս մարդն ու կնիկը իրար հաւանելիս չեն լի-
նում: Մարդը կնկանն է ասում յիմար, կնիկը՝
մարդուն, ու միշտ կռուելիս են լինում:

Մի օր էլ մարդը մի քանի փութ եղ ու բրինձ
է առնում, տալիս մշակի շալակը, տանում տուն:
կնիկը բարկանում է:

— Ա՛յ, որ ասում եմ յիմար ես, չես հաւա-
տում: Էսքան եղն ու բրինձը միանգամից ինչի՞
համար ես առել բերել, հօրդ քելե՞լսն ես տալիս,
թէ տղիդ հարսանիքն ես անում:

— Ի՞նչ քելեխ, ի՞նչ հարսանիք, ա՛յ կնիկ,
ի՞նչ ես խօսում: Ետք պահի, բարեկենդանի համար է:
կնիկը հանգստանում է, տանում է պահում:

Անց է կենում մի առ ժամանակ, էս կնիկը
սպասում է, սպասում է, բարեկենդանը դալիս չի:
Մի օր էլ շեմքում նստած է լինում, տեսնում է մի
մարդ վազ-վազ փողոցով անց է կենում: Ձեռը
դնում է ճակատին ու ձէն տալի:

— Ախպէ՛ր, ախպէ՛ր, հալա մի կանգնի՛ :

Տղէն կանգնում է :

— Ախպէ՛ր, բարեկենդանը դու հօ չե՞ս :

Անցուորականը նկատում է, որ էս կնկայ ծալը պակաս է, ասում է՝ հա՛ ասեմ, տեսնեմ ի՞նչ է դուրս գալի :

— Հա՛, ես եմ բարեկենդանը, քոյրիկ ջան, ի՞նչ ես ասում :

— Էն եմ ասում, որ մենք քո ծառան հօ չենք, որ քո եղն ու բրինձը պահենք : Ինչքան որ պահեցինք հերիք չէ՞ր... չե՞ս ամաչում, ընչի՞ չես գալի քո ապրանքը տանում... :

— Դէ՛, էլ ի՞նչ ես նեղանում, քոյրիկ ջան, ես էլ հենց դրա համար եմ եկել, ձեր տունն էի ման գալի, չէի գտնում :

— Դէ՛, արի տար :

Էս մարդը ներս է մտնում, սրանց եղն ու բրինձը շալակում ու կրունկը գէսն է անում, երեսը գէպի իրենց գիւղը :

Մարդը գալիս է տուն, կնիկն ասում է

— Հա՛, էն բարեկենդանն եկաւ, իր բաները իրեն տուեցի՛ տարաւ :

— Ի՞նչ բարեկենդան... ի՞նչ բաներ... :

— Ա՛յ, էն եղն ու բրինձը... Մին էլ տեսնեմ՝ վերեւից գալիս է, մեր տունն էր ման գալի, կանչեցի, մի լաւ էլ խայտառակ արի, շալակը տուի՛ տարաւ :

— Վա՛յ քու անխելք տունը քանդուի, որ ասում եմ յիմար ես, յիմար ես էլի... Ո՞ր կողմը գնաց :

— Ա՛յ, էն կողմը :

Էս մարդը ձի է նստում, ընկնում բարեկենդանի ետեւից, ձանապարհին բարեկենդանը ետ է մտիկ :

անում, տեսնում է մի ձիաւոր քշած գալիս է: Գըլ-
լսի է ընկնում, որ սա էն կնկայ մարդը պէտք է լինի:

Գալիս է հասնում իրեն:

— Բարի օր, ախպէրացո՛ւ:

— Աստու բարին:

— Հօ էս ճամբովը մարդ չի՞ անց կացաւ:

— Անց կացաւ:

— Ի՞նչ ունէր շալակին:

— Եղ ու բրիրձ:

— Հա, հենց էդ եմ ասում: Ի՞նչքան ժամանակ
կը լինի:

— Բաւական ժամանակ կը լինի:

— Որ ձին քշեմ՝ կը հասնե՞մ:

— Ո՞րտեղից կը հասնես, դու ձիով, նա ոտով:

Մինչեւ քու ձին չորս ոտը կը փոխի — մին, եր-
կու, երեք, չորս — նա երկու ոտով, մէկ-երկու,
մէկ-երկու, մէկ-երկու, շուտ-շուտ կը գնայ, անց
կը կենայ:

— Բա ի՞նչպէս անեմ:

— Ի՞նչպէս պէտք է անես, ուղում ես՝ ձիդ թող
ինձ մօտ, դու էլ նրա պէս ոտով վազի, գուցէ հասնես:

— Հա՛, էդ լաւ ես ասում:

Վեր է գալիս, ձին թողնում սրա մօտ ու ոտով
ճանապարհ ընկնում: Սա հեռանում է թէ չէ, բա-
րեկենդանը շալակը բարձում է ձիուն, ճամբէն ծը-
ռում, քշում:

Էս մարդը ոտով գնում է, գնում է, տեսնում
է չհասաւ, ետ է դառնում, տեսնում՝ ձին էլ չկայ:
Գալիս է տուն: Նորից սկսում են կռուել, մարդը
եղ ու բրիրձի համար, կնիկը՝ ձիու:

Մինչեւ օրս էլ մարդ ու կնիկ կռւում են դեռ:
Սա նրան է ասում յիմա, նա՛ սրան, իսկ բարե-
կենդանը լսում ու ծիծաղում:

ՃԵՐՄԱԿ ՕԶԸ

Մեզանից շատ առաջ մի իմաստուն թագաւոր է լինում : Ոչ մի բան չի մնում նրանից ծածուկ . ամենագաղտնի բաների մասին էլ կարծես թէ քամին նրան տեղեկութիւն է տալիս : Էս թագաւորը մի տարօրինակ սովորութիւն է ունենում . ամէն ճաշի, երբ սեղանը վեր են քաշում, ծառան մի ծածկած աման է ներս բերում . թագաւորը ամանը բաց չի անում, մինչեւ որ ծառան էլ չի դնում ու ինքը չի մնում մեն-մենակ :

Էսպէս քաշում է բաւական ժամանակ : Մի անգամ էլ էս տանող ծառային մի հետաքրքրութիւն է տիրում, որ էլ չի կարողանում ինքն իրեն դիմադրի, ամանը առնում է, տանում է իրեն սենեակը : Սենեակի դուռն զգոյշ դնում է, ամանի խուփը ետ քաշում : Տեսնում է՝ միջին մի եփած ճերմակ օձ : Էլ չի կամենում իրեն պահի, մի կտոր կտրում է, դնում բերանը : Լեզուին է տալիս թէ չէ, յանկարծ պատուհանի տակից մի զուարթ դըժվըժոց է լուում : Ականջ է դնում, տեսնում է ճնձղուկներն են, զրոյց են անում, զանազան պատմութիւններ են պատմում անտառներից ու դաշտերից :

Դու մի ասիլ՝ էս մեր ծառան օձի միսն ուտելուն պէս կենդանիների լեզուն հասկանալու շնորհք է ստացել :

Էնպէս է պատահում, որ հենց էդ ժամանակ թագուհու հրաշալի մատանին կորչում է, ու կաս-

կածն ընկնում է էս նոյն հաւատարիմ ծառայի վրայ, որ ամէն տեղ ազատ ել ու մուտք ունէր: Ասում են՝ կայ չկայ, սա է գողացել մատանին:

Թագաւորը ծառային կանչում է իր մօտ, սպառնում, որ եթէ մինչեւ միւս օրը գողի անունը չտայ, գլուխը կը թռչի: Էս ծառան ինչքան երդում-կրակըն է ընկնում, թէ ինքն անմեղ է, բան չի դատնում: Էսպէս սպառնալիքով էլ բաց է թողնում ու մինչեւ միւս օրը ժամանակ է տալիս:

Ահ ու գողով խեղճը բակն է իջնում, միտք է անում, թէ ի՛նչ անի, որ պրծնի էս փորձանքից:

Գնում է տեսնում բաղերը բակում ջրափին հաւաքուած, իրար կողք կտրած հանդստանում են: Տափակ կտուցներով մաքրում են փետուրներն ու մի հետաքրքրական զրոյց են անում: Պատմում են, թէ էսօր ո՛րը որտեղ է որոնել առաւօտը ու ի՛նչ համով կեր է գտել իր համար: Մինը վեր է կալնում, թէ՛

— Իսկ ես ազահի նման կուլ տուի թագուհու մատանին, որ պատուհանի տակ ընկած էր. դրանից ստամոքսս մի տեսակ ծանր է, ճնշում է...

Ծառան տեղն ու տեղը վրայ է թռչում, էս ասող բաղի վզիցը բռնում, վազում խոհանոց: Խոհարարին ասում է.

— Հապա մի էս բաղը մորթի. բաւական գիրացել է...

— Հա՛, ճիշդ ես ասում, — պատասխանում է խոհարարը՝ ձեռքին ծանր ու թեթեւ անելով, — ու տելու համար բաւական նեղութիւն է տուել իրեն: Խորոված անելու ժամանակն է:

Ասում է ու վիզը թոցնում: Փորն իտակելիս, ընձ՛, դուրս է գալիս թագուհու մատանին:

Ի հարկէ սրանով էլ պարզւում է հաւատարիմ

ծառայի անմեղութիւնը: Բայց որովհետեւ թագա-
ւորն էլ ուզում էր իր մեղքը մի տեսակ քաւի, ա-
ռաջարկում է նրան մի բան խնդրի, ինչ որ սիրտը
կ'ուզի: Խոստանում է պալատական ինչ պաշտօն էլ
ուզի՝ տայ:

Ծառան հրաժարւում է ամէն պատուից ու պաշ-
տօնից, միայն խնդրում է, որ իրեն մի ձի տայ,
մի քիչ ծախսի փող և աղատութիւն, որ գնայ ճա-
նապարհորդի, աշխարհք տեսնի:

Թագաւորը համաձայնւում է, ձի էլ է տալիս,
ճամբու ծախս էլ. ու մեր ծառան ճանապարհ է ընկ-
նում, գնում:

Գնում է գնում, շատ է գնում թէ քիչ, էդ
էլ Աստուած գիտի. մի ջրի ափից անց կենալիս
տեսնում է՝ երեք ձուկ, ոնց է եղել, ընկել են ափի
ծանծաղուտը, եղէգնուտի մէջ թպրտում են ու ան-
ջուր տանջւում: Թեկուզ և ասուած է «անխօս
ձուկ», սակայն մեր հերոսը պարզ լսում է, թէ ի-
րեն տեսնելուն պէս ի՛նչպէս են խօսում էն ձկներն
ու գանգատւում իրենց դառը վախճանի վրայ:

Էս որ լսում է, մեղքը գալիս է: Զիուց իջնում
է, սրանց վեր առնում, ետ ածում ջուրը: Խեղճ
կենդանիները ուրախ-ուրախ սուղւում են ջրի տա-
կը, ապա գլխիկները դուրս են հանում ու կան-
չում. «Մենք քու արած լաւութիւնը չենք մո-
ռանայ, ազնի՛ւ տղայ. երբ և իցէ մի օր էլ մենք
քեզ պէտքը կը գանք»:

Երիտասարդը էստեղից վեր է կենում գնում,
մի քիչ գնում է, մին էլ թւում է, թէ հենց իրեն
ոտների տակից մի բարակ, նուազ ձէն է գալիս:
Ներքեւ է նայում, տեսնում է մրջիւնների մի բազ-
մութիւն է դրժլրժում գետնի վրայ. ականջ է դը-

նում, որ խեղճերը սարսափած լաց են լինում ու
էսպէս խօսում.

— Ա՛խ, ի՞նչ կը լինէր, որ էս մարդիկ ու կո-
պիտ կենդանիները մեղնից հեռու ման գային: Հի-
մի էս յիմար ձին, առանց օփսոսալու, իր ծանր սըմ-
բակներով կը կոխկռտի մեզ ու մեր բնակարանները:

Երիտասարդի մեղքն եկաւ: Ձիու գլուխը ծռեց
դէպի կողքի շաւիղը, իսկ մրջիւնների թագաւորը
ետեւից կանչեց. «Շնորհակալ եմ, բարի՛ հոգի: Ե-
թէ Աստուած կը տայ, քո պարտքի տակ չենք մնալ
մենք»:

Էն նեղ շաւիղն էլ, որ բռնում է տղէն, դէպի
անտառն էր տանում: Անտառն է մտնում, տեսնում
է երկու պռաւ ագռաւ իրենց ճուտերին բներից
ներքեւ են թափում ու կռաւում են.

— Հենց միշտ հօ մենք չենք ձեզ կերակրելու:
Գնացէք ձեզ համար կեր ճարեցէք, ապրեցէք:

Թշուառ ճուտերը խօտերի մէջ թափուած՝ թե-
ւերին են անում ու խղճալի ձլձլում.

— Մենք՝ խեղճ նուսեր, փոքրիկ ձագեր,

Ուսի՞ց գնենք մեզ սեղ ու կեր.

Ո՛չ թե ունենք, ո՛չ բուն ունենք,

Մենք ո՞ւր գնանք, մենք ի՞նչ անենք...

Երիտասարդի մեղքը գալիս է. առանց երկար
ու բարակ մտածելու՝ ունեցած-չունեցած հացը հա-
նում է, տալիս ագռաւի ճուտերին, որ ուտեն: «Շը-
նորհակալ ենք. — կանչում են ագռաւի ճուտերը. —
քո արած լաւութիւնը մի օր յետ կը վճարենք»:

Ու վեր է կենում երիտասարդը, էստեղից համ-
բայ ընկնում գնում է: Գնում հասնում է մի մեծ

քաղաք: Տեսնում է էս քաղաքում ժողովուրդն իրար է անցել, լցուել փողոցները. մի անասելի, անպատմելի աղմուկ-աղաղակ, հարայ-հրոց: Մինն էլ ձի նստած, փողոց-փողոց անց է կենում ու կանչում:

— Թագաւորի աղջիկը իրեն համար փեսացու է ընտրում: Ո՛վ ուզում է նրա փեսան դառնայ, մի դժուար գործ պէտք է կատարի. թէ կատարեց՝ լաւ, թէ չէ՝ հօ գլուխը կը թռչի:

Շատերն էին փորձել թագաւորի աղջկայ առաջարկը կատարել, միայն իրենց կեանքն էին զուր խորտակել: Բայց մեր երիտասարդը հենց թագաւորի աղջկան տեսնում է թէ չէ, էնպէս է խելքը կորցընում նրա գեղեցկութիւնից, որ ամէն փորձանք ու ամէն վտանգ մտքիցը հանում է, գլխիցը ձեռք է քաշում, ներկայանում թագաւորին, թէ քո աղջիկը ուզում եմ:

Էստեղից թագաւորի հրամանով տղին տանում են ծովի ափը ու մի սակի մատանի գցում ծովի մէջ, թագաւորն ասում է.

— Էս մատանին պէտք է ծովի անդունդից հանես: Թէ հանեցիր, հօ իմ աղջիկը քոնն է, թէ չէ՝ առանց մատանիի լոյս աշխարհք դուրս եկար, նորից կը գցեն ծովը, մինչեւ որ կա՛մ հանես, կա՛մ խեղդուես:

Ամէնքը ախոսում են գեղեցիկ երիտասարդին, որ մենակ կանգնում էր ծովի ափին: Ու ծովափին կանգնած՝ նա միտք է անում, թէ ի՛նչ անեմ, Տէ՛ր Աստուած, Հենց էս ժամանակ տեսնում է ալիքների մէջ երեք ձուկ լողում են գէպի իրեն, էն երեք ձուկը, որոնց կեանքը ինքը փրկել էր մի ժամանակ: Մէջտեղի ձուկը բերանում բռնած մի խեցի է բերում բերում է. բերում, ու դնում երիտասար-

դի առաջինս, Երիտասարդը վերցնում է, տեսնում է՝
ոսկի մատանին մէջը: Ուրախ-ուրախ մատանին առ-
նում է, տանում տալիս թագաւորին՝ էն յուսով, թէ
խոստացած պարգեւը պիտի ստանայ: Բայց գոռոզ
թագաւորի աղջիկը հենց որ իմանում է, թէ երի-
տասարդը ծագումով իրեն հաւասարը չի, երեսը
չուռ է տալիս ու մի նոր խնդիր առաջարկում: Իջ-
նում է այգին ու ինքն իր ձեռքով տասը տոպրակ
կորեկ շաղ տալիս, ասում է.

— Մինչեւ էգուց առաւօտ, արեւի ծագումը,
պէտք է էս կորեկը հաւաքես էնպէս, որ ոչ մինը
չկորչի: Թէ հաւաքեցիր՝ հօ լաւ, թէ չէ գլուխդ կը
թռչի:

Այգում նստում է ու միտք է անում երիտա-
սարդը, թէ ի՞նչ հնար գործ դնի, որ կարողանայ էս
մի առաջարկն էլ գլուխ բերի: Ոչ մի ճար ու հնար
չի գտնում ու տխուր-տխուր նստած սպասում է,
թէ հրէս առաւօտը լուսին՝ կը գան կը տանեն գլու-
խը կարել տալու:

Միտք է անում, մինչեւ թմրում է, քունը յաղ-
թում է ու մտքի մէջ էլ քնում է: Առաւօտը աչքը
բաց է անում, որ տասը տոպրակ կորեկ կողք-կող-
քի առաջին շարած են. գետնին էլ մի հատ կորեկ
չի մնացել: 'Ի ու մի ասիլ՝ էդ գիշեր մըջիւնների
թագաւորն ու իր անթիւ անհամար մըջիւնները
շաղ տուած կորեկը հաւաքել են, լցրել տոպրակնե-
րը, իրար կողքի շարել:

Թագաւորի աղջիկն ինքն իր ոտով գալիս է այ-
գին, իր աչքով տեսնում է, որ երիտասարդը իր էս
առաջարկն էլ է կատարել, զարմանում է, բայց իր
գոռոզութիւնից չի կոտրւում, ասում է.

— Թէեւ երկու առաջարկս էլ կատարեցիր, բայց

դու չես կարող դառնալ իմ ամուսինը, մինչեւ ինձ համար չբերես կեանքի ծառի խնձորը:

Երիտասարդը իր օրումը լսած չի լինում, թէ ի՞նչ բան է կեանքի ծառը կամ ո՛րտեղ է բուսնում, վեր է կենում, մի ճամբայ ընկնում, գնում:

Գնում է, աշխարհքէ աշխարհք անց է կենում, մի իրիկուն էլ մտնում է մի անտառ, յոգնած՝ մի ծառի տակ նստում է ու ննջում: Յանկարծ լսում է, որ գլխի վերեւը ծառի տերեւները խշխշում են, էս խշխշոցն ու վերեւից մի ոսկի խնձոր իր բուռն ընկնելը մին է լինում: Սրա հետ միաժամանակ երեք ազաւ ծառի ծէրիցը թռչում իջնում են ծընկներին ու ասում.

— Մենք էն երեք ազաւների ձագերն ենք, որ դու մի ժամանակ սովամահից ազատեցիր: Երբ մեծացանք ու իմացանք, որ դու կեանքի ծառի խընձորին ես ման գալիս, թռանք՝ ծովերն անց կացանք, սարերն անց կացանք, հասանք աշխարհքի ծէրը, ուր բուսնում է կեանքի ծառը, ու էս խնձորը բերինք քեզ համար:

Երիտասարդը ուրախանում, աշխարհքով մին է լինում, խնձորն առնում է ու բերում տալիս թագաւորի աղջկան: Թագաւորի աղջիկը խնձորն էլ որ տեսնում է, ասում է.

— Էլ խօսք չունեմ:

Խնձորը կէս են անում, միասին ուտում, ու էստեղ աղջկայ սիրտը լցւում է սիրով դէպի երիտասարդը: Ամուսնանում են ու երջանիկ, բախտով-թախտով միասին ապրում մինչեւ իրենց խորին ձերու թիւնը:


ՑԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒ

ՆԻՒԹ	Էջ
Գիտորք	5
Եղջերուն	26
Գեղը	34
Շունը	62
Անխելի Մարդը	73
Գառնիկ Ախպեր	77
Զախչախ Թագաւորը	86
Խօսող Զուկը	92
Տերն ու Ծառան	97
Քաջ Նազարը	103
Բարեկենդանը	117
Ճերմակ Օձը	120



TABLE OF CONTENTS

1	Introduction
2	Chapter I
3	Chapter II
4	Chapter III
5	Chapter IV
6	Chapter V
7	Chapter VI
8	Chapter VII
9	Chapter VIII
10	Chapter IX
11	Chapter X
12	Chapter XI
13	Chapter XII
14	Chapter XIII
15	Chapter XIV
16	Chapter XV
17	Chapter XVI
18	Chapter XVII
19	Chapter XVIII
20	Chapter XIX
21	Chapter XX
22	Chapter XXI
23	Chapter XXII
24	Chapter XXIII
25	Chapter XXIV
26	Chapter XXV
27	Chapter XXVI
28	Chapter XXVII
29	Chapter XXVIII
30	Chapter XXIX
31	Chapter XXX
32	Chapter XXXI
33	Chapter XXXII
34	Chapter XXXIII
35	Chapter XXXIV
36	Chapter XXXV
37	Chapter XXXVI
38	Chapter XXXVII
39	Chapter XXXVIII
40	Chapter XXXIX
41	Chapter XL
42	Chapter XLI
43	Chapter XLII
44	Chapter XLIII
45	Chapter XLIV
46	Chapter XLV
47	Chapter XLVI
48	Chapter XLVII
49	Chapter XLVIII
50	Chapter XLIX
51	Chapter L
52	Chapter LI
53	Chapter LII
54	Chapter LIII
55	Chapter LIV
56	Chapter LV
57	Chapter LVI
58	Chapter LVII
59	Chapter LVIII
60	Chapter LIX
61	Chapter LX
62	Chapter LXI
63	Chapter LXII
64	Chapter LXIII
65	Chapter LXIV
66	Chapter LXV
67	Chapter LXVI
68	Chapter LXVII
69	Chapter LXVIII
70	Chapter LXIX
71	Chapter LXX
72	Chapter LXXI
73	Chapter LXXII
74	Chapter LXXIII
75	Chapter LXXIV
76	Chapter LXXV
77	Chapter LXXVI
78	Chapter LXXVII
79	Chapter LXXVIII
80	Chapter LXXIX
81	Chapter LXXX
82	Chapter LXXXI
83	Chapter LXXXII
84	Chapter LXXXIII
85	Chapter LXXXIV
86	Chapter LXXXV
87	Chapter LXXXVI
88	Chapter LXXXVII
89	Chapter LXXXVIII
90	Chapter LXXXIX
91	Chapter LXXXX
92	Chapter LXXXXI
93	Chapter LXXXXII
94	Chapter LXXXXIII
95	Chapter LXXXXIV
96	Chapter LXXXXV
97	Chapter LXXXXVI
98	Chapter LXXXXVII
99	Chapter LXXXXVIII
100	Chapter LXXXXIX
101	Chapter LXXXXX
102	Chapter LXXXXXI
103	Chapter LXXXXXII
104	Chapter LXXXXXIII
105	Chapter LXXXXXIV
106	Chapter LXXXXXV
107	Chapter LXXXXXVI
108	Chapter LXXXXXVII
109	Chapter LXXXXXVIII
110	Chapter LXXXXXIX
111	Chapter LXXXXXX
112	Chapter LXXXXXXI
113	Chapter LXXXXXXII
114	Chapter LXXXXXXIII
115	Chapter LXXXXXXIV
116	Chapter LXXXXXXV
117	Chapter LXXXXXXVI
118	Chapter LXXXXXXVII
119	Chapter LXXXXXXVIII
120	Chapter LXXXXXXIX
121	Chapter LXXXXXXX
122	Chapter LXXXXXXXI
123	Chapter LXXXXXXXII
124	Chapter LXXXXXXXIII
125	Chapter LXXXXXXXIV
126	Chapter LXXXXXXXV
127	Chapter LXXXXXXXVI
128	Chapter LXXXXXXXVII
129	Chapter LXXXXXXXVIII
130	Chapter LXXXXXXXIX
131	Chapter LXXXXXXX
132	Chapter LXXXXXXXI
133	Chapter LXXXXXXXII
134	Chapter LXXXXXXXIII
135	Chapter LXXXXXXXIV
136	Chapter LXXXXXXXV
137	Chapter LXXXXXXXVI
138	Chapter LXXXXXXXVII
139	Chapter LXXXXXXXVIII
140	Chapter LXXXXXXXIX
141	Chapter LXXXXXXX
142	Chapter LXXXXXXXI
143	Chapter LXXXXXXXII
144	Chapter LXXXXXXXIII
145	Chapter LXXXXXXXIV
146	Chapter LXXXXXXXV
147	Chapter LXXXXXXXVI
148	Chapter LXXXXXXXVII
149	Chapter LXXXXXXXVIII
150	Chapter LXXXXXXXIX



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220033512

(n 204)

A 33512

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԻ ՄԻՐՄԱՍԻՆ

1	ԱՆԻՆ ԾԱԽՈՒԵՑԱԻ	(Սպառած
2	ԱՇՈՏ ԵՐԿԱԹ	»
3	ԽԱԶԱԴՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ	»
4	ՀՈՍՀՈՍԻ ԶԵՌԱՏԵՏՐԸ, Յ. Պարոնեան	20 է. Դ.
6	ՀԵՂՆԱՐ ԱՂԲԻԻՐ, Մկրտիչ Արմէն	35 »

ԳԻՆ՝ 17 է. Դ.

ԱՄԵՐԻԿԱ՝ 65 ՍԵՆԹ

Դիմել՝

B. P. 620, Le Caire (Egypte)